«ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ» ՇԱՐՔ

4



ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր գիտելիքներ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար

«Հայհեղինակ» ՀԿ

«ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ» ՇԱՐՔ 4

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ստեղծագործական արտահայտություններ» ձեռնարկը «Մտավոր սեփականությունը՝ բիզնեսի համար» շարքից չորրորդն է, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար:

Ձեռնարկն օգնում է ընդհանուր պատկերացում կազմել հեղինակային եւ հարակից իրավունքների մասին, մատչելի ձեւով պարզաբանում է հեղինակային եւ հարակից իրավունքների մասին օրենքի հիմնական դրույթներն ու պրակտիկան, օգնում ձեռնարկատերերին՝ իրենց գործունեությունն իրականացնելիս իրավախախտումներ թույլ չտալ եւ հնարավորին չափով օգուտ քաղել իրենց տիրապետած հեղինակային եւ հարակից իրավունքներից:

Զգուշացում. սույն հրատարակությունը թարգմանվել, «Հեղինակային եւ հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխանեցվել եվ վերարտադրվել է Մտավոր Սեփականության Համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) նախապես ձեռք բերված գրավոր թույլտվությամբ: Բնօրինակ անգլերեն լեզվով գրքույկի նկատմամբ հեղինակային իրավունքները պատկանում են ՄՄՀԿ-ին: Հրատարակության անգլերեն տարբերակը մատչելի է www.wipo.int/sme/documents/guides/ ինտերնետային կայքից: Համապատասխանեցված տարբերակի ճշտության համար ՄՄՀԿ-ն պատասխանատու չէ, պատասխանատվությունը կրում է «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը:

Սույն ձեռնարկում պարունակվող տեղեկությունը չի փոխարինում մասնագիտացված իրավաբանական խորհրդատվությանը: Ձեռնարկի հիմնական նպատակը առարկայի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ ապահովելն է:

ISBN 978-99941-2-283-7
© Հայհեղինակ, 2009,
© ՄՄՀԿ , անգլերեն բնօրինակի նկատմամբ, 2006
Այս հրատարակության որեւէ մաս չի կարող վերարտադրվել կամ փոխանցվել որեւէ ձեւով կամ եղանակով, էլեկտրոնային կամ մեխանիկական, առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ գրավոր թույլտվության՝ բացառությամբ օրենքով թույլատրված ձեւերի:

4

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր գիտելիքներ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր ու միջին ձեռնարկատերերի համար

«Հայհեղինակ» ՀԿ

4

Բովանդակություն

1. Հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ 3

2. Պահպանության ոլորտն ու տեւողությունը 15

3. Ինչպես պահպանել բնօրինակ ստեղծագործությունները 49

4. Հեղինակային իրավունքի տիրապետումը 61

5. Հեղինակային եւ հարակից իրավունքներից օգտվողները 67

6. Այլ անձանց ստեղծագործությունների օգտագործումը 83

7. Հեղինակային իրավունքի պաշտպանությունը 97

1. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ի՞նչ է հեղինակային իրավունքը:

Հեղինակային իրավունքը պաշտպանում է գրականության, գիտության, արվեստի բնագավառներում հեղինակների, կոմպոզիտորների, համակարգչային ծրագրեր ստեղծողների, ինտերնետային ցանցում կայքեր ձեւավորողների եւ այլ ստեղծագործողների ստեղագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքները, որոնք, սովորաբար, կոչվում են «ստեղծագործություններ»:

Հեղինակային իրավունքը պահպանում է բազմաթիվ տարաբնույթ բնօրինակ ստեղծագործություններ, օրինակ՝ գրքեր, ամսագրեր, թերթեր, երաժշտություն, նկարչություն, լուսանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, ֆիլմեր, համակարգչային ծրագրեր, տեսախաղեր եւ բնօրինակ տվյալների բազաներ:

Հեղինակային իրավունքը հեղինակի՝ իր ստեղծագործության նկատմամբ **բացառիկ իրավունքների ամբողջությունն է**, որն ապահովում է ստեղծագործության օրինական **օգտագործումն** ու հեղինակին հասանելիք վարձատրությունը:

Հայաստանում հեղինակի իրավունքի պահպանության առաջին իրավական փաստաթուղթը ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի եւ Ժողովրդական կոմիսարիատի խորհրդի 1930թ. փետրվարի 10-ի որոշումով հաստատված «Հեղինակի իրավունքի կանոնադրություն»-ն է: Հետագայում այն բազմիցս փոփոխվեց եւ տեղ գտավ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության (ՀՍՍՀ) 1964 թ. ընդունված քաղաքացիական օրենսգրքի «Հեղինակային իրավունք» բաժնում: Սովետական Միության անկումից հետո, 1996 թվականին առանձին օրենք ընդունվեց հեղինակային իրավունքի եւ **հարակից իրավունքների** մասին: 2000 թ. ընդունվեց նոր օրենք, որը համապատասխանում էր միջազգային չափանիշներին եւ ապահովեց Հայաստանի անդամակցությունը Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիային:

2006թ. հունիսին Հայաստանի Հանրապետության **(ՀՀ)** Ազգային Ժողովն ընդունեց «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» նոր օրենք (այսուհետ՝ **Օրենք**), որը ընդգրկում էր Գրական եվ գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիայի, Եվրամիության հեղինա-

կային եւ հարակից իրավունքներին առնչվող դիրեկտիվների եւ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության 1996թ. Ինտերնետային պայմանագրերի հիմնական դրույթները:

Օրենքը կարգավորում է՝

- հեղինակների իրավունքներն իրենց ստեղծագործությունների նկատմամբ,
- կատարողների, հնչյունագրեր ու ֆիլմեր արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների, հրատարակիչների, տվյալների բազաներ պատրաստողների հարակից իրավունքները,
- գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումը:

Հեղինակային իրավունքը **տարածվում է** գրական, գեղարվեստական, երաժշտական, գիտական ստեղծագործությունների վրա **անկախ** նրանց արտահայտման ձեւից (գրավոր, բանավոր կամ որեւէ օբյեկտիվ ձեւով), **արժանիքներից, նշանակությունից եւ պահպանում է ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված** ստեղծագործությունները:

Հեղինակային իրավունքը ընդգրկում է հեղինակի **անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքներն** ու **գույքային բացառիկ իրավունքները:** Անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքները ներկայացնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակի՝ որպես ստեղծագործությունը ստեղծողի, մտավոր անձնական կապերը:

Գույքային բացառիկ իրավունքներն ապահովում են ստեղծագործական ներդրումների ու ջանքերի դիմաց հեղինակին հասանելիք նյութական եկամուտը, որ ստացվում է ստեղծագործությունների օգտագործումից:

Սահմանված է գույքային իրավունքների գործողության բավականին երկար ժամկետ: Անձնական ոչ գույքային եւ գույքային բացառիկ իրավունքները մանրամասնորեն կքննարկվեն հաջորդ բաժիններում:

Ի՞նչ է հարակից իրավունքը

«Հարակից իրավունքները» իրավունքների այն կատեգորիան է, որը տրվում է կատարողներին, հնչյունագիր արտադրողներին եւ հեռարձակողներին: Որոշ երկրներում հարակից իրավունքները պահպանվում են որպես առանձին իրավունքների կատեգորիա, մի շարք երկրներում էլ, օրինակ՝ ԱՄՆ-ում, դրանք միաձուլված են հեղինակային իրավունքին:

Հայաստանում հարակից իրավունքները, որպես նոր իրավունքի

Հեղինակային իրավունքն ու ձեռնարկատիրական գործունեությունը

Շատ ձեռնարկություններ իրենց գործունեության ընթացքում օգտագործում են հեղինակային իրավունքի օբյեկտներ, օրինակ՝ համակարգչային ծրագրեր (software), ինտերնետային կայքերից նյութեր, ապրանքների կատալոգներ, սպառողական ապրանքների կամ սարքերի բացատրական/տեղեկատվական թերթիկներ կամ ձեռնարկներ, բազմաթիվ սարքավորումների օգտագործման, պահպանման կամ վերանորոգման վերաբերյալ ձեռնակներ, ապրանքների վերաբերյալ տեքստեր ու նկարներ, շուկայի հետազոտման եւ գովազդի վերաբերյալ գրավոր նյութեր (թղթի վրա), ազդագրեր, ինտերնետային կայքեր եւ այլն:

Արդյունաբերական նմուշի էսքիզները, գծագրերը, արդյունաբերական նմուշը պահպանվում են «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշի մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր օրենքով:

Շատ ձեռնարկություններ իրենց գործունեության ընթացքում օգտագործում են հեղինակային իրավունքի օբյեկտներ

կատեգորիա, ճանաչվել են դեռեւս 1996 թվականին ընդունված «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2006 թվականին ընդունված նոր Օրենքի 3-րդ գլուխն ամբողջությամբ ներկայացնում է հարակից իրավունքների օբյեկտներն ու այդ իրավունքներից օգտվող անձանց, նրանց իրավունքները, այդ իրավունքների գործողության ժամկետը:

Օրենքը ապահովում է՝

- **կատարողների** (երգիչ, երաժիշտ, դերասան, պարող, ասմունքող, դիրիժոր այլն) **իրավունքները** գեղարվեստական, դրամատիկական կամ երաժշտական ստեղծագործության կենդանի կամ ամրագրված կատարումների նկատմամբ: Կատարումների շնորհիվ ստեղծագործությունները հասանելի են դառնում հասարակության լայն շրջաններին,
- **հնչյունագրեր եւ ֆիլմեր արտադրողների իրավունքներն** իրենց նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ, ֆինանսական ու ստեղծագործական ներդրումների շնորհիվ արտադրած հնչյունագրերի ու ֆիլմերի նկատմամբ, որոնցում ընդգրկված են ստեղծագործությունները,
- **հեռարձակող կազմակերպությունների իրավունքներն** իրենց հեռարձակած հաղորդումների նկատմամբ, որոնք պատրաստվում են կազմակերպության կողմից ու պարունակում են երգ-երաժշտություն,
- **հրատարակիչների իրավունքներն** իրենց հրատարակությունների հրատարակչական ձեւավորումների նկատմամբ,
- **տվյալների բազա պատրաստողների իրավունքներն** իրենց ֆինանսական ներդրումների ու կազմակերպչական ջանքերի շնորհիվ պատրաստած տվյալների բազաների նկատմամբ:

Հեղինակային իրավունքն ու հարակից իրավունքները պահպանում են տարբեր կատեգորիայի իրավատերերի ստեղծագործություններ: Հեղինակային իրավունքը պահպանում է անմիջականորեն հեղինակների ստեղծագործությունները, իսկ հարակից իրավունքները նախատեսվում են անձանց կամ բիզնեսի որոշակի կատեգորիայի համար, ովքեր կարեւոր դեր ունեն **պահպանվող կամ չպահպանվող** ստեղծագործությունները կատարելու, հանրությանը հաղորդելու կամ տարածելու գործում:

Օրինակ՝ «Երազ իմ երկիր Հայաստան» հանրահայտ երգի մեղեդին եւ խոսքերը գրել է սիրված կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը: Երգը կատարում է երգչուհի Շուշան Պետրոսյանը: Երգի մեղեդին եւ խոսքերը պահպանվում են հեղինակային իրավունքով, իսկ երգչուհի Շուշան Պետրոսյանի երգի կատարումը պահպանվում է հարակից իրավունքներով:

Հարակից իրավունքներով **կպահպանվեն՝**

- երաժիշտների ու երգիչների երգի կատարումները,
- հնչյունագիր արտադրողի երգն ընդգրկող հնչյունագիրը,
- հեռարձակող կազմակերպության պատրաստած ու հեռարձակած երգը պարունակող հաղորդումը:

Ինչպե՞ս են առնչվում հեղինակային եւ հարակից իրավունքները ձեր բիզնեսին:

Հեղինակային իրավունքը պահպանում է ստեղծագործական աշխատանքի արդյունք հանդիսացող գրական, գեղարվեստական, դրամատիկական կամ այլ ստեղծագործությունը, իսկ դրա նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետող անձը կարող է կանխել այլ անձանց կողմից այդ ստեղծագործության օգտագործումը: Հեղինակային եւ հարակից իրավունքները հնարավորություն են ընձեռում գործարարներին՝

- **հսկել բնօրինակ** ստեղծագործությունների առեւտրային շահագործումը. ինչպիսիք են գրքերը, երաժշտությունը, ֆիլմերը, համակարգչային ծրագրերը, բնօրինակ տվյալների բազաները, գովազդը, ինտերնետային կայքերի բովանդակությունը, տեսախաղերը, հնչյունագրերը, ռադիո եւ հեռուստահաղորդումները կամ այլ ստեղծագործական աշխատանքները:

Հեղինակային կամ հարակից իրավունքներով պահպանվող ստեղծագործությունները չեն կարող պատճենահանվել կամ օգտագործվել շահույթ ստանալու նպատակով՝ առանց իրավատիրոջ գրավոր թույլտվությունը նախապես ձեռք բերելու: Հեղինակային եւ հարակից իրավունքներով պահպանվող ստեղծագործությունների օգտագործման նկատմամբ այսպիսի բացառիկությունը օգնում է բիզնեսին՝ շուկայում ձեռք բերել եւ պահպանել զգալի մրցակցային առավելություն.

- **ստեղծել եկամուտներ.** ինչպես գույքի սեփականատերը, այնպես էլ ստեղծագործության նկատմամբ հեղինակային եւ հարակից իրա-

վունքներ տիրապետող անձը կարող է օգտագործել այն կամ օտարել վաճառքի, նվիրատվության կամ ժառանգության միջոցով: Հեղինակային եւ հարակից իրավունքներն առեւտրայնացնելու բազմազան ձեւեր կան. պատրաստել ու վաճառել հեղինակային կամ հարակից իրավունքներով պահպանվող ստեղծագործության բազմաթիվ օրինակներ, կամ վաճառել ձեր հեղինակային իրավունքը մեկ այլ անձի կամ ընկերության: Եվ վերջապես լիցենզավորումը, այսինքն՝ թույլ տալ մեկ այլ անձի կամ ընկերության՝ օգտագործել հեղինակային իրավունքով պահպանվող ձեր ստեղծագործությունը վարձատրության դիմաց, փոխադարձ համաձայնեցված պայմաններով եւ ժամկետում:

❋ **գումար հայթայթել.** ընկերությունները, որոնք տիրապետում են հեղինակային եւ/կամ հարակից իրավունքներով պահպանվող գույք (օրինակ՝ մի շարք ֆիլմերի տարածման իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը), ի վիճակի կլինեն ֆինանսական հաստատություններից ժամանակավոր գումարներ վերցնել, օգտագործելով իրավունքների այդ փաթեթը որպես օժանդակ հանգամանք, որը հնարավորություն կտա ներդրում կատարողներին կամ վարկ տվողներին օգտագործելու դրանք որպես գրավ:

❋ **խախտողների դեմ միջոցներ ձեռնարկել.** հեղինակային իրավունքի մասին օրենքը հնարավորություն է ընձեռում իրավատերերին իրավական գործողություններ իրականացնել բացառիկ իրավունքները խախտող ցանկացած անձի դեմ՝ դրամական հատուցում ստանալու, անօրինական օրինակները ոչնչացնելու, անօրինական օրինակները եւ դրանց պատրաստման սարքերն ու նյութերը բռնագրավելու, փաստաբանի ծախսերը ծածկելու նպատակով:

Հայաստանի **Քրեական օրենսգրքի 158-րդ** հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հեղինակային կամ հարակից իրավունքների օբյեկտն ապօրինի օգտագործելու կամ հեղինակությունը յուրացնելու դեպքերում: Եթե այդ արարքը պատճառել է **խոշոր չափի** վնաս, արարք կատարողը պատըժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-400-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ, առավելագույնը երկու տարի ժամկետով: Խոշոր չափ է համարվում հանցագործության

պահին սահմանված նվազագույն աշխատավարձի **200-ապատիկը** գերազանցող գումարը:

❋ **ուրիշի սեփականություն հանդիսացող ստեղծագործությունների օգտագործում.** հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանությամբ այլ անձանց **սեփականություն հանդիսացող ստեղծագործությունների** առեւտրային նպատակով **օգտագործումը** կարող է բարձրացնել ձեր գործունեության, ինչպես նաեւ ապրանքային նշանի արդյունավետությունն ու վարկանիշը: Օրինակ ռեստորանում, բարում, մանրածախ խանութներում կամ ավիոուղիներում երաժշտության կատարումը բարձրացնում է հաճախորդներին մատուցվող ծառայության կամ գործունեության հեղինակությունը:

Հայաստանում հասարակական վայրերում՝ ռեստորաններում, սրճարաններում, բարերում եւ զվարճանքի այլ վայրերում երաժշտական ստեղծագործությունների օգտագործման համար անհրաժեշտ է նախապես ձեռք բերել ստեղծագործության հեղինակի կամ իրավատիրոջ թույլտվությունը: Այսպիսի օգտագործման համար թույլտվության ձեռքբերումը բավականին բարդ է, քանի որ նշված կազմակերպությունները մեկ օրվա ընթացքում գործ ունեն բազմաթիվ հեղինակների բազմաթիվ ստեղծագործությունների օգտագործման հետ: Գրեթե անհնարին է բոլոր իրավատերերի հետ առանձին-առանձին բանակցել օգտագործման պայմաններն ու վճարվող վարձատրությունը, կնքել առանձին լիցենզային պայմանագիր յուրաքանչյուր հեղինակի հետ: Այստեղ գործ ունենք հեղինակի հրապարակային կատարման իրավունքի հետ, որը հեղինակն ինքնուրույն, որպես անհատ անձ, ի վիճակի չէ իրականացնել: Այդ նպատակով հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների իրավատերերը հիմնադրում են իրենց գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ: Կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք ներկայացնում են իրենց անդամ-հեղինակների ու իրավատերերի շահերը, չափազանց հեշտացնում են հեղինակներին հասանելիք հոնորարների հավաքման ու բաշխման գործընթացը, նրանց անունից բանակցություններ են վարում օգտագործողների հետ, կնքում ընդհանուր լիցենզային պայմանագրեր՝ սահմանելով ստեղծագործությունների օգտագործման եւ վարձատրության նույնատիպ պայմաններ, վիճելի

իրավիճակներում դատարանում հանդես գալիս որպես ներկայացուցիչ: Ընդհանուր լիցենզային պայմանագրերը օգնում են կարգավորելու օգտագործողի եւ իրավատիրոջ միջեւ հնարավոր վեճերը հիմնականում խաղաղ ճանապարհով;

Հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող առաջին կազմակերպությունը Հայաստանում ստեղծվել է դեռեւս 1933 թվականին, երբ հիմնադրվեց Դրամատուրգների եւ կոմպոզիտորների Անդրկովկասի կոմիտեի հայաստանյան մասնաճյուղը՝ Հայդրամկոմը: Այն հեղինակներին համախմբող եւ ներկայացնող առաջին կազմակերպությունն էր, որը Հայաստանում պահպանում էր հեղինակների իրավունքները, հետևում դրամատիկական (պիեսներ), դրամատիկա-երաժշտական (օպերա, օպերետ, բալետ) եւ տեքստով կամ առանց տեքստի երաժշտական (երգ-երաժշտություն) ստեղծագործությունների հրապարակային կատարման ընթացքին, օգտագործող կազմակերպություններից հավաքում հեղինակներին հասանելիք հոնորարները: Հետագայում (1937թ., դեկտեմբեր) Մոսկվայում ստեղծվեց Հեղինակների իրավունքների պահպանության համամիութենական վարչությունը, որի հայաստանյան մասնաճյուղը դարձավ մեզ արդեն հայտնի Դրամկոմը: 1973 թ. ՍՍՀՄ-ը անդամակցեց Հեղինակային Իրավունքի Համաշխարհային կոնվենցիային եւ Մոսկվայում ստեղծվեց Հեղինակային Իրավունքի Համամիութենական գործակալությունը (ՎԱԱՊ): 1974թ. Հայաստանում բացվեց ՎԱԱՊ-ի հայկական բաժանմունքը եւ գործեց մինչեւ 1992 թվականը:

Այսօր հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումը Հայաստանում իրականացնում է Հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը, որը հիմնադրվել է հեղինակների կողմից 2001 թվականին: «Հայհեղինակ»-ը Օրենքի 63-64-րդ հոդվածների դրույթների համաձայն, օգտագործող կազմակերպություններից հավաքում է հեղինակներին հասանելիք հոնորարները եւ վճարում հեղինակներին:

Ստեղծագործությունը որոշակի նպատակով օգտագործելու համար հեղինակային եւ/կամ հարակից իրավունքներ տիրապետող անձանցից լիցենզիայի ձեռքբերումը վեճերից խուսափելու լավագույն ձեւն է:

Ինչպե՞ս են ձեռք բերվում հեղինակային եւ հարակից իրավունքները:

Գրեթե բոլոր երկրները ունեն հեղինակային կամ հարակից իրավունքներին վերաբերող մեկ կամ ավելի օրենքներ: Քանի որ տարբեր երկրների հեղինակային եւ հարակից իրավունքների օրենքները էապես տարբերվում են, նպատակահարմար է, նախքան Հայաստանում հեղինակային եւ/կամ հարակից իրավունքներին առնչվող որեւէ կարեւոր ձեռնարկատիրական որոշում կայացնելը, իրավաբանական խորհրդատվություն ստանալ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների օրենքի գիտակ մասնագետներից:

Շատ երկրներ անդամակցում են մի շարք կարեւոր միջազգային պայմանագրերի: Անդամակցությունն օգնում է նրանց զգալի չափով ներդաշնակեցնել տարբեր պետություններում հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանության մակարդակը:

Բազմաթիվ երկրներում միջազգային պայմանագրերին անդամակցությունը հնարավորություն է ստեղծել օգտվել ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի պահպանությունից **առանց պաշտոնական ձեւականությունների կամ գրանցման**:

Հեղինակային իրավունքի պահպանության հիմնական միջազգային փաստաթուղթը **Գրական եւ Գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիան** է, որն ընդունվել է 1886 թվականին եւ արդիականացնելու նպատակով ժամանակ առ ժամանակ վերանայվել: Կոնվենցիայի նպատակն է անդամ երկրների տարածքներում հնարավորին չափով միասնական եւ ավելի արդյունավետ պահպանել հեղինակների իրավունքներն իրենց ստեղծագործությունների նկատմամբ:

Թվային տեխնոլոգիաների կիրառումը պահանջում էր ապահովել թվային միջավայրում ստեղծագործությունների պահպանության հուսալի եւ արդյունավետ միջոցներ: Այդ նպատակով 1996 թվականին ընդունվեց Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության **Հեղինակային Իրավունքի մասին Պայմանագիրը**: Պայմանագրին անդամակցող կողմերը **պարտավորվում են** իրենց օրենսդրություններում նախատեսել թվային միջավայրում իրավունքների պահպանության արդյունավետ եւ համապատասխան միջոցներ, ինչպես նաեւ համապատասխան պատասխանատվություն՝ իրավատերերի կողմից օգտագործ-

ված տեխնոլոգիական պաշտպանության միջոցները շրջանցելու, իրավունքների կառավարման տեղեկատվությունը վերացնելու կամ փոփոխելու համար:

Հայաստանը միացել է հեղինակային իրավունքի ոլորտում հետեւյալ միջազգային կոնվենցիաներին ու պայմանագրերին՝ նախապես համապատասխանեցնելով Օրենքն այդ փաստաթղթերի հիմնական դրույթներին.

- **Հաղորդումներ պարունակող ազդանշանների արբանյակի միջոցով տարածմանն առնչվող կոնվենցիա (Բրյուսելի կոնվենցիա)՝ 1993թ. դեկտեմբերի 13-ից,**
- **Գրական եւ Գեղարվեստական երկերի պահպանության միջազգային կոնվենցիա (Բեռնի կոնվենցիա)՝ 2000թ. հոկտեմբերի 19-ից,**
- **Կատարողների, հնչյունագրեր արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության միջազգային կոնվենցիա (Հռոմի կոնվենցիա)՝ 2003թ. հունվարի 31-ից,**
- **Հնչյունագրեր արտադրողներին իրենց հնչյունագրերի չթույլատրված պատճենումից պաշտպանելու մասին կոնվենցիա (Ժնեւի Հնչյունագրերի կոնվենցիա)՝ 2003թ. հունվարի 31-ից,**
- **TRIPS Համաձայնագիր՝ 2003թ.**
- **ՄՍՀԿ 1996թ. Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր (WCT)՝ 2005թ. մարտի 5-ից,**
- **ՄՍՀԿ 1996թ. Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիր (WPPT)՝ 2005թ. մարտի 5-ից,**
- **Համակարգչային համակարգի միջոցով կատարվող հանցագործությունների մասին կոնվենցիա, վավերացրել է 2006թ., ուժի մեջ է մտել 2007 թվականից:**

Ըստ Բեռնի կոնվենցիայի՝ ստեղծագործությունների նկատմամբ պահպանությունը նախատեսվում է **ինքնաբերաբար, առանց որեւէ ձեւականություն կամ պաշտոնական գրանցում իրականացնելու:** Այսինքն՝ ստեղծագործությունը պահպանելու համար պետական կամ նոտարական կամ այլ գրանցում կամ հեղինակության հաստատագրում չի պահանջվում: Հայաստանի Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության **ստեղծման փաստով եւ կախված չէ այդ իրավունքի պետական գրանցումից** կամ որեւէ այլ ձեւականություն կատարելուց: Սակայն հեղինակը կարող է կամավոր, իր ցանկությամբ, **ի պահ հանձնել** ստեղծագործությունը

նոտարի մոտ կամ գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունում: Օրենքի 64-րդ հոդվածի ե) կետի համաձայն՝ իրավատերերի ցանկությամբ ստեղծագործությունը ի պահ վերցնելու եւ այդ մասին համապատասխան փաստաթուղթ տալու գործառույթն իրականացնում է **«Հայհեղինակ» ՀԿ-ն** (հեռախոս/ֆաքս + 37410 529-492):

Կա՞ն արդյոք այլ իրավական միջոցներ պահպանելու բնօրինակ ստեղծագործությունները

Ստեղծագործության բնույթից ելնելով՝ դուք կարող եք ձեր ձեռնարկատիրական գործունեության շահերը պաշտպանելու նպատակով օգտագործել նաեւ մտավոր սեփականության հետեւյալ իրավունքները.



❋ **ապրանքային նշան.** դրանք այն նշաններն են (օրինակ՝ բառ, լոգո, գույն կամ դրանց միացությունը), որոնց օգնությամբ որեւէ անձի ապրանքները տարբերվում են այլ անձի նույնատիպ ապրանքներից: Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքներն ապահովվում են գրանցման հիմքով՝ ըստ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ 2000թ. օրենքի: Ապրանքային նշանների գրանցումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության կողմից: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով www.aipa.am ինտերնետային կայքը:

❋ **արդյունաբերական նմուշ.** առարկայի արտաքին տեսքը, զարդանախշերը կամ էսթետիկական առանձնահատկությունները, գույները, ուրվագծերը, կառուցվածքը ապահովում են առարկայի՝ որպես արդյունաբերական նմուշի պահպանունակությունը: Արդյունաբե-

Հ.Թումանյանի «Շունն ու կատուն» հեքիաթի կերպարները գրանցված են որպես ապրանքային նշան:

ական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքներն ապահովվում են արդյունաբերական նմուշի գրանցման վկայագրով: Հայաստանում արդյունաբերական նմուշը գրանցվում է « Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ 2009թ. օրենքի համաձայն: Գրանցումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության կողմից: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով www.aipa.am ինտերնետային կայքը:

- **Գյուտեր.** գյուտը արտոնագրվում ու իրավական պահպանություն է ստանում, եթե այն նոր է, ունի գյուտարարական մակարդակ եւ արդյունաբերորեն կիրառելի է: Գյուտի նկատմամբ բացառիկ իրավունքներն ապահովվում են արտոնագրով: Հայաստանում գյուտը արտոնագրվում է համաձայն «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ 2009թ. օրենքի: Գրանցումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության կողմից: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ www.aipa.am ինտերնետային կայքից:
- ձեռնարկատիրական գործունեության **գաղտնի կամ չբացահայտված տեղեկատվությունը**, որն իրենից առեւտրային արժեք է ներկայացնում, կարող է պահպանվել որպես առեւտրային գաղտնիք այնքան ժամանակ, քանի դեռ դրանք տնօրինող անձը ողջամիտ քայլեր է ձեռնարկում տեղեկատվությունը գաղտնի պահելու ուղղությամբ: Գաղտնի կամ չբացահայտված տեղեկատվությունը պաշտպանվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000թ. նոյեմբերին ընդունված ՀՀ օրենքով: Այդ օրենքի 16-րդ հոդվածի դրույթների համաձայն գաղտնի կամ չբացահայտված են համարվում տեխնիկական, կազմակերպչական կամ առեւտրային տեղեկատվությունները, այդ թվում՝ արտադրության գաղտնիքները (նոու –հաու), եթե դրանք

- որպես ամբողջություն կամ իր մասերի ճշգրիտ փոխդասավորվածությամբ եւ համախմբությամբ ընդհանրապես **հայտնի կամ դյուրամատչելի չեն** տվյալ կարգի տեղեկատվության հետ սովորաբար առնչվող անձանց համար,
- երրորդ անձանց **անհայտ լինելու** ուժով ունեն իրական կամ հնարավոր որոշակի առեւտրային արժեք,

բայց բացակայում են օրինական հիմքերով դրանց ազատորեն ստանալու հնարավորությունները,
- օրինական տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռնարկվել են տեղեկատվությունն առկա հանգամանքներում **գաղտնի պահելու** ողջամիտ քայլեր, որոնք կարող են արտահայտված լինել համապատասխան պայմանագրի կնքման եւ /կամ դրա պայմանների ապահովման, նախազգուշական այլ միջոցների ձեռնարկման տեսքով՝ պահպանելով այն նույնականացման տեղեկակիրներում՝ փաստաթղթերի, համակարգչային ֆայլերի, տեսագրման եւ ձայնագրման ժապավենների, տվյալ տեղեկատվությունը մարմնավորող իրի տեսքով եւ այլն:

Անբարեխիղճ մրցակցության մասին օրենքը թույլ է տալիս ձեզ գործողություններ իրականացնել մրցակիցների անազնիվ ձեռնարկատիրական գործունեության կամ վարքագծի դեմ, ինչպես նաեւ **դիմելով դատարան՝ դադարեցնել** անբարեխիղճ մրցակցությունը: Հայաստանում անբարեխիղճ մրցակցությունը կարգավորվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000թ. նոյեմբերին ընդունված ՀՀ օրենքով (5-րդ գլուխ): Այդ օրենքի դրույթների խախտումը հանգեցնում է օրենքով եւ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության: Անբարեխիղճ մրցակցության մասին օրենքի 36-րդ հոդվածը ներկայացնում է իրավախախտումների տեսակներն ու դրանց համար սահմանված **տուգանքի չափերը**, 38-րդ հոդվածը սահմանում է տնտեսվարող սուբյեկտի գործողությունների հետեւանքով այլ տնտեսվարող սուբյեկտներին կամ անձանց պատճառված **վնասների փոխհատուցում**՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ օրենքի 40-րդ հոդվածը օրենքի պահանջների խախտման համար նախատեսում է ֆիզիկական կամ պաշտոնատար անձանց համար **պատասխանատվություն** վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով:
(Մանրամասները՝ տես օրենքում)

2. ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ի՞նչպիսի ստեղծագործություններ են պահպանվում հեղինակային իրավունքով:

Շատ երկրներում հեղինակային իրավունքի պատմությունը ներկայացնում է հեղինակային իրավուն-

քով պահպանվող ստեղծագործությունների տեսակների աստիճանական զարգացումը: Հեղինակային իրավունքի ազգային օրենսդրությունները սովորաբար ստեղծագործությունների սպառիչ ցանկ չեն ապահովում, այլ թվարկում են ստեղծագործությունների մի շարք կատեգորիաներ, որոնք կարող են ընդգրկել հետագայում ստեղծվելիք ստեղծագործությունները պայմանով, որ դրանք համարվեն ստեղծագործական աշխատանքի արդյունք:

Հայաստանում Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների համաձայն հեղինակային իրավունքի պահպանության օբյեկտ կարող է լինել ցանկացած ստեղծագործություն, որը մտավոր ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք է.

- գրական, գիտական ստեղծագործությունները, ինչպես նաեւ համակարգչային ծրագրերը,
- գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, դիզայնի եւ կերպարվեստի այլ ստեղծագործությունները,
- դրամատիկական եւ երաժշտադրամատիկական ստեղծագործությունները, սցենարները, սցենարային պլանները, լիբրետոները եւ բեմական ցուցադրման այլ ստեղծագործությունները,
- պարարվեստի եւ մնջախաղի ստեղծագործությունները,
- տեքստով կամ առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները,
- տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն եւ մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստա-վավերագրական եւ այլ ֆիլմերը),
- դեկորատիվ-կիրառական արվեստի եւ բեմական գրաֆիկայի ստեղծագործությունները,
- լուսանկարչական եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործությունները,
- քաղաքաշինական, ճարտարապետական, այգեպուրակային արվեստի ստեղծագործությունները եւ դրանց լուծումները ինչպես ամբողջությամբ, այնպես էլ առանձին մասերը,
- աշխարհագրությանը, տոպոգրաֆիային, երկրաբանությանը, քաղաքաշինությանը, ճարտարապետությանը եւ այլ գիտություններին վերաբերող քարտեզները, նախագծերը, էսքիզները եւ պլաստիկ ստեղծագործությունները,
- ածանցյալ ստեղծագործու-

թյունները, մասնավորապես՝ այլ ստեղծագործությունների թարգմանությունները, ադապտացիաները, փոխադրումները, դաշնավորումներն ու վերադաշնավորումները, մշակումներն ու վերամշակումները, բեմականացումները, կինեմատոգրաֆիական վերափոխումները եւ գրականության, գիտության, արվեստի ստեղծագործությունների այլ վերափոխումները, ինչպես նաեւ ստեղծագործությունների ժողովածուները (հանրագիտարանները, անթոլոգիաները), տվյալների բազաները եւ այլ կազմածո ստեղծագործությունները, որոնք ըստ իրենց պարունակության ընտրության եւ/կամ տեղաբաշխման ստեղծագործական աշխատանքի արդյունք են,

- ստեղծագործության մասերը (անվանումը, կերպարները եւ այլն), որոնք ստեղծագործական աշխատանքի արդյունք են եւ կարող են օգտագործվել ինքնուրույն,
- տառատեսակները,
- ստեղծագործական աշխատանքի արդյունք հանդիսացող այլ ստեղծագործություններ:

Ի տարբերություն այլ երկրների, ինչպես նկատեցիք, հեղինակային իրավունքի օբյեկտների թվում ընդգրկված է նաեւ տառատեսակները, այսինքն՝ տառերի ձեւավորումը: Օրինակ՝

Հեղինակային իրավունքը պահպանում է ճարտարապետությանը վերաբերող նախագծերը, էսքիզները եւ պլաստիկ ստեղծագործությունները

«Ա» տառի ձեւավորումը

Հեղինակային իրավունքը պահպանում է ինչպես **տպագիր, այնպես էլ թվային կամ էլեկտրոնային** միջոցներով ստեղծված կամ պահված ստեղծագործությունները: Այն փաստը, որ թվային տեսքով ստեղծա-

գործությունը կարող է ընթերցվել միայն համակարգչի օգնությամբ, որովհետեւ բաղկացած է միայն մեկերից ու զերոներից, չի կարող որեւէ ազդեցություն ունենալ դրանց հեղինակային իրավունքով պահպանության վրա:

Համակարգչային ծրագրերի պահպանությունը

Թվային տեսակետից ոչ մի տարբերություն չկա տեքստի, հնչյունների, գրաֆիկայի, լուսանկարների, երաժշտության, անիմացիաների, վիդեոների .... եւ համակարգչային ծրագրերի միջեւ: Բայց մի էական տարբերություն առանձնացնում է համակարգչային ծրագրերը մյուսներից: Եթե տեքստը, հնչյունները, գրաֆիկան եւ այլը սովորաբար իրենց բնույթով պասսիվ են, ծրագրերն, ընդհակառակը, զգալիորեն ակտիվ են: Այդ իսկ պատճառով քննարկման առարկա է համակարգչային ծրագրերի հեղինակային իրավունքով պահպանության նպատակահարմարությունը: Համակարգչային ծրագրերի տարբեր տարրերը գործնականում պահպանելու բազմաթիվ ձեւեր կան.

- հեղինակի՝ համակարգչային ծրագրում ներդրված յուրօրինակ ստեղծագործական աշխատանքը որպես «գրական ստեղծագործություն» պահպանվում է **հեղինակային իրավունքով**: Այսպիսով ելքային կոդը կարող է դիտվել որպես մարդու կողմից ստեղծված գրական ստեղծագործություն, որն արտահայտում է դրա հեղինակ-ծրագրավորող ինժեներների գաղափարները: Ոչ միայն մեքենայաընթեռնելի տեսքով անհատապես մատչելի հրամանները (ելքային կոդը), այլ նաեւ թվայնացված մեքենայաընթեռնելի հրամանները (օբյեկտային կոդը) համարվում են գրական ստեղծագործություններ կամ «գրավոր արտահայտություններ» եւ նույնպես պահպանվում են հեղինակային իրավունքով,
- որոշ երկրներում համակարգչային ծրագրերի գործառնական տարրերը կարող են պահպանվել **գյուտերի** մասին օրենքով, մինչդեռ այլ երկրներում բոլոր տեսակի համակարգչային ծրագրերը միանշանակ հանված են գյուտերի մասին օրենքի պահպանության ոլորտից,
- սովորական առեւտրային պրակտիկա է պահել համակարգչային ծրագրի ելքային տեքստը/կոդը որպես **առեւտրային գաղտնիք**՝ ի լրացումն հեղինակային իրավունքով պահպանության,
- համակարգչային ծրագրերով ստեղծված որոշակի ֆիգուրները, ինչպիսիք են համակարգչի էկրա-

նին տեղադրված նշանները, որոշ երկրներում կարող են պահպանվել որպես **արդյունաբերական նմուշ**,

- իրավական պահպանություն ապահովում է նաեւ **պայմանագրի մասին օրենքին** համապատասխան կազմված համաձայնագիրը, որը լրացնում կամ հնարավոր դեպքերում նաեւ փոխարինում է մտավոր սեփականության իրավունքներին: Հաճախ այդպիսի լրացուցիչ պահպանությունը պայմանագրի կամ լիցենզային համաձայնագրի միջոցով բնորոշվում է որպես գեր-հեղինակային իրավունք,
- վերջին տարիներին շատ երկրներ էլ հաճախակի կիրառում են **քրեական օրենսգիրքը** տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ներառյալ համակարգչային ծրագրերի օգտագործումը կարգավորելու նպատակով,
- բացի իրավական պահպանությունից համակարգչային ծրագրերի պահպանության նոր հնարավորություն է ապահովում հենց ինքը՝ **տեխնոլոգիան**, օրինակ, մուտքն արգելող ծրագրերի միջոցով, ինչպես նաեւ կոդավորման մեթոդների օգտագործմամբ: Այսպիսով տեխնոլոգիան խելացի արտադրողներին թույլ է տալիս ստեղծել իրենց սեփական, օրենքով չնախատեսված պաշտպանության միջոցները: Օրինակ՝ տեսախաղ արտադրողը իր օբյեկտային կոդը կարող է պահպանել մուտքն արգելող ծրագրերի եւ/կամ հեղինակային իրավունքի օրենքի հիման վրա:

Միաժամանակ, պետք է նշել, որ համակարգչային ծրագրերի որոշ կողմեր պարզապես չեն կարող հեղինակային իրավունքով պահպանվել: Շահագործման մեթոդները, սովորաբար, հեղինակային իրավունքով չեն պահպանվում, եթե չեն պարունակում խիստ անհատական կամ գեղարվեստական տարրեր: Նույն ձեւով ծրագրի օգտագործումը ներկայացնող գրաֆիկական արտաքին ձեւավորումը հեղինակային իրավունքով չի պահպանվում, եթե այն չի պարունակում ստեղծագործական հստակ էլեմենտներ: Համակարգչային ծրագրերի ստեղծագործական տարրերի հեղինակային իրավունքով պահպանությունը՝

- գրանցում չի պահանջում,
- այդ պատճառով թանկ չէ ձեռք բերելու համար,
- պահպանության ժամկետը երկար է,
- տալիս է սահմանափակ պահպանություն, քանի որ տարածվում է տվյալ ծրագրում ամփոփված գաղափարների, համակարգերի եւ ընթացակարգերի միայն **արտա-**

հայտման ձեւի վրա,

** չի պահպանում հենց գաղափարը, համակարգը կամ ընթացակարգը: Այլ խոսքերով ասած՝ հեղինակային իրավունքը չթույլատրված պատճենումից կամ օգտագործումից պաշտպանում է օբյեկտային կոդը, ելքային տեքստը, գործող ծրագիրը, արտաքին տեսքը (ինտերֆեյս) օգտագործման հրահանգների ձեռնարկը, այլ ոչ թե համակարգչային ծրագրի հիմքում ընկած գործողությունները, գաղափարները, ընթացակարգերը, արարողակարգերը, ալգորիթմները, գործողության մեթոդները կամ տրամաբանությունը: Դրանք երբեմըն կարող են պահպանվել գյուտերի մասին օրենքով կամ ծրագիրը պահել որպես առեւտրային գաղտնիք:

Թվայնացված ստեղծագործության գերազանց օրինակ կարող է պատրաստվել եւ ուղարկվել ցանկացած վայր անձնական համակարգչի մկնիկի կամ տառերի ստեղնաշարի վրա մի քանի հպումների եւ ինտերնետի շնորհիվ:

Կարեւոր է նշել, որ չնայած ներկայիս ծավալուն, բարդ համակարգչային ծրագրերին, հեղինակային իրավունքի շատ խախտումներ բաղկացած են համակարգչային ծրագրի բառ առ բառ պատճենումից կամ չթույլատրված տարածումից: Շատ դեպքերում հաշվի չի առնվում այն հարցը, թե արդյոք նմանությունները արտահայտություններ են (որոնք պահպանվում են հեղինակային իրավունքով), թե՝ գործառույթներ (որոնք չեն պահպանվում հեղինակային իրավունքով):

Հայաստանում համակարգչային ծրագրերը, որպես գրական ստեղծագործություններ, պահպանվում են հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին օրենքով: Պահպանության առարկա են թե՛ ելքային եւ թե՛ օբյեկտային կոդերը: Օրենքի 35 -րդ հոդվածի դրույթների համաձայն համակարգչային ծրագիր է համարվում ցանկացած ձեւով արտահայտված ծրագիրը, ներառյալ դրա ստեղծման համար անհրաժեշտ նախապատրաստական նյութերը: Համակարգչային ծրագիրը պահպանվում է, եթե յուրօրինակ է եւ հեղինակի մտավոր ստեղծագործական աշխատանքի արդյունք: Համակարգչային ծրագրի հեղինակը բացառիկ իրավունք ունի կատարելու կամ թույլատրելու՝

** համակարգչային ծրագրի մշտական կամ ժամանակավոր վերարտադրությունը ցանկացած միջոցներով եւ ձեւով, մասամբ կամ

ամբողջությամբ,

- համակարգչային ծրագրի թարգմանությունները, մշակումները, հարմարեցումները կամ ցանկացած այլ փոփոխությունները եւ դրանց արդյունքների վերարտադրությունը,
- ցանկացած ձեւով համակարգչային ծրագրի բնօրինակի կամ օրինակների տարածումը, ներառյալ վարձույթով տալը եւ փոխատվությունը:

Սահմանված են նաեւ **առանց համակարգչային ծրագրի հեղինակի համաձայնության թույլատրվող գործողությունները**. առանց հեղինակի համաձայնության եւ առանց հեղինակային վարձատրության թույլատրվում են ստեղծագործության վերարտադրման կարճատև կամ հազվադեպ՝ ժամանակավոր գործողությունները, որոնք ինքնուրույն տնտեսական նշանակություն չունեն, տեխնոլոգիական գործընթացի անքակտելի եւ էական մասն են եւ որոնց նպատակն է ստեղծագործության օրինական օգտագործման կամ ցանցում ստեղծագործության տարածման հնարավորություն ընձեռելը:

Համակարգչային ծրագրի հեղինակի գույքային իրավունքները պահպանվում են նրա կյանքի ընթացքում եւ հետմահու՝ 70 տարի:

Համաձայն Օրենքի ծառայողական ստեղծագործությունների մասին 33-րդ հոդվածի՝ եթե հեղինակը համակարգչային ծրագիրը ստեղծել է որպես իր եւ գործատուի միջեւ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականություն կամ հանձնարարություն, ապա այդպիսի ծրագրի նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են գործատուին, եթե հեղինակի եւ գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Իսկ անձնական ոչ գույքային իրավունքները, ինչպես արդեն գիտենք, պատկանում են հեղինակին:

Օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է համակարգչային ծրագրի հեղինակի իրավունքների սահմանափակումները, իսկ Օրենքի 66-րդ հոդվածը նախատեսում է իրավախախտումների դեմ միջոցները:

ՀՀ Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքը յուրացնելու, ստեղծագործությունը կամ դրա օրինակները առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործելու եւ խոշոր չափի վնաս պատճառելու արարքը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ

ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Վնասի խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը:

Տվյալների բազաների պահպանությունը

Տվյալների բազան տեղեկությունների հավաքածու է, որը հեշտությամբ հասանելի լինելու եւ վերլուծելու համար դասավորված է համակարգված կամ հետևողական ձևով: Այն կարող է լինել թղթի վրա կամ էլեկտրոնային ձեւով:

Համաձայն Հայաստանի Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների՝ հեղինակային իրավունքով պահպանվում են այն տվյալների բազաները, որոնք ըստ իրենց պարունակության ընտրության, տեղաբաշխման եւ/կամ դասավորվածության ստեղծագործական աշխատանքի արդյունք են (**բնօրինակ բազա**): Իսկ այն տվյալների բազաները, որոնք ստեղծագործությունների, տվյալների կամ այլ անկախ նյութերի համակարգված կամ հետևողական ձևով դասավորված հավաքածու են, որի տարրերը անհատապես մատչելի են էլեկտրոնային կամ այլ միջոցներով եւ որոնց ձեռքբերումը, ճշգրտումը կամ ներկայացումը պահանջում է որակական եւ/կամ քանակական էական ներդրում (**ոչ բնօրինակ բազա**), պահպանվում են հարակից իրավունքներով: Օրենքը այդպիսի տվյալների բազա պատրաստողների համար պահպանություն է նախատեսում հարակից իրավունքների հովանու ներքո:

Տվյալների բազա պատրաստողների հարակից իրավունքները, ինչպես նաեւ այդ իրավունքների սահմանափակումները ներկայացված են Օրենքի 58-60-րդ հոդվածներում: Համաձայն այդ հոդվածների դրույթների՝ տվյալների բազա պատրաստողն իրավունք ունի **արգելելու** այլ անձանց տվյալների բազայի ամբողջ **պարունակության կամ դրա որակապես եւ/կամ քանակապես էական մասի դուրսհանումը եւ/կամ վերաօգտագործումը:** Տվյալների բազա պատրաստողը կարող է նաև պայմանագրով այլ անձանց տրամադրել տվյալների բազայի օգտագործման իրավունքը:

Տվյալների բազա պատրաստողների հարակից իրավունքների **պահպանության ժամկետ սահմանված է 15 տարի**՝ բազայի պատ-

ռաստման ավարտից կամ հանրությանը առաջին անգամ մատչելի դառնալուց հետո:

Ինչպիսի չափանիշներ պետք է ունենա ստեղծագործությունը պահպանվելու համար:

Հեղինակային իրավունքով պահպանվելու համար ստեղծագործությունը պետք է լինի **յուրօրինակ**: Յուրօրինակ ստեղծագործությունն այն է, որ «ծնվում է» հեղինակից, իր արտահայտությամբ առանձնահատուկ է, այսինքն ստեղծվել է ինքնուրույն, չի կրկնօրինակվել մեկ այլ ստեղծագործությունից կամ արդեն հանրության սեփականություն դարձած այլ նյութերից: Օրենքով նախատեսված յուրօրինակության ճշգրիտ հասկացությունը տարբեր երկրների օրենքներում տարբեր կերպ է ներկայացվում. բոլոր դեպքերում յուրօրիակությունը վերաբերում է ստեղծագործության **արտահայտման ձեւին**, ոչ թե դրա հիմքում ընկած գաղափարին:

Հայաստանի Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ստեղծագործությունը հեղինակային իրավունքով պահպանվելու համար պետք է լինի հեղինակի ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք, արտահայտված լինի բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձեւով, ներառյալ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձեւը: Հեղինակային իրավունքը տարածվում է **ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված** ստեղծագործությունների վրա:

Նյութական կրիչի վրա **չամրագրված բանավոր** ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձեւ ունեցող եւ ենթակա է պահպանության, եթե այն հասանելի է դարձել հանրությանը հրապարակային կատարման կամ այլ ձեւով: Թեեւ ստեղծագործություն ստեղծելու համար պահանջվում է ստեղծագործական ներդրում, հմտություն, մտավոր կարողություն եւ աշխատանք, հեղինակային իրավունքով **պահպանությունն ապահովվում է անկախ ստեղծագործության արժանիքներից**, **որակից, նշանակությունից, գրական կամ մշակութային արժեք լինելուց:** Եթե անգամ ստեղծագործությունը ստեղծվել է սկսնակ գրողի կամ կոմպոզիտորի կողմից, միեւնույնն է, այն լիարժեք պահպանվում է հեղինակային իրավունքով:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի՝ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության **ստեղծման փաստով** եւ կախված չէ

այդ իրավունքի **պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից** եւ որևէ այլ գործողության կատարումից: Այսինքն, հենց ստեղծագործությունը ստեղծվեց, հեղինակը ինքնաբերաբար տիրապետում է նաեւ իր ստեղծած ստեղծագործության նկատմամբ օրենքով նախատեսված գույքային եւ ոչ գույքային բոլոր բացառիկ իրավունքները:

Հեղինակային իրավունքի մասին **ծանուցելու** նպատակով իրավատերը կարող է ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա տեղադրել **հեղինակային իրավունքի պահպանության նշանը**՝ ©, բացառիկ գույքային իրավունքները տիրապետող անձի անունը կամ անվանումը, ստեղծագործության առաջին լույսընծայման տարեթիվը:

Հեղինակային իրավունքով չպահպանվող ստեղծագործություններ

Հայաստանի Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն՝

- **ժողովրդական բանահյուսության եւ արվեստի** ստեղծագործությունները այն պարզ պատճառով, որ դրանց հեղինակները անհայտ են կամ իրավունքի գործողության օրենքով սահմանված ժամկետը լրացել է,
- **օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների եւ փաստերի** մասին տեղեկատվությունը, լինի դա գիտական, պատմական, կենսագրական կամ նորություններ:

Օրինակ՝ Հայաստանի Գրողների միության հրատարակած «Գրական տեղեկատու»-ն պարունակում է միության անդամ գրողների կենսագրական եւ ստեղծագործական կյանքի վերաբերյալ տեղեկությունները: Տեղեկատու կազմողը գրքի նկատմամբ ունի հեղինակային իրավունք՝ տեղեկությունները հավաքելու, դասավորելու եւ ընտրելու տեսանկյունից, սակայն այդ տեղեկություններն ինքնին հեղինակային իրավունքի օբյեկտ չեն եւ չեն պահպանվում հեղինակային իրավունքով: Ցանկացած այլ անձ կարող է առանձին այդ տեղեկություններն ազատ օգտագործել իր կողմից հրատարակվող նոր տեղեկատուում, սակայն իր ձեւավորմամբ, առանց կրկնօրինակելու տեղեկատուն կազմող հեղինակի՝ այդ տեղեկությունները ներկայացնելու ձեւը:

- **պաշտոնական փաստաթղթերը՝** իրավական ակտերը, պայմանագրերը եւ դրանց պաշտոնական թարգմանությունները,
- **պաշտոնական խորհրդանիշերն** ու նշանները՝ դրոշներ, զինանշաններ, շքանշաններ, դրամանիշներ,
- **քաղաքական ելույթները,** դատավարության ընթացքում արտասանված ճառերը,
- **առանց մարդու** ստեղծագործական գործունեության՝ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները,
- **գիտական հայտնագործությունները, գաղափարները,** սկզբունքները, մեթոդները, ընթացակարգերը, տեսակետները, համակարգերը, արարողակարգերը, գիտական տեսությունները, մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, խաղի կանոնները, եթե անգամ դրանք արտահայտված, նկարագրված, բացահայտված, լուսաբանված են ստեղծագործություններում:

Օրինակ՝ *ընկերությունը ստեղծել է վինիլ ացետատի ստացման եղանակը նկարագրող ձեռնարկ եւ տիրապետում է ձեռնարկի նկատմամբ հեղինակային իրավունքը: Ընկերության՝ ձեռնարկի նկատմամբ ունեցած հեղինակային իրավունքը թույլ չի տա իր մրցակիցներին՝ կրկնօրինակել ձեռնարկը կամ այն գրելու ձեւը, օգտագործած արտահայտություններն ու նկարները: Սակայն հեղինակային իրավունքը չի կարող արգելել մրցակիցներին օգտագործել վինիլ ացետատի ստացման համար օգտագործվող մեքենաները, գործընթացը, եկամուտ ստանալու մեթոդները, ինչպես նաեւ ստեղծել վինիլ ացետատի ստացման եղանակի մասին մեկ այլ ձեռնարկ:*

Հեղինակային իրավունքով չեն պահպանվում **անունները, վերնագրերը, կարգախոսները (սլոգան)** եւ այլ կարճ արտահայտությունները: Ստեղծագործության մասերը (անվանումը, կերպարները) կարող են պահպանվել, եթե դրանք ստեղծագործական բնույթ ունեն:

Հեղինակային իրավունքը պահպանում է միայն այն **ձեւը**, թե ինչպես են գաղափարներն ու սկզբունքները **արտահայտված** ստեղծագործության մեջ: Թեեւ սկզբունքը կամ ինչ որ բան իրականացնելու մեթոդը հեղինակային իրավունքի առարկա չէ, սակայն մեթոդը կամ սկզբունքը նկարագրող կամ լուսաբանող գրավոր հրահանգները կամ բացատրական նախագծերը պահպանվում են հեղինակային իրավունքով:

Իրի արտաքին տեսքը, գույները, ձեւը նույնպես չեն պահպանվում հեղինակային իրավունքով: Դրանք պահպանվում են որպես արդյունաբերական նմուշ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշի մասին» 2008 թվականին ընդունված եւ 2009թ. հունվարից ուժի մեջ մտած ՀՀ նոր օրենքով: Պահպանության արժանանալու համար արդյունաբերական նմուշը պետք է լինի նոր եւ ինքնատիպ:

Դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններ. հեղինակային իրավունք եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունք

Դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները գեղարվեստական ստեղծագործություններ են, որոնք օգտագործվում են արդյունաբերական նպատակով: Այդպիսի ստեղծագործությունները արտահայտվում են ամենօրյա գործածական կամ կենցաղային ապրանքներում: Բնորոշ օրինակներ են ոսկյա զարդերը, լուսամփոփները, կահույքը: Դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները երկակի բնույթ ունեն, դրանք կարող են դիտվել որպես արվեստի ստեղծագործություններ, սակայն դրանց շահագործումն ու օգտագործումը ոչ թե հատուկ մշակութային շուկաներում է կատարվում, այլ ամենօրյա օգտագործման նպատակով կենցաղային ապրանքների շուկայում: Այս հատկանիշը դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները դասում է հեղինակային իրավունքի եւ արդյունաբերական նմուշների պահպանության սահմանագծում: Տարբեր երկրներում զգալիորեն տարբեր է դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններին տրվող պահպանությունը: Մի շարք երկրներում պահպանության երկու տեսակները կարող են գոյություն ունենալ կողք կողքի, այդ իսկ պատճառով, համոզված լինելու համար, թե ինչպիսին է իրավիճակը Հայաստանում, խորհուրդ է տրվում հարցը քննարկել մտավոր սեփականության մասնագետի հետ:

դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություն

Հայաստանում արդյունաբերական նպատակով օգտագործվող դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները չեն կարող օգտվել հեղինակային իրավունքի պահպանությունից: Այդ ստեղծագործությունները համարվում են արդյունաբերական նմուշներ եւ պահպանվում են «Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների մասին» օրենքով:

Ինչպիսի իրավունքներ է ընդգրկում հեղինակային իրավունքը

Հեղինակային իրավունքն ընդգրկում է հեղինակի գույքային (տնտեսական) իրավունքները, որոնք ապահովում են հեղինակին կամ սեփականատիրոջը հասանելիք ֆինանսական մասնաբաժինը ստեղծագործության հնարավոր առեւտրային օգտագործումից ստացվող եկամուտներում եւ անձնական ոչ գույքային իրավունքները, որոնք պահպանում են հեղինակի արժանապատվությունն ու մտավոր ունակություններից բխող ստեղծագործական շնորհը:

Ինչ է նշանակում գույքային իրավունք

Գույքային իրավունքը բացառիկ իրավունք է տալիս իրավատիրոջը՝ թույլատրելու կամ արգելելու ստեղծագործության որոշակի ձեւով օգտագործումը: Բացառիկ է, քանի որ ոչ ոք իրավասու չէ կիրարկել այդ իրավունքները առանց հեղինակային իրավունքը տիրապետող անձի նախապես տված թույլտվության:

Հայաստանի Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հեղինակի՝ իր ստեղծագործության նկատմամբ ունեցած գույքային բացառիկ իրավունքները: Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով եւ եղանակով, ինչպես նաև թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա օգտագործումը, մասնավորապես՝

- **վերարտադրության իրավունք.** ստեղծագործության ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով եւ ձևով, ամբողջությամբ կամ մասնակի: Այսինքն՝ մեկ կամ ավելի օրինակների պատրաստումը ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով եւ ձեւով. խտասկավառակը (CD) կրկնօրինակելը, գիրքը լուսապատճենելը, մուլտֆիլմի կերպարը սպորտային հագուստի վրա տպելը կամ երգից որոշ մաս նոր երգում ընդգրկելը,

❋ **տարածման իրավունք.** ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները շրջանառության մեջ դնելը վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցներով: Տարածման իրավունքը հեղինակին իրավունք է ընձեռում արգելելու այլ անձանց վաճառել, վարձույթով տալ կամ լիցենզավորել ստեղծագործության առանց իր թույլտվության պատրաստված օրինակները: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն օրինական ճանապարհով՝ այսինքն հեղինակի թույլտվությամբ լույս ընծայված ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները քաղաքացիական շրջանառության մեջ դրվելու դեպքում դրանց հետագա տարածումն իրականացվում է առանց հեղինակի թույլտվության եւ հեղինակային վարձատրության: Այլ խոսքերով ասած՝ հեղինակային իրավունքը տիրապետող անձը կարող է հսկել միայն ստեղծագործության կամ դրա օրինակի «առաջին վաճառքը», քանի որ վերարտադրելու եւ տարածելու համար արդեն տվել է համապատասխան թույլտվություն եւ ստացել պայմանագրով որոշված եւ շրջանառության մեջ դրված տպաքանակի համար պայմանավորված վարձատրությունը: Գնորդը կարող է վերավաճառել իր գնած օրինակը կամ տալ ուրիշի, սակայն չի կարող բազմացնել կամ դրա հիման վրա ստեղծել նոր ստեղծագործություններ: Հեղինակի վերարտադրության, տարածման, հանրությանը հաղորդման գույքային իրավունքները նրան եկամուտ ապահովող հիմնական իրավունքներն են,

❋ **վարձույթով տալու իրավունք**. ստեղծագործությունը վարձույթով տալ նշանակում է ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տալ այլ անձանց՝ օգուտ ստանալու նպատակով: Ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները **վարձույթով տալու եւ վարձատրվելու իրավունքը,** անկախ այդ օրինակների նկատմամբ սեփականության իրավունքից, պատկանում է հեղինակին: Հեղինակը չի կարող հրաժարվել այդ իրավունքից համաձայն Օրենքի 13-րդ հոդվածի: Այս իրավունքը սովորաբար կիրառվում է որոշակի ստեղծագործությունների նկատմամբ, ինչպիսիք են կինեմատոգրաֆիական (տեսալսողական) , երաժշտական ստեղծագործությունները կամ համակարգչային ծրագրերը: Բայց այս իրավունքը չի տարածվում այն համակարգչային ծրագրերի վրա,

որոնք արդյունաբերական ապրանքի մաս են, օրինակ՝ վարձակալված մեքենաներում վառելիքի ծախսը հսկող ծրագիրը,

- **թարգմանության իրավունք.** ստեղծագործությունը բնօրինակ լեզվից այլ լեզվով ներկայացնելը. ***օրինակ՝ Թ. Դրայզերի անգլերեն լեզվով հրատարակված «Ջեննի Գերհարդ» վեպի հայերեն թարգմանությունը:*** Ստեղծագործությունն այլ լեզվով թարգմանելու համար անհրաժեշտ է նախապես ձեռք բերել բնօրինակ ստեղծագործության հեղինակի կամ այլ իրավատիրոջ գրավոր թույլտվությունը, քանի որ այն թարգմանությունը, որն իրականացվել է առանց հեղինակից նախապես ձեռք բերված գրավոր թույլտվության, հեղինակի իրավունքը խախտող արարք է եւ ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության: Թարգմանությունները համարվում են ածանցյալ ստեղծագործություններ: Թարգմանիչը իր կատարած թարգմանության նկատմամբ ունի իր հեղինակային իրավունքը անկախ բնօրինակ ստեղծագործության հեղինակի իրավունքից,



- **վերափոխման իրավունք.** ստեղծագործության վերամշակումը, վերադաշնակումը, նկարազարդումը, հարմարեցումը եւ այլ ձեւերով վերափոխումը. վերափոխված ստեղծագործությունները նույնպես կոչվում են ածանցյալ ստեղծագործություններ, քանի որ ստեղծվում են նախապես գոյություն ունեցող պահպանվող ստեղծագործության հիման վրա, օրինակ՝ վեպի վերափոխումը կինոսցենարի, տարբեր երաժշտական ստեղծագործությունների վերամշակումները:

Օրենքում նախատեսված են նաև ածանցյալ ստեղծագործությունների ստեղծման համար հեղի-

Անվանի գրող Մուշեղ Գալշոյանի «Զորի Միրո» վեպի հիման վրա ստեղծվել է համանուն ֆիլմի կինոսցենարը: Վեպի վերափոխումը կինոսցենարի իրականացվել է իրավատիրոջ թույլտվությամբ:

նակի բացառիկ իրավունքի սահմանափակումներ, օրինակ՝ առանց հեղինակի թույլտվության կարող եք հրապարակված ստեղծագործությունը վերափոխել պարոդիայի կամ ծաղրանկարի, կամ համակարգչային ծրագրի օրինակը օրինական ճանապարհով տնօրինող անձը կարող է առանց հեղինակի թույլտվության վերափոխել ծրագիրը, եթե դա անհրաժեշտ է ծրագրի բնականոն օգտագործման համար:

- **Ստեղծագործությունը հրապարակայնորեն կատարելը եւ հանրությանը հաղորդելը.** այս երկու բացառիկ իրավունքները ստեղծագործությունը հասանելի են դարձնում հանրությանը հրապարակային կատարման, ասմունքի, հեռարձակման, ռադիոյով, մալուխով հաղորդելու, ինչպես նաեւ ինտերնետով փոխանցելու միջոցով,
- **Հրապարակային կատարումը** ստեղծագործության մատուցումն է ասմունքի, խաղի, երգի, պարի կամ այլ միջոցներով ինչպես անմիջական կատարման, այնպես էլ տեխնիկական սարքերի օգնությամբ այն վայրերում, որտեղ ներկա են կամ կարող են ներկա գտնվել անձինք, ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին:Հրապարակային կատարման իրավունքը կիրառելի է գրական, երաժշտական եւ տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ:
- **Ստեղծագործության հաղորդումը հանրությանը** ստեղծագործությունը հանրության անդամներին մատչելի դարձնելն է անմիջական կատարման կամ դրա տեսաձայնագրության հաղորդման միջոցով՝ հաղորդալարով կամ առանց հաղորդալարի: Այս իրավունքը ընդգրկում է նաեւ հանրության անդամներին ստեղծագործության մատչելի դարձնելը այնպիսի ձեւով, որ այն հասանելի լինի հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում եւ ցանկացած պահին, մասնավորապես համակարգչային կամ ինտերնետային ցանցերի միջոցով, այսինքն՝ երբ ցանկացած անձ կարող է իր ընտրությամբ որեւէ վայրից, **օրինակ՝** Երեւանի տարածքում գտնվող որեւէ ինտերնետային ակումբից, օրվա իրեն հարմար ցանկացած պահին կամ ժամին ինտերնետի միջոցով մուտք գործել, ասենք, Ռուսաստանի տարածքում գտնվող որեւէ կազմակերպության ինտերնետային կայք եւ իրեն հետաքրքրող տեղեկություններ ստանալ: Այս իրավունքը գործնականում տա-

ռածքային հասկացություն չի ճանաչում: Հանրությանը հաղորդման իրավունքը ընդգրկում է ստեղծագործությունների բոլոր կատեգորիաները:

Կերպարվեստի բնօրինակ ստեղծագործության հաջորդական վերավաճառքի դեպքում վաճառքի գնից տոկոսներ ստանալը.

Հայաստանի Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն կերպարվեստի ստեղծագործության **հեղինակն իրավունք ունի տեղեկություններ ստանալ** իր կողմից օտարված կերպարվեստի ստեղծագործության բնօրինակի սեփականատիրոջ, կամ աճուրդասրահի, պատկերասրահի, գեղարվեստական սրահի, խանութի կամ այլ գործակալի միջոցով վաճառքի մասին եւ վաճառողից ստանալ յուրաքանչյուր վերավաճառքի **գնի հինգ տոկոսը** (վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունք):

Կերպարվեստի բնօրինակ ստեղծագործություններ են համարվում գրաֆիկական կամ պլաստիկ արվեստի ստեղծագործությունները՝ նկարները, գծանկարները, գեղանկարները, կոլաժները, փորագրությունները, նկարազարդ գորգերը, քանդակները, լիտոգրաֆիական, կերամիկական, լուսանկարչական, ոսկերչական արվեստի ստեղծագործությունները պայմանով, որ դրանք պատրաստված են հեղինակի կողմից կամ բնօրինակ համարվող օրինակներ են:

Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի կիրարկման համար սահմանված է նվազագույն շեմ՝ սկսած վաճառքի գնի 250.000 դրամից:

Կարեւոր է հիշել, որ ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ցանկանում է օգտագործել պահպանվող ստեղծագործությունները վերը նշված որեւէ նպատակով, պարտավոր է նախապես գրավոր պայմանագրով ձեռք բերել հեղինակային իրավունքը տիրապետող անձի թույլտվությունը: Թեեւ հեղինակային իրավունքը տիրապե-

տող անձի իրավունքները բացառիկ են, դրանք սահմանափակված են ժամանակով եւ ենթակա են մի շարք կարեւոր սահմանափակումների ու բացառությունների:

Բացի այս թվարկված տրադիցիոն գույքային իրավունքներից, 2006թ. Օրենքի 56-րդ հոդվածը նախատեսում է նաեւ հեղինակի գույքային իրավունքներին համարժեք իրավունքներ այն անձանց համար, ովքեր հեղինակի գույքային իրավունքների հետմահու **70-ամյա ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակում կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի են դարձնում հեղինակի անտիպ ստեղծագործությունը:**

Օրենքի 57-րդ հոդվածը նախատեսում է հեղինակի գույքային իրավունքներին համարժեք իրավունքներ նաեւ այն անձանց համար, ովքեր պատրաստում են **հանրության սեփականությունը դարձած աշխատությունների քննադատական կամ գիտական հրատարակությունները, որոնք էականորեն տարբերվում են տվյալ աշխատության արդեն հայտնի հրատարակություններից:**

Ինչ է անձնական ոչ գույքային իրավունքը:

Բացի հեղինակի գույքային իրավունքներից, շատ երկրներ նախատեսում են նաեւ **անձնական ոչ գույքային իրավունքներ:** Հիմնականում նախատեսվում են անձնական ոչ գույքային իրավունքների հետեւյալ երկու տեսակները.

- **ստեղծագործության հեղինակ ճանաչվելու իրավունքը (հեղինակության իրավունք).** հեղինակի ստեղծագործությունը վերարտադրելու, հրատարակելու, մատչելի դարձնելու, հանրությանը հաղորդելու կամ հրապարակայնորեն ցուցադրելու դեպքում այս գործողություններն իրականացնող անձը պետք է ապահովի, որ հեղինակի անունը նշված լինի ստեղծագործության վրա կամ հայտարարվի, որը որ նպատակահարմար է՝ ելնելով օգտագործման ձեւից,
- **ստեղծագործության ամբողջականությունը պաշտպանելու իրավունք** (համբավի եւ արժանապատվության իրավունք). այս իրավունքը արգելում է ստեղծագործության մեջ այնպիսի փոփոխություններ կատարել, որոնք կարող են վնասել հեղինակի արժանապատվությունը կամ համբավը:

Հայաստանի Օրենքի 12-րդ հոդվածը թվարկում է հեղինակի անձնական ոչ գույքային հետեւյալ

իրավունքները՝

- ստեղծագործության հեղինակ ճանաչվելու **(հեղինակության իրավունք),**
- ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելու կամ այդպիսի օգտագործումը թույլատրելու **(հեղինակի անվան իրավունք),**
- ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու **(հեղինակի համբավի եւ արժանապատվության իրավունք),**
- ստեղծագործությունը ցանկացած ձեւով առաջին անգամ հրապարակելու կամ այդ իրավունքը այլ անձի վերապահելու **(հրապարակման իրավունք),**
- ստեղծագործությունը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու **(հետկանչի իրավունք)**, եթե հրապարակվող ստեղծագործությունն այլեւս չի համապատասխանում իր համոզմունքներին եւ բացասական ազդեցություն կունենա իր հեղինակության վրա, ստեղծագործությունն օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) հատուցելու պայմանով: Եթե ստեղծագործությունն արդեն իսկ լույս է ընծայվել, հեղինակը պարտավոր է հրապարակայնորեն ծանուցել դրա հետկանչի մասին: Ընդ որում, նա իրավունք ունի շրջանառությունից հանել ստեղծագործության նախկինում պատրաստված օրինակները՝ հատուցելով կատարված անհրաժեշտ ծախսերը:

Անձնական **ոչ գույքային իրավունքներն անօտարելի եւ անփոխանցելի են ու պահպանվում են անժամկետ,** բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում:

Հայաստանի Օրենքը նախատեսում է անձնական ոչ գույքային իրավունքներ նաեւ կատարողների համար իրենց կատարումների նկատմամբ, այն է՝

- **կատարող ճանաչվելու** իրավունքը.
- կատարումը հնարավոր աղավաղումներից, կատարողի **համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը:**

Օրենքով նախատեսված անձնական ոչ գույքային իրավունքներից օգտվում են բոլոր կատարողները: **Դրանք անօտարելի եւ անփոխանցելի են, պահպանվում են անժամկետ:**

Ինչ են «հարակից իրավունքները»

Կատարողները (օրինակ՝ դերասանները, երաժիշտները, պարողները) բացառիկ իրավունք ունեն թույլատրելու կամ արգելելու իրենց կենդանի կատարման ամրագրումը որեւէ կրիչի վրա, իրենց կենդանի կատարման կամ դրա էական մասի հաղորդումը հանրությանը կամ հեռարձակումը, կամ մալուխով հաղորդումը, ինչպես նաեւ կենդանի կատարման ամրագրման վերարտադրությունը: Որոշ երկրներ՝ Եվրամիության անդամ պետությունները , կատարողներին բացառիկ իրավունք են տալիս արգելելու կամ թույլատրելու իրենց կենդանի կատարումները պարունակող հնչյունագրերի եւ տեսալսողական ստեղծագործությունների վարձույթն ու փոխատվությունը:

Հայաստանի Օրենքի 45-րդ հոդվածի դրույթների համաձայն կատարողը **բացառիկ իրավունք ունի արգելելու** այլ անձանց՝ առանց իր թույլտվության.

- հեռարձակել կենդանի կատարումը կամ իրականացնել դրա հրապարակային այլ հաղորդումը,
- ամրագրել նախկինում չամրագրված կատարումը.
- ուղղակի կամ անուղղակի վերարտադրել կատարման ամրագրումը,
- տարածել իր կատարումը պարունակող հնչյունագրերն ու տեսագրությունները վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ ձեւով.
- հեռարձակել, վարձույթով տալ, հանրությանը մատչելի դարձնել կատարման ամրագրումը,
- կատարման ամրագրումների փոխատվությունը.

Կատարողն իրավունք ունի արգելելու կատարումների ամրագրումների օրինակների ներմուծումը, որոնք պատրաստվել են առանց իր նախապես տված թույլտվության:

Եթե կատարումների ամրագրումների օրինակները քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ ձեւով, ապա դրանց հետագա տարածումը իրականացվում է առանց կատարողի համաձայնության եւ վարձատրության, քանի որ կատարողը շրջանառության մեջ դրված օրինակների համար նախապես արդեն տվել է իր համաձայնությունն ու ստացել համապատասխան վարձատրություն:

Կատարողին է պատկանում նաեւ առեւտրային նպատակով լույս ընծայված կատարումների ամրագրումների օրինակները վար-

ձույթով տալու իրավունքը անկախ այդ օրինակների նկատմամբ սեփականության իրավունքից:Կատարողը իրավունք ունի վարձույթից արդարացի վարձատրություն ստանալ եւ չի կարող հրաժարվել այդ իրավունքից: Կատարումների ամրագրումների օրինակների վարձույթից վարձատրության հավաքումը կարող է իրականացվել կատարողների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության միջոցով:

Ծառայողական պարտականությունների կամ գործատուի հանձնարարության կատարման կարգով իրականացված կատարման նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են կատարողին, իսկ գույքային իրավունքները պատկանում են գործատուին, եթե կատարողի եւ գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Շատ երկրներում, երբ կատարման ամրագրումը (հնչյունագիրը) օգտագործվում է հեռարձակելու կամ հանրությանը հաղորդելու նպատակով, նախատեսվում է միանվագ արդարացի վարձատրություն կատարողներին կամ հնչյունագիր արտադրողներին կամ երկուսին միաժամանակ: Այս իրավունքը նախատեսված է Հռոմի կոնվենցիայի 12-րդ հոդվածով, սակայն կոնվենցիան անդամ պետություններին նաեւ վերապահության հնարավորություն է տալիս, որ այդ երկրում հեռարձակող կազմակերպությունները հնչյունագրեր արտադրող ընկերություններին վարձատրություն վճարելու որեւէ պարտավորություն չունենան: Հայաստանը միացել է Հռոմի կոնվենցիային առանց այդ իրավունքի վերաբերյալ որեւէ վերապահության: Այս դրույթը ամրագրված է Հայաստանի Օրենքի 54-րդ հոդվածում.

** եթե առևտրային նպատակով լույս ընծայված հնչյունագիրը կամ դրա օրինակը օգտագործվում է ուղղակիորեն հեռարձակման կամ ցանկացած միջոցներով հանրությանը հաղորդելու նպատակով, ապա օգտագործողի կողմից միանվագ արդարացի վարձատրություն է վճարվում կատարողին եւ հնչյունագիր արտադրողին: Ընդ որում վարձատրությունը նրանց միջեւ բաշխվում է հավասարաչափ, եթե չկա այդ մասին նրանց միջեւ կնքված համաձայնագիր: Այս օգտագործման ձեւի համար կատարողի թույլտվությունը չի պահանջվում, սակայն վարձատրության վճարումը պարտադիր է: Վարձատրության հավաքումը, կատարողների եւ

հնչյունագրեր արտադրողների միջեւ բաշխումն իրականացվում է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունների միջոցով: Սակայն առայժմ Հայաստանում չի ստեղծվել կատարողների, հնչյունագրեր արտադրողների իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպություն:

Հայաստանի Օրենքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ **հեղինակային եւ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:** Առանց իրավատիրոջ թույլտվության պատրաստված կամ տարածված հեղինակային եւ հարակից իրավունքների օբյեկտի օրինակները համարվում են **կեղծ կամ նմանակված (կոնտրաֆակտ)**: Եթե որեւէ անձ համերգի կամ այլ միջոցառման ժամանակ առանց կատարողի թույլտվության ձայնագրում է կատարողի կենդանի կատարումը, թույլ է տալիս կատարողի իրավունքների խախտում, իսկ ամրագրումը կամ դրա օրինակները համարվում են նմանակված:

Կատարումները պահպանվում են հարակից իրավունքներով

Հեղինակային ու հարակից իրավունքների վերաբերյալ **Օրենքով սահմանված պահանջները չկատարող անձը համարվում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները խախտող**: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների խախտման համար նախատեսվում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հնչյունագրեր արտադրողների իրավունքները.

Հնչյունագրեր արտադրողներն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձիք են, **ում նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ իրականացվում է կատարման առաջին ամրագրումը:**

Հնչյունագրեր արտադրողները իրավական պահպանության կարիք ունեն, քանի որ իրենց նախաձեռնությամբ եւ ֆինանասական ներդրումների, կազմակերպչական ջանքերի շնորհիվ իրականացնում են որակյալ ձայնագրությունների արտադրություն: Իրենց ֆինանսական ներդրումների վերադարձն ապահովելու եւ մեծ կորուստներ չունենալու նպատակով օրենքը հնչյունագրեր արտադրողների համար նախատեսում է մի շարք գույքային իրավունքներ:

Օրենքի 47-րդ հոդվածի համաձայն **հնչյունագիր արտադրողն իրավունք ունի ցանկացած ձեւով օգտագործելու իր հնչյունագիրը եւ հնչյունագրի օգտագործման յուրաքանչյուր ձեւի համար ստանալու վարձատրություն:** Հնչյունագիր արտադրողը **բացառիկ իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու** երրորդ անձանց՝

- հնչյունագրի ուղղակի կամ անուղղակի վերարտադրումը,
- հնչյունագրի բնօրինակի կամ օրինակների տարածումը, վարձույթով տալը,
- հնչյունագրի բնօրինակի կամ օրինակների փոխատվությունը.
- հնչյունագրի հեռարձակումը, հանրությանը մատչելի դարձնելը:

Հնչյունագիր արտադրողն իրավունք ունի նաեւ արգելելու իր հնչյունագրերի՝ առանց իր թույլտվության պատրաստված օրինակների ներմուծումը:



Առեւտրային նպատակով լույս ընծայված հնչյունագրերի օրինակները վարձույթով տալու իրավունքը պատկանում է հնչյունագիր արտադրողին՝ անկախ այդ հնչյունագրերի օրինակների նկատմամբ սեփականության իրավունքից:

Հնչյունագիր արտադրողը իրավունք ունի **արդարացի վարձատրություն ստանալ** հնչյունագրերի **վարձույթից, որից չի կարող հրաժարվել:**

Առեւտրային նպատակով արտադրված հնչյունագրի **հեռարձակման կամ հանրությանը հաղորդման դեպքում հնչյունագիր արտադրողը իրավունք ունի արդարացի վարձատրություն ստանալ:**

Առեւտրային նպատակով արտադրված հնչյունագրի թե հեռարձակումը կամ հանրությանը հաղորդումը, թե վարձույթով տալը իրականացվում է առանց հնչյունագիր արտադրողի թույլտվության, սակայն պարտադիր արդարացի վարձատրություն ստանալու պայմանով: Այս իրավունքները ենթակա են կոլեկտիվ կառավարման հարակից իրավունքների պահպանության համապատասխան կազմակերպության կողմից: Օգտագործողների հետ այս իրավունքների համար կնքված լիցենզային պայմանագիրը նախատեսում է միայն հնչյունագիր արտադրողին հասանելիք վարձատրության հավաքում: Հնչյունագրեր արտադրողների շահերը պաշտպանող կազմակերպություն Հայաստանում դեռեւս չի հիմնադրվել:

Հնչյունագիր արտադրողի հնչյունագիրը **հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը** հնարավորություն է ընձեռում, որ հնչյունագիրը հասանելի լինի հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում եւ ցանկացած պահին, մասնավորապես համակարգչային կամ ինտերնետային ցանցերի միջոցով:

Օրենքի 50-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ **հեռարձակող կազմակերպություն է համարվում այն անձը, որի նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ հեռարձակվում կամ պատրաստվում ու հեռարձակվում են հաղորդումներ:**

Օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ **հեռարձակում է համարվում** էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների եւ/կամ հնչյունների կամ դրանց ազդանշանների տարածումը հաղորդալարով, **ներառյալ՝ մալուխային կապը կամ առանց հաղորդալարի, ներառյալ՝ ռադիո, հեռուս-**

տատեսային կամ արբանյակային կապը՝ այդ պատկերները կամ հնչյունները հասարակության անդամներին մատչելի դարձնելու նպատակով: Հեռարձակում է համարվում նաեւ **կոդավորված ազդանշանների տարածումը,** եթե դրանց ապակոդավորման միջոցները հասարակությանը տրամադրվել են հեռարձակող կազմակերպության կողմից կամ նրա համաձայնությամբ:

Հեռարձակող կազմակերպության **հաղորդում է համարվում** տարածման համար նախատեսված պատկերներ եւ/կամ հնչյուններ կամ այլ տեղեկատվություն պարունակող կենդանի կատարման կամ ամրագրված նյութի ամբողջությունը, որը պատրաստել է եթեր հեռարձակող կամ մալուխային կապով հեռարձակող կազմակերպությունը կամ նրա պատվերով եւ միջոցներով՝ այլ անձ:

Օրենքի 51-րդ հոդվածը սահմանում է, որ հեռարձակող կազմակերպությունն **իրավունք ունի ցանկացած ձեւով օգտագործելու իր հաղորդումը եւ հաղորդման օգտագործման յուրաքանչյուր ձեւի համար ստանալու վարձատրություն:** Հեռարձակող կազմակերպությունը **բացառիկ իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու** երրորդ անձանց իրականացնել՝

- հաղորդման ամրագրումը,
- ամրագրված հաղորդման ուղղակի կամ անուղղակի վերարտադրումը,
- ամրագրված հաղորդման օրինակների տարածումը, այդ թվում՝ ներմուծումը,
- հաղորդման վերահեռարձակումը,
- հաղորդման հանրությանը հաղորդումը վճարովի մուտքով վայրերում,
- հաղորդումը հանրությանը մատչելի դարձնելը:

Հեռարձակող կազմակերպության **հաղորդումը հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը** հնարավորություն է ընձեռում, որ հաղորդումը հասանելի լինի հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում եւ ցանկացած պահին, մասնավորապես՝ համակարգչային կամ ինտերնետային ցանցերի միջոցով:

Հեռարձակող կազմակերպությունն իրավունք ունի նաեւ **արգելելու առանց իր թույլտվության պատրաստված հաղորդման ամրագրման օրինակների ներմուծումը:** Հայաստանում առայժմ չի ստեղծվել հեռարձակող կազմակերպությունների իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն:

Հայաստանի Օրենքը կատարողներից, հնչյունագրեր արտադրողներից եւ հեռարձակող կազմակերպություններից բացի հարակից իրավունքների սուբյեկտ է ճանաչում նաեւ **ֆիլմ արտադրողներին, տվյալների բազա պատրաստողներին եվ հրատարակիչներին:** Ստորեւ ներկայացվում է Օրենքով նրանց համար նախատեսված բացառիկ իրավունքները:

Համաձայն Օրենքի 48-րդ հոդվածի՝ **«ֆիլմ» նշանակում է տեսալսողական ստեղծագործություն կամ շարժվող պատկերներ՝ ձայնի ուղեկցությամբ կամ առանց դրա:** Շարժվող պատկերները միմյանց փոխկապակցված պատկերների ամրագրված շարք է՝ ձայնի ուղեկցությամբ կամ առանց դրա, որը հնարավոր է դիտել, իսկ ձայնի ուղեկցությամբ՝ նաեւ լսել: **Շարժվող պատկերները ստեղծագործական աշխատանքի արդյունք չեն եւ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն համարվում:**

Ֆիլմի առաջին ամրագրման արտադրողը (պրոդյուսերը) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ում նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ առաջին անգամ ամրագրվում է ֆիլմը: Ըստ Օրենքի 49-րդ հոդվածի՝ ֆիլմի առաջին ամրագրման արտադրողն իրավունք ունի ցանկացած ձեւով օգտագործել իր ամրագրումը եւ ամրագրման օգտագործման յուրաքանչյուր ձեւի համար ստանալ վարձատրություն:

Ֆիլմի առաջին ամրագրման արտադրողը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց արգելելու կամ թույլատրելու իրականացնել ֆիլմի բնօրինակի կամ օրինակների՝

- ուղղակի կամ անուղղակի վերարտադրությունը,
- տարածումը, այդ թվում՝ ներմուծումը, վարձույթով տալը, փոխատվությունը,
- հեռարձակումը, հանրությանը մատչելի դարձնելը:

Ֆիլմի ամրագրումը հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը հնարավորություն է ընձեռում, որ **ֆիլմը հասանելի լինի հանրության անդամներին** նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայ-

րում եւ ցանկացած պահին, մասնավորապես համակարգչային կամ ինտերնետային ցանցերի միջոցով: Ֆիլմի պրոդյուսերը իրավունք ունի նաեւ արգելելու առանց իր թույլտվության պատրաստած ամրագրման օրինակների ներմուծումը:

Եթե օրինական արտադրված ֆիլմի ամրագրման օրինակները քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցով, ապա դրանց հետագա տարածումը, այդ թվում՝ ներմուծումը, իրականացվում է առանց ֆիլմ արտադրողի համաձայնության եւ վարձատրության, քանի որ ֆիլմի այդ տպաքանակի համար նախապես ձեռք է բերվել իրավատերերի թույլտվությունն ու վճարվել համապատասխան վարձատրությունը:

Ֆիլմի պրոդյուսերին է պատկանում առևտրային նպատակով լույս ընծայված ֆիլմի օրինակները **վարձույթով տալու եւ արդարացի վարձատրություն ստանալու** իրավունքը, որից նա **չի կարող հրաժարվել:**

Տվյալների բազա

Օրենքի 58-րդ հոդվածը սահմանում է, որ **տվյալների բազան ստեղծագործությունների, տվյալների կամ այլ անկախ նյութերի համակարգված կամ հետեւողական ձեւով դասավորված հավաքածու է, որի տարրերը անհատապես մատչելի են էլեկտրոնային կամ այլ միջոցներով եւ որոնց ձեռքբերումը, ճշգրտումը կամ ներկայացումը պահանջում է որակական եւ/կամ քանակական էական ներդրում:**

Իսկ տվյալների բազա պատրաստողն այն անձն է, որն իր նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ որակապես եւ/կամ քանակապես էական ներդրում է կատարել տվյալների բազայի պարունակության ձեռքբերման, ճշգրտման կամ ներկայացման համար:

Ըստ Օրենքի 59-րդ հոդվածի՝ տվյալների բազա պատրաստողը **բացառիկ** իրավունք ունի **արգելելու տվյալների բազայի ամբողջ պարունակության կամ դրա որակապես եւ /կամ քանակապես էական մասի դուրսհանումը եւ/կամ վերաօգտագործումը:** Սահմանված են նաեւ տվյալների բազայի օրինական օգտագործողի իրավունքների սահմանափակումները:

Տվյալների բազայի օրինական օգտագործողը չպետք է որևէ ձեւով վնաս պատճառի տվյալների բազայում ընդգրկված ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ հեղի-

նակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջը: Տվյալների բազայի օրինական օգտագործողը՝առանց տվյալների բազա պատրաստողի թույլտվության կարող է դուրս հանել կամ վերաօգտագործել դրա պարունակության էական մասը՝

- անձնական օգտագործման նպատակով,
- ուսուցման կամ գիտական հետազոտությունների լուսաբանման նպատակներով՝ սկզբնաղբյուրի պարտադիր նշումով.
- հասարակության անվտանգության կամ վարչական կամ դատական ընթացակարգի նպատակներով:

Հարակից իրավունքների եւս մի սուբյեկտի՝ **հրատարակչի իրավունքները** սահմանված են Օրենքի 55-րդ հոդվածով: Ըստ այդ հոդվածի դրույթների՝ հրատարակությունների **հրատարակչական ձեւավորումների նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են տվյալ ձեւավորումն իրականացրած հրատարակչին:**

Հրատարակիչը բացառիկ իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու երրորդ անձանց իր հրատարակությունների հրատարակչական ձեւավորումների վերարտադրությունը: Հրատարակչի այս իրավունքը գործում է 50 տարի:

հրատարակչական ձեւավորման նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է հրատարակչին

Հարակից իրավունքների կիրարկումը որեւէ ձեւով չի ազդում կատարման, ձայնագրման կամ ինտերնետի միջոցով հեռարձակման հիմքում ընկած ստեղծագործությունների հեղինակային իրավունքների պահպանության վրա, եթե կան այդպիսիք:

Երաժշտության նկատմամբ հեղինակային եւ հարակից իրավունքներ

Շատ կազմակերպություններ իրենց գործունեությունն իրականացնելիս երաժշտություն են օգտագործում տարբեր պատճառներով՝ հաճախորդներ հրապուրելու, հաճախորդի վրա դրական տպավորություն թողնելու կամ իր աշխատողների օգուտների համար: Այս հանգամանքը կարող է օգնել

գործարարին առավելություն ձեռք բերել իր մրցակիցների նկատմամբ, ապահովել աշխատանքային ավելի բարենպաստ պայմաններ, օգնել կազմավորելու հավատարիմ հաճախորդների միջուկ եւ, ընդհանրապես, մեծացնել հասարակության հարգանքն իր ապրանքանիշի կամ կազմակերպության նկատմամբ:

Երաժշտական ստեղծագործությունների թույլատրված հրապարակային կատարումը կամ օգտագործումը հեռուստա-ռադիոընկերությունների, ինտերնետային կայքերի, գիշերային ակումբների, ռեստորանների, ֆոնային երաժշտության ծառայությունների, ֆիթնես եւ առողջապահական ակումբների, հյուրանոցների, առեւտրային ցուցահանդեսների (ցուցահանդես-վաճառքների), համերգի կազմակերպիչների, առեւտրային կենտրոնների, զվարճանքի այգիների, ավիոուղիների, երաժշտություն օգտագործողների կամ շատ այլ արտադրողների (ներառյալ հեռախոսային արդյունաբերությունը՝ ռինգթոուն) կողմից իրականացվում է համապատասխան հեղինակային վարձատրություն վճարելու պայմանով:

Երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային ու հարակից իրավունքների պաշտպանությունը հաճախ ընդգրկում է երգերի խոսքերի հեղինակներին, կոմպոզիտորներին, հրատարակիչներին, ձայնագրման ընկերություններին, հեռարձակողներին, ինտերնետային կայքերի տերերին, հեղինակի իրավունքները կոլեկտիվ կառավարող ընկերություններին:

Եթե երաժշտությունն ու խոսքերը ստեղծվել են երկու տարբեր մարդկանց կողմից, ապա երգը համարվում է երկու ստեղծագործությունից բաղկացած՝ երաժշտական եւ գրական: Հեղինակները օգտվում են յուրաքանչյուրն իր ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքից եւ ստանում իրենց հասանելիք վարձատրությունը: Հայաստանի Օրենքի 13-րդ եւ 63-րդ հոդվածների համաձայն ամբողջական երգի հրապարակային կատարման կամ հեռարձակման իրավունքները կառավարվում են կոլեկտիվ կառավարող կազմակերպության կողմից եւ լիցենզիային պայմանագիր կարող է ձեռք բերվել «Հայհեղինակ» կազմակերպությունից:

Երաժշտություն հրատարակելու իրավունքները ընդգրկում են ստեղծագործությունը ձայնագրելու, կատարելու, կրկնօրինակելու, ստեղծագործությունը նոր կամ ուրիշ ստեղծագործության (ածանցյալ ստեղծագործություն) մեջ

ընդգրկելու իրավունքները: Առեւտրային օգտագործումը հեշտացնելու նպատակով շատ երգահաններ սովորաբար գերադասում են հրատարակելու իրավունքը փոխանցել որեւէ կազմակերպության, որը երաժշտական հրատարակչական պայմանագրում դիտվում է որպես «հրատարակիչ», եւ այդ պայմանագրով հրատարակչին է փոխանցում հեղինակային իրավունքը կամ հեղինակային իրավունքը կառավարելու իրավունքը:

Երաժշտությանն առնչվող բազմաթիվ իրավունքներից են **կատարման, հրատարակման, մեխանիկական** (ձայնագրության միջոցով վերարտադրության), **սինխրոնիզացման** (երաժշտական ստեղծագործությունը տեսա-լսողական ստեղծագործության մեջ ընդգրկելու իրավունք) իրավունքները, որոնք համառոտ նկարագրվում են ստորեւ.

Հրապարակային կատարման իրավունքը սովորաբար երգահանների համար եկամուտ ստանալու ամենաշահավետ աղբյուրն է: Կոմպոզիտորի եւ խոսքի հեղինակի կողմից այս իրավունքը անհատապես կառավարելը բազմաթիվ դժվարությունների հետ է կապված՝ երգը օգտագործել ցանկացողների մեծաթիվ բանակի եւ օգտագործողների տեսանկյունից՝ հեղինակների մեծ թվի առումով, քանի որ իրավատերերն ու օգտագործողները պետք է առանձին-առանձին բանակցեն յուրաքանչյուր երգի օգտագործման պայմանները, հոնորարի վճարման չափը եւ կարգը: Սա չափազանց աշխատատար եւ ծախսատար գործընթաց է, այդ իսկ պատճառով ամենանպատակահարմար ուղին կոլեկտիվ կառավարումն է:

Մեկ երգը կամ բազմաթիվ երգեր կամ երաժշտական ստեղծագործությունների նոտաների օրինակները **տպագրելու ու վաճառելու իրավունքը տպագրելու իրավունքն է,** որը լիցենզավորվում է հրատարակչի կողմից:

Մեխանիկական իրավունքը վերաբերում է հեղինակային իրավունքը պահպանվող երաժշտական ստեղծագործությունը (բացառությամբ ֆիլմը կամ այլ տեսալսողական ստեղծագործությունները ուղեկցողներից) ժապավենի, խտասկավառակի կամ այլ նյութական կրիչի վրա ձայնագրելուն, վերարտադրելուն եւ հանրության շրջանում տարածելուն: Մեխանիկական իրավունքների վերաբերյալ օգտագործողներին տրված լիցենզիան

անվանում են **մեխանիկական իրավունքների լիցենզիա**:

Երաժշտական ստեղծագործությունը տեսալսողական ստեղծագործություններում ընդգրկելու (ինչպես օրինակ՝ ֆիլմը, հեռուստահաղորդումը, հեռուստատեսային գովազդը կամ նկարներն ուղեկցելու համար ձայնագրելու) իրավունքը կոչվում է **սինխրոնիզացիայի իրավունք (սինք)**: **Սինխրոնիզացիայի լիցենզիան** թույլ է տալիս պրոդյուսերին երաժշտական ստեղծագործությունը կամ դրա որոշակի մասը ընդգրկել տեսալսողական ստեղծագործության մեջ: Սովորաբար այս լիցենզիան ձեռք են բերում հեռուստատեսային պրոդյուսերները ուղիղ բանակցելով կոմպոզիտորի եւ խոսքի հեղինակի կամ ավելի հաճախ՝ նրանց հրատարակչի հետ:

Երաժշտական ստեղծագործությունը տեսալսողական ստեղծագործության մեջ օգտագործելու համար կոմպոզիտորից ձեռք բերվող լիցենզիայից բացի, առանձին **սինք** լիցենզիա է անհրաժեշտ նաեւ այն հնչյունագիրն արտադրողից, ով կատարել է երաժշտական ստեղծագործության ամրագրումը:

Բնօրինակ ձայնագրություն տերմինը (կամ կրճատ՝ մաստերը) վերաբերում է հնչյունների (ժապավենի կամ այլ կրիչի վրա) օրինական արտադրված սկզբնական (մայր) ձայնագրությանը, որից ձայնագրություն արտադրողը կամ պրոդյուսերը պատրաստում է CD-ներ կամ ժապավեններ եւ վաճառում հանրությանը: Բնօրինակ ձայնագրության իրավունքը կամ մաստերն օգտագործելու իրավունքը պահանջվում են տվյալ ձայնագրությունը արտադրելու եւ տարածելու համար:

Երաժշտական ստեղծագործությունների՝ որպես **հեռախոսային ռինգտոններ** օգտագործումը երաժշտության օգտագործման արագ ընդլայնվող ոլորտ է: Այն դարձել է զվարճանք եւ բջջային հեռախոսն անհատականացնելու չափազանց լայն տարածված միջոց: Ռինգտոնների զանգվածային օգտագործումը երաժշտության օգտագործման այս նոր ձեւի լայն տարածման ապացույց է: Ռինգտոնը բջջային սարք ուղարկված թվային կոդ է կամ ֆայլ: Ռինգտոնների համար լիցենզիան սովորաբար տարածվում է թե միահնչյուն եւ թե բազմահնչյուն ռինգտոնների պատրաստման եւ տարածման վրա:

«Թվային միջավայրում իրավունքների կառավարման» միջոց-

ներն ու մեխանիզմները կարեւոր դեր են խաղում երաժշտական ստեղծագործությունների online վաճառքը կառավարելու եւ պիրատությունը կանխելու գործում: Օրինակ՝ Ափլի FairPlay տեխնոլոգիան եւ Մայքրոսոֆթի Windows Media-ն թվային միջավայրում երաժշտության անօրինական օգտագործման այնպիսի սահմանափակումներ են ստեղծում, որոնք ապահովում են վաճառքից հեղինակային իրավունքի իրավատերերին հասանելիք վարձատրությունը եւ նվազեցնում թվային կրկնօրինակների պատրաստումը:

Երաժշտական ստեղծագործությունների **հրապարակային կատարման, հեռարձակման, թվային միջավայրում օգտագործման, ձայնագրության միջոցով վերարտադրության իրավունքները** Հայաստանում Օրենքի 63-րդ հոդվածի համաձայն կոլեկտիվ կառավարման առարկա են: Այդ իրավունքների կառավարումն իրականացվում է «Հայհեղինակ» կազմակերպության կողմից՝ համաձայն **իր կանոնադրության, Օրենքի 63-64-րդ հոդվածների եւ ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 11-ի 506-Ն որոշմամբ** սահմանված հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի:

Ինչպիսի՞ն են հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների գործողության ժամկետները

Համաձայն Հայաստանի Օրենքի՝

- հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները պահպանվում են անժամկետ բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է հեղինակի կյանքի ընթացքում եւ դադարում է նրա մահվան հետ:
- ստեղծագործության նկատմամբ հեղինակի գույքային իրավունքները գործում են նրա կյանքի ընթացքում եւ մահից հետո 70 տարի: Սա նշանակում է, որ ոչ միայն հեղինակն է օգտվում իր ստեղծագործության օգտագործումից, այլ նաեւ՝ նրա ժառանգները:
- համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները գործում են համահեղինակների կյանքի ընթացքում եւ համահեղինակներից վերջինի մահից հետո՝ 70 տարի:
- կեղծանվամբ կամ անանուն ստեղծագործությունների դեպքում հեղինակի գույքային իրավունքները ծագում են ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալու պահից եւ գործում են 70 տարի:

եթե նշված ժամկետում կեղծանվամբ կամ անանուն ստեղծագործության հեղինակի անձը բացահայտվում է, ապա գործողության ժամկետը սահմանվում է մահից հետո 70 տարի:

** կոլեկտիվ ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը հաշվարկվում է ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալու պահից՝ 70 տարի:

** եթե ստեղծագործությունը հրատարակվում է մասերով (հատորներով, պրակներով, շարքերով, սերիաներով, միջարկներով եւ այլն) եւ եթե դրա նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը հաշվարկվում է ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դարձնելու պահից, ապա գույքային իրավունքների գործողության ժամկետը յուրաքանչյուր մասի համար հաշվարկվում է առանձին:

** տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքները գործում են դրանց հեղինակներից **(ռեժիսոր, սցենարի հեղինակ, երկխոսության հեղինակ, տվյալ ստեղծագործության համար հատուկ գրված երաժշտության հեղինակ, բեմադրող օպերատոր)** վերջինի մահից հետո՝ 70 տարի:

Հայաստանի Օրենքը նախատեսում է նաեւ նոր իրավունք անտիպ ստեղծագործությունները հեղինակի գույքային իրավունքների գործողության **70-ամյա ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակող կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի դարձնող անձի համար:** Նա օգտվում է հեղինակի՝ օրենքով նախատեսված գույքային իրավունքներին համարժեք **իրավունքներից 25 տարի՝** հրատարակման կամ հանրությանը մատչելի դարձնելու պահից: Իսկ քննադատական եւ գիտական աշխատությունների հրատարակությունների նկատմամբ 57-րդ հոդվածով նախատեսված իրավունքները գործում են **30 տարի՝** ստեղծագործության առաջին օրինական հրատարակման պահից: Բոլոր հաշվարկները սկսվում են հրատարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:

Գույքային իրավունքների գործողության ժամկետը լրանալուց հետո ստեղծագործությունը դառնում է հանրության սեփականությունը: Հանրության սեփականություն դարձած ստեղծագործությունը կարող է ազատ օգտագործել յու-

ռաքանչյուր անձ՝ առանց հեղինակային վարձատրություն վճարելու, սակայն պահպանելով հեղինակի անվան, հեղինակության եւ համբավի ու արժանապատվության իրավունքները:

Հայաստանի Օրենքի 61-րդ հոդվածով հարակից իրավունքների գործողության ժամկետ սահմանված է՝

- կատարողի համար՝ 50 տարի կատարման պահից: Եթե այդ ժամանակահատվածում կատարման ամրագրումն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի է դարձել, ապա կատարողի իրավունքները գործում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) 50 տարի,
- հնչյունագիր արտադրողի համար՝ 50 տարի ամրագրման պահից: Եթե այդ ժամանակահատվածում հնչյունագիրն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի դարձել, ապա հնչյունագիր արտադրողի իրավունքները գործում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) 50 տարի:
- ֆիլմի առաջին ամրագրման արտադրողի համար՝ 50 տարի ամրագրման պահից: Եթե այդ ժամանակահատվածում ֆիլմը օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի դարձել, ապա ֆիլմ արտադրողի իրավունքները գործում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) 50 տարի:
- հեռարձակող կազմակերպության համար՝ հաղորդման առաջին հեռարձակման պահից 50 տարի:
- հրատարակչի՝ **հրատարակչական ձեւավորման** նկատմամբ իրավունքը գործում է հրատարակման պահից 50 տարի:

Լուսանկարչական ստեղծագործության հեղինակի գույքային իրավունքները գործում են նրա կյանքի ընթացքում եւ մահից հետո 70 տարի

Ի տարբերություն հարակից իրավունքների մյուս սուբյեկտների՝ **տվյալների բազա պատրաստողի իրավունքների գործողության ժամկետ սահմանված է 15 տարի** բազայի պատրաստումն ավարտելու պահից: Սակայն, եթե մինչև նշված ժամկետի ավարտը տվյալների բազան մատչելի է դարձել հանրությանը, ապա տվյալների բազա պատրաստողի գույքային իրավունքների պահպանության ժամկետը հաշվարկվում է տվյալների բազան առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից:

Հարակից իրավունքների պահպանության ժամկետները նույնպես հաշվարկվում են նշված իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:

3. ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԲՆՕՐԻՆԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչ պետք է անել հեղինակային կամ հարակից իրավունքների պահպանություն ձեռք բերելու համար

Հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանությունը տրվում է առանց որեւէ պաշտոնական գործընթացների: Ստեղծագործությունը պահպանվում է **ինքնաբերաբար, ստեղծման փաստով,** առանց որեւէ հատուկ գրանցման, ի պահ հանձնման կամ այլ ձեւականությունների, թեեւ որոշ երկրներ պահանջում են, որ այն ամրագրված լինի որեւէ նյութական կրիչի վրա:

Ինչպե՞ս ապացուցել, որ դուք եք տիրապետում հեղինակային իրավունքը

Առանց ձեւականությունների պահպանության համակարգը կարող է մի շարք դժվարություններ առաջացնել, եթե վիճելի իրավիճակում փորձեք պաշտպանել ձեր իրավունքները: Իսկապես, եթե որեւէ մեկը ձեզ մեղադրի, որ դուք պատճենել եք նրա ստեղծագործությունը, ինչպես պետք է ապացուցեք, որ դուք եք հեղինակը: Ապացույցներ ապահովելու նպատակով կարող եք որոշ նախազգուշական միջոցներ ձեռնարկել. կարող եք ստեղծագործության օրինակը **ի պահ հանձնել բանկում կամ իրավաբանի մոտ** կամ պարզապես **պատվիրված ծրարով փոստով ուղարկել ինքներդ ձեզ եւ** ծրարը չբացել: Ծրարի վրա փոստային կնիքը հստակ նշում է ուղարկման ամսաթիվը, որը լրացուցիչ ապացույց կծառայի վիճելի իրավիճակներում:

Հայաստանի Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ ստեղծագործության նկատմամբ **հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից:** Իսկ 8-րդ հոդվածի համաձայն **հեղինակ է ճանաչվում այն անձը**, ում անունը որպես հեղինակ **նշված է ստեղծագործության վրա, կամ ստեղծագործությունը հրապարակելիս, կամ նշված է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունում, կամ նոտարի մոտ, կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում ի պահ հանձնված ստեղծագործության օրինակի վրա, քանի դեռ հակառակն ապացուցված չէ:**

Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն կոլեկտիվ կառավարող կազմակերպությունը կարող է իրավատիրոջ ցանկությամբ ի պահ վերցնել ստեղծագործությունը կամ հարակից իրավունքների օբյեկտը եւ տալ այդ մասին համապատասխան փաստաթուղթ: Այդ փաստաթուղթը վիճելի իրավիճակներում կարող է վճռական դեր ունենալ: Հայաստանում ստեղծագործություններ կամ հարակից իրավունքների օբյեկտներ **ի պահ կարող է վերցնել Հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը:** Իրավատերը ներկայացնում է ի պահ հանձնվող օբյեկտի օրինակը, լրացնում կազմակերպությունում համապատասխան ձեւաթղթեր եւ եռօրյա ժամկետում ստանում փաստաթուղթ՝ ներկայացված օբյեկտի ի պահ հանձնման ամսաթվի եւ գրանցման համարի վերաբերյալ:

Հեղինակային կամ հարակից իրավունքների **խախտման** դեպքում իրավատերը կարող է դիմել դատարան եւ պահանջել՝

- իր իրավունքների ճանաչում,
- իրավունքը խախտող գործողությունների կասեցում,
- նմանակված օրինակների, դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում,
- վնասի հատուցում (ներառյալ՝ բաց թողնված օգուտը),
- հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում:

Դատարան դիմելու համար ամենեւին անհրաժեշտ չէ, որ վեճի առարկա իրավունքների օբյեկտը

պարտադիր ի պահ հանձնված լինի «Հայհեղինակ»-ում: Այդ փաստաթղթի առկայությունը պարզապես հեշտացնում է դատական գործընթացն ու դատական ատյաններին կողմնորոշվելու հնարավորություն ընձեռում: Այդ իսկ պատճառով **ցանկալի է ստեղծագործությունը ի պահ հանձնել նախապես,** նախքան հրապարակելը կամ օգտագործման տրամադրելը:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն հեղինակային իրավունքի ծանուցման նպատակով ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա կարող եք տեղադրել հեղինակային իրավունքի պահպանության նշանը՝ ©, գույքային իրավունքները տիրապետող անձի անունը կամ անվանումը, ստեղծագործության առաջին լույսընծայման տարեթիվը:

Խորհուրդ է տրվում ստեղծագործությունը նույնականացման հատուկ համարների համակարգերի միջոցով համարակալել, ինչպիսիք են, օրինակ, Գրքի Միջազգային Ստանդարտ Համարը (ISBN) գրքերի համար, Ձայնագրության Միազգային Ստանդարտ Կոդը (ISRC) ձայնագրությունների համար, Երաժշտական Միջազգային Ստանդարտ Համարը (ISMN) տպագիր երաժշտական գործերի համար, Երաժշտական Միջազգային Ստանդարտ Կոդը (ISWC) այն երաժշտական ստեղծագործությունների համար, որոնք ընդգրկված են կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների հսկողութ-

Մուլտիմեդիա արտադրանքի նկատմամբ հեղինակային իրավունքը

«Մուլտիմեդիա» արտադրանքը բաղկացած է մի քանի տեսակ ստեղծագործություններից՝ հաճախ իրար հետ միավորված մեկ անփոփոխ կրիչում, ինչպեսին է, օրինակ, համակարգչի դիսկը կամ CD-ROM-ը:

Մուլտիմեդիա արտադրանքի օրինակներ են տեսախաղերը, տեղեկատվական կրպակները եւ ինտերակտիվ կայքերը: Մուլտիմեդիա արտադրանքում միավորված են երաժշտությունը, խոսքը, լուսանկարները, իլյուստրացիաների արվեստը, գրաֆիկան, համակարգչային ծրագրերը եւ ամբողջական կինոպատկերները: Այս տարրերից յուրաքանչյուրը կարող է հեղինակային իրավունքի պահպանության առանձին առարկա լինել: Ի լրումն՝ ստեղծագործությունների միավորումը կամ միատեղումը-այսինքն մուլտիմեդիա արտադրանքն ինքնին, կարող է հեղինակային իրավունքի պահպանություն վայելել, եթե այդ գործընթացի արդյունքում ստացվում է բնօրինակ, յուրօրինակ արտադրանք:

յան տակ գտնվող ցանկում (ռեպերտուարում), Տեսալսողական Ստեղծագործությունների Միջազգային Ստանդարտ Համարը (ISAN) տեսալսողական ստեղծագործությունների համար եւ այլն:

Ինչպես եք պաշտպանում ձեր էլեկտրոնային կամ թվային տեսքով ստեղծագործությունները:

Էլեկտրոնային կամ թվային տեսքով ստեղծագործությունները (օրինակ CD-ներ, DVD-ներ, online տեքստեր, երաժշտություն, ֆիլմեր) էլ ավելի խոցելի են խախտումների տեսակետից, քանի որ հեշտ է դրանք կրկնօրինակել եւ փոխանցել ինտերնետի միջոցով շատ հաճախ առանց որակի զգալի, եթե ոչ բոլորովին, կորստի:

«Հայհեղինակ»-ում ի պահ հանձնման վերոնշյալ գործընթացը կարող է կիրառվել նաեւ այսպիսի ստեղծագործությունների նկատմամբ:

Եթե կազմակերպությունն օնլայն առաջարկում է հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործություններ, ապա այդպիսի գործերը սովորաբար **«մկնիկի միջոցով պայմանագրի»** առարկա են, որը սահմանում է այն սահմանափակումները, թե օգտագործողն ինչը կարող է անել բովանդակության հետ եւ ինչը՝ ոչ: Այսպիսի սահմանափակումները, սովորաբար, կիրառվում են մեկ օգտագործողի նկատմամբ եւ նրան թույլ են տալիս լսել կամ կարդալ մեկ օրինակ միայն: Վերատարածումը կամ վերաօգտագործումը սովորաբար արգելվում է:

Ի լրումն շատ կազմակերպություններ թվային բովանդակության նկատմամբ իրենց հեղինակային իրավունքը պաշտպանելու նպատակով **կիրառում են տեխնիկական միջոցներ:** Այդպիսի միջոցները սովորաբար համարվում են «Թվային իրավունքների կառավարման» (ԹԻԿ) մեխանիզմներ եւ համակարգեր: Դրանք օգտագործվում են բովանդակության պահպանության ժամկետի ընթացքում էլեկտրոնային միջոցներով տրվող թույլտվության շրջանակը, պայմանները, ուղիները եւ կիրառումը սահմանելու համար:

Կա երկու ճանապարհ, որոնց օգնությամբ ԹԻԿ մեխանիզմներն ու համակարգերը կարող են օգնել հսկելու թվային ստեղծագործությունների հեղինակային իրավունքը.

** թվային ստեղծագործությունների վրա **նշել տեղեկություններ** հեղինակային իրավունքի պահպանության, սեփականատիրոջ եւ այլնի մասին, որը կոչվում է

«իրավունքների կառավարման մասին տեղեկատվություն», եւ

- **կիրառել «տեխնիկական պաշտպանիչ միջոցներ» (ՏՊՄ)**, որոնք օգնում են հսկելու (թույլատրել կամ արգելել) թվային ստեղծագործությունների հասանելիությունը կամ օգտագործումը: Հեղինակային իրավունքով պահպանվող տարբեր ստեղծագործությունների նկատմամբ կիրառվող տեխնիկական պաշտպանիչ միջոցները հսկում են, որ ստեղծագործության նկատմամբ օգտագործողի իրականացրած գործողությունները (դիտել, լսել, փոփոխել, ձայնագրել, մեջբերել, թարգմանել, պահել որոշակի ժամանակահատվածում, ուղարկել, կրկնօրինակել, տպել եւ այլն) համապատասխանեն հեղինակային եւ հարակից իրավունքների մասին գործող օրենքին: Տեխնիկական պաշտպանիչ միջոցները երաշխավորում են նաեւ բովանդակության գաղտնիությունը, անվտանգությունը եւ ամբողջականությունը:

Թվային իրավունքների կառավարման արդյունավետ միջոցների ընտրությունը

Գոյություն ունեն բազմաթիվ տեխնիկական միջոցներ, որոնք կարող են օգտագործվել նվազեցնելու թվային իրավունքների կառավարման միջոցների եւ համակարգերի կիրառման միջոցով հեղինակային իրավունքի խախտումների հավանականությունը: Յուրաքանչյուրն ունի պահպանության, ձեռքբերման, կիրառման տարբեր արժեքներ: Ընտրված կոնկրետ միջոցի լավագույնը լինելը որոշվում է ստեղծագործության օգտագործման հետ կապված ռիսկի աստիճանի ձեր գնահատմամբ:

Իրավունքների կառավարման տեղեկատվություն

Կան տարբեր ճանապարհներ նույնականացնելու հեղինակային իրավունքով պահպանվող ձեր ստեղծագործությունը.

- դուք կարող եք թվային բովանդակության վրա տեղադրել, օրինակ, **հեղինակային իրավունքի մասին ծանուցում կամ զգուշացում,** ինչպես օրինակ. **«Կարող է վերարտադրվել միայն ոչ-առեւտրային նպատակներով»**: Լավ պրակտիկա է նաեւ ձեր ինտերնետային կայքի յուրաքանչյուր էջում հեղինակային իրավունքի մասին ծանուցում տեղադրելը, որը կներկայացնի այդ էջում պարունակվող բովանդակության օգտագործման պայմաններն ու ժամկետները,
- **թվային օբյեկտի նույնականու-**

թյան որոշիչը (DOI). մի համակարգ է, որն օգնում է ճանաչել հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունները թվային միջավայրում: Թվային օբյեկտների որոշիչները ստեղծագործությունը ինտերնետում օգտագործելու դեպքում ստեղծագործությանը **թվային ձեւով կցված թվային նշումներ** են: Դրանք օգտագործվում են ապահովելու ընթացիկ տեղեկատվությունը, ընդհուպ՝ որտեղ կամ ինչպես գտնել ստեղծագործությունը ինտերնետում: Թվային ստեղծագործության վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ՝ որտեղ այն գըտնել, կարող է փոփոխվել ժամանակի ընթացքում, բայց թվային օբյեկտի նույնականության որոշիչը չի փոփոխվում (տես www.doi.org),

⁂ **ժամկետի նշումը.** թվային բովանդակությանը (ստեղծագործությանը) կցված նշում է, որը կարող է ապացուցել, թե բովանդակության վիճակը ինչպիսին է տվյալ ժամանակում: Ժամկետը վճռորոշ տարր է, երբ անհրաժեշտ է ապացուցել հեղինակային իրավունքի խախտումը՝ մասնավորապես՝ երբ է էլեկտրոնային նամակն ուղարկվել, երբ են բանակցել պայմանագրի շուրջ, երբ է ստեղծվել կամ փոփոխվել մտավոր սեփականությունը կամ երբ է վերացվել թվային ապացույցը: Փաստաթղթի ստեղծման ժամկետը հաստատելու համար կարող է ներգրավվել ժամկետը որոշող մասնագիտացված ծառայություն:

⁂ **նշանային կոդերը** համակարգչային ծրագրի միջոցով կցում է հեղինակային իրավունքի մասին տեղեկությունը թվայնացված ստեղծագործության վրա: Թվային կոդերը կարող են լինել տեսանելի, հեշտ նկատելի եւ շատ նման լուսանկարի եզրին հեղինակային իրավունքի մասին ծանուցմանը, կամ կարող է պատկերված լինել ամբողջ փաստաթղթով մեկ, երբ փաստաթուղթը տպվում է ֆիրման ֆոնային գունատ պատկերով նույնականացնող թղթից ձեւաթղթի վրա: Հաճախ թվային կոդերն այնպես են ամրացված, որ նորմալ օգտագործման դեպքում այն մնում է չբացահայտված: Եթե տեսանելի կոդերը հեռու են պահում խախտում պարունակող գործողություններ իրականացնելուց, ապա անտեսանելի կոդերն օգնում են ապացուցելու հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործությունների գողությունն ու հսկելու ձայնագրությունների առցանց (on-line) օգտագործումը:

Տեխնիկական պաշտպանության միջոցներ (ՏՊՄ)

Որոշ գործարարներ գերադասում են օգտագործել իրենց ստեղծագործությունների հասանելիությունը սահմանափակող տեխնիկական պաշտպանիչ միջոցներ միայն այն հաճախորդների համար, ովքեր ընդունում են ստեղծագործություններն օգտագործելու համար որոշակի պայմաններ եւ ժամկետներ: Այդպիսի միջոցներ են.

- **ծածկագրումը/կոդավորումը.** հաճախ օգտագործվում է պաշտպանելու ծրագրային արտադրանքը, հնչյունագրերը եւ տեսալսողական ստեղծագործությունները չթույլատրված օգտագործումից: Օրինակ, երբ կայքի այցելուն ներբեռնում է (download) ստեղծագործությունը, ՏՊՄ ծրագիրը կարող է կապվել հեղինակային ու հարակից իրավունքները կառավարող կազմակերպության հետ՝ կազմակերպելու վճարումը, ֆայլի ապակոդավորումը եւ անհատական «բանալու» տրամադրումը, օրինակ՝ այցելուին հատկացված գաղտնաբառը բովանդակությունը տեսնելու կամ լսելու համար:

Օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված է, որ **ցանկացած անձ,** որը, գիտակցաբար **շրջանցում է** հեղինակային իրավունքի եւ հարա-

Այն ձեռնարկատիրական գործունեությունը, որը կապված է թվայնացված ստեղծագործությունների օգտագործման հետ, *պետք է հաշվի առնի նաեւ տեխնիկական պաշտպանական միջոցների կիրառման անհրաժեշտությունը, եթե թվային ստեղծագործությունները չթույլատրված վերարտադրությունից եւ տարածումից պաշտպանելու անհրաժեշտություն կա: ՏՊՄ-ի կիրառումը չպետք է վնասի այլ օրենքների կիրարկմանը, ինչպիսիք են արտադրական գաղտնիքների պաշտպանությունը, սպառողների շահերի պաշտպանությունը կամ անբարեխիղճ մրցակցությունը:*

Այլ անձանց թվայնացված ստեղծագործությունների օգտագործման հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն *իրականացնելու համար պետք է ձեռք բերել բոլոր լիցենզիաներն ու թույլտվությունները: Թույլտվությունների ձեռքբերումն անհրաժեշտ է, որովհետեւ ձեռնարկությունը կամ անհատը, որը շրջանցում է տեխնիկական պաշտպանիչ միջոցները ու անօրինական օգտագործում պահպանվող ստեղծագործությունը, կարող է պատասխանատվություն կրել հեղինակային իրավունքի խախտման, ինչպես նաեւ տեխնիկական պաշտպանիչ միջոցների շրջանցման համար:*

կից իրավունքների **պաշտպանության տեխնիկական միջոցները**, պատրաստում, ներմուծում, տարածում, վաճառում, վարձույթով տալիս սարքեր, արտադրանք կամ բաղադրամասեր կամ մատուցում է ծառայություններ պաշտպանության տեխնիկական միջոցները շրջանցելու նպատակով, կամ դրանց հիմնական նպատակը պաշտպանության ցանկացած տեխնիկական միջոցի շրջանցումն է կամ շրջանցման հնարավորություն ստեղծելը **ենթարկվում է** հեղինակային եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը համարժեք **պատասխանատվության:**

Օրենքի 68-րդ հոդվածի համաձայն ցանկացած անձ,

- ով գիտակցաբար՝ **առանց թույլտվության վերացնում կամ փոխում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների կառավարման վերաբերյալ ցանկացած **էլեկտրոնային տեղեկատվությունը,**
- **տարածում է, տարածման նպատակով ներմուծում, հեռարձակում, հանրությանը հաղորդում կամ մատչելի է դարձնում** պահպանվող հեղինակային կամ հարակից իրավունքների **օբյեկտը,** որի վրա իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային **տեղեկատվությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության,**
- **գիտակցում է** կամ բավականաչափ հիմքեր ունի գիտակցելու, որ **այդպիսի գործողություններով նա** դրդում, հնարավորություն է տալիս, **նպաստում է** հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների որևէ **խախտման կամ թաքցնում է դա՝**

ենթարկվում է հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը համարժեք **պատասխանատվության**:

- **հասանելիությունը հսկող կամ պայմանական մատչելիության համակարգը** ստուգում է օգտագործողի նույնականությունը, բովանդակության ֆայլերը եւ արտոնությունները (կարդալ, փոփոխել, կատարել եւ այլն), որ ունի յուրաքանչյուր օգտագործող որոշակի ստեղծագործության համար: Թվային ստեղծագործության սեփականատերը կարող է կազմակերպել մատչելիությունը բազմաթիվ միջոցներով: Օրինակ՝ փաստաթուղթը կարող է տեսանելի լինել, բայց հնարավոր չլինի տպագրել, կամ կարող է օգտագործվել միայն որոշակի սահմանափակ ժամկետում:

միայն ցածրորակ տարբերակների օգտագործման թույլատրում. օրինակ, գործարարները կարող են իրենց ինտերնետային կայքում լուսանկարներ կամ այլ պատկերներ տեղադրել բավարար մանրամասներով որոշելու՝ արդյոք դրանք կարող են օգտակար լինել, օրինակ գովազդային նախագծի համար, բայց անբավարար որակով ու մանրամասներով՝ ամսագրում վերարտադրելն անհնար դարձնելու համար:

«Սմարթ Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Երեւանում գրանցված իրավաբանական անձ է եւ իրականացնում է տարբեր ոլորտներում ծրագրային ապահովման մշակում: Ծրագրերը կրում են «Սմարթ Սիսթեմս» ընկերության լոգոն, որը գրանցված է ՀՀ Մտավոր սեփականության գործակալությունում՝

«Սմարթ Սիսթեմս»-ի համակարգչային ծրագրի յուրաքանչյուր օրինակը պարունակում է օգտագործողի համար նախատեսված լիցենզիա, որտեղ **նշվում է, որ ծրագիրը պահպանված** է հեղինակային իրավունքով եւ արգելվում է պահեստային օրինակ պատրաստելուց զատ՝ դրա ամբողջությամբ կամ մասամբ կրկնօրինակումը կամ վերարտադրումը այլ նպատակներով:

«Սմարթ Սիսթեմս»-ը համակարգչային ծրագրերը օգտագործողին է տրամադրում գրավոր լիցենզային պայմանագրի հիման վրա: Նախքան պայմանագիր ստորագրելը կողմերը մանրամասնորեն քննարկում են օգտագործման հետ կապված պայմանագրի կետերը եւ գալիս ընդհանուր հայտարարի:

Ընկերությունը իրականացնում է ծրագրի ներդրումը գնորդի համակարգիչներում, կազմակերպում է կարճաժամկետ դասընթացներ աշխատակազմի համապատասխան աշխատողների համար, իրականացնում ծրագրերի վեց ամիս տեվողությամբ սպասարկում:

«Սմարթ Սիսթեմս»-ը տեղյակ է, որ մտավոր սեփականության իրավունքների, մասնավորապես՝ համակարգչային ծրագրերի հետ կապված խախտումները շատ հաճախ են տեղի ունենում եւ այդ իսկ պատճառով միաժամանակ մշակել է նաեւ իր իրավունքները պաշտպանելու ռազմավարություն: Նախ՝ «Սմարթ Սիսթեմս»-ը իր ծրագրերում տեղադրել է մի շարք **տեխնիկական մեխանիզմներ,** որոնք կանխում են այդ ծրագրի հեշտությամբ կրկնօրինակումը: Երկրորդ՝ «Սմարթ Սիսթեմս»“-ը իր ուշադրության կենտրոնում է պահում **վաճառքից հետո** արտադրանքի նկատմամբ մատուցվող իր ծառայությունների որակը, իսկ ծրա-

գրի հնարավոր բարեփոխումների կամ թարմացումների դեպքում դրանք տրամադրվում են գնորդին զգալիորեն մատչելի գնով: Իր արտադրանքի շարունակաբար **նորացված ու թարմացված տարբերակները** տրամադրում է իր գնորդներին զգալի արտոնություններով: Այս քայլը նպաստում է, որ գնորդները անօրինական (պիրատական) ծրագրերի փոխարեն նախընտրեն լիցենզավորված արտադրանքը եւ գերադասեն գնել այն մատուցվող գնով: Ընկերության որակյալ սպասարկումն ու բացատրական աշխատանքների բարեխիղճ և բարյացակամ իրականացումը գրավում է գնորդին նորից «Սմարթ Սիսթեմս» ՍՊԸ-ին դիմելու ակնկալիքով:

Ինչպիսի պահպանություն եք վայելում արտասահմանում

Շատ երկրներ անդամակցում են մեկ կամ մի քանի միջազգային պայմանագրերի՝ նպատակ ունենալով ապահովելու հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործությունների **ինքնաբերաբար պահպանությունը պայմանագրի անդամ երկրների տարածքներում:**

Հեղինակային իրավունքի ամենակարեւոր միջազգային պայմանագիրը **Գրական եւ Գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիան է**: Կոնվենցիան նախատեսում է հեղինակների իրավունքների նույնպիսի պահպանություն անդամ մյուս երկրների տարածքներում, ինչպիսին նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ իր քաղաքացիների կամ մշտական բնակիչների համար:

Այնուամենայնիվ հեղինակային իրավունքն իր բնույթով մնում է **տարածքային** իրավունք: Ձեր ստեղծագործությունը կարող է պահպանվել տվյալ երկրի տարածքում, եթե **համապատասխանում է տվյալ երկրի հեղինակային իրավունքի օրենսդրության պահանջներին:**

Հայաստանը վավերացրել է Բեռնի կոնվենցիան 2000 թվականի հոկտեմբերի 19-ին:

Արդյո՞ք պարտադիր է ստեղծագործության վրա հեղինակային իրավունքի մասին ծանուցում տեղադրելը

Հայաստանի Օրենքը նշում է, որ հեղինակային իրավունքն առաջանում է ստեղծագործության ստեղծման փաստով եւ չի պարտադրում, որ պահպանություն ստանալու համար ստեղծագործության վրա տեղադրված լինի հեղինակային իրավունքի մասին ծանուցում: Սակայն 9-րդ հոդվածը նշում

է, որ բացառիկ գույքային իրավունքները տիրապետող անձը հեղինակային իրավունքի մասին **ծանուցելու նպատակով** կարող է ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա օգտագործել **հեղինակային իրավունքի պահպանության նշանը՝ ©**, քանի որ այն տեղեկացնում է , որ ստեղծագործությունը պահպանվում է եւ նշում է գույքային իրավունքները կրող անձին: Այդպիսի նշումը օգնում է նաեւ ստեղծագործությունն օգտագործելու ցանկություն ունեցող անձանց իրավատիրոջ թույլտվությունը նախապես ձեռք բերելու գործում:

Հեղինակային իրավունքի մասին ծանուցման տեղադրումը արդյունավետ պահպանություն է ապահովում: Այն լրացուցիչ էական ծախսեր չի պահանջում, սակայն կարող է հետ պահել այլ անձանց ձեր ստեղծագործությունը կրկնօրինակելուց, ինչպես նաեւ հեշտացնել ստեղծագործության օգտագործման համար իրավատերերից նախնական թույլտվության ձեռքբերման գործընթացը:

Որոշ երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, ստեղծագործության վրա տեղադրված ծանուցումը նշանակում է, որ խախտողը տեղեկացված է ստեղծագործության հեղինակային իրավունքի պահպանված լինելու մասին եւ դատարանը, այդ հանգամանքը հաշվի առնելով, իրավախախտողից էլ ավելի բարձր տուգանքներ է գանձում, քան առանց գիտակցելու անմեղ խախտման դեպքերում:

Ստեղծագործության վրա ծանուցումը տեղադրելու հատուկ գործընթաց չկա, այն կարող է ձեռքով գրվել, տպագրվել, դրոշմվել կամ նկարվել: Հեղինակային իրավունքի մասին ծանուցումը սովորաբար բաղկացած է հեղինակային իրավունքի պահպանության նշանից, որը տեղադրվում է ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա եւ կազմված է՝

- շրջանագծի մեջ վերցված լատինական © տառից.
- բացառիկ գույքային իրավունքները տիրապետող անձի անունից կամ անվանումից.
- ստեղծագործության առաջին լույսընծայման տարեթվից,

Օրինակ՝ © ՋԵՓՅՈՒՌ ՍՊԸ, 2006:

Եթե դուք կատարել եք ստեղծագործության էական փոփոխություններ, խորհուրդ է տրվում թարմացնել նաեւ հեղինակային իրավունքի մասին ծանուցումը՝ ավելացնելով այն տարեթիվը, որում կատարվել է

փոփոխությունը: Օրինակ «2000, 2002, 2004» տարեթվերը ցույց են տալիս, որ ստեղծագործությունը ստեղծվել է 2000 թվականին եւ փոփոխվել 2002, 2004 թվականներին:

Եթե ստեղծագործությունը հաճախակի է փոփոխվում, ինչպես օրինակ ինտերնետային կայքի բովանդակությունը, ապա կարելի է ընդգրկել առաջին հրատարակության տարեթվից մինչեւ ներկա տարեթիվը, **օրինակ՝ © ԶԵՓՅՈՒՌ ՍՊԸ, 1998-2006:** Խորհուրդ է տրվում ծանուցման մեջ ավելացնել նաեւ այն գործողությունների ցանկը, որոնք չեն կարող առանց թույլտվության կատարվել:

Հայաստանի Օրենքի 52-րդ հոդվածը սահմանում է, որ հարակից իրավունքների ծագման եւ իրագործման համար գրանցում կամ որևէ այլ գործողություն չի պահանջվում: Հնչյունագիր արտադրողների հարակից իրավունքների մասին ծանուցելու նպատակով ամրագրման կրիչի յուրաքանչյուր օրինակի կամ դա պարունակող տուփի վրա կարող է դրվել հարակից իրավունքների պահպանության նշանը, որը կազմված է՝

- շրջանագծի մեջ վերցված լատինական «P» տառից.
- հարակից իրավունքների իրավատիրոջ անունից կամ անվանումից.
- հնչյունագրի առաջին լույսընծայման տարեթվից:

Ինտերնետային կայքերի նկատմամբ հեղինակային իրավունքը

Ինտերնետային կայքերը պարունակում են բազմաթիվ հեղինակային ստեղծագործությունների միացություններ, ինչպես գրաֆիկան, տեքստերը, երաժշտությունը, լուսանկարները, տվյալների բազաները, տեսագրությունները, համակարգչային ծրագրերը, HTML կոդը, որն օգտագործվել է ինտերնետային կայքը ձեւավորելու համար եւ այլն:

Հեղինակային իրավունքը կարող է պահպանել այս տարրերը առանձին, օրինակ ինտերնետային կայքում տեղադրված հոդվածը կարող է ունենալ իր առանձին հեղինակային իրավունքը: Հեղինակային իրավունքը կարող է պահպանել նաեւ այն հատուկ ձեւը, ըստ որի այս առանձին տարրերը ընտրվել եւ դասավորվել են ընդհանուր ամբողջական կայքը ձեւավորելու համար: Մանրամասն տեղեկությունների համար տես՝ www.wipo.int./sme/en/documents/business_website.htm

4.ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ

Արդյոք մի՞շտ է հեղինակը տիրապետում ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

«Հեղինակություն» եւ «սեփականություն» բառերի իմաստը շատ հաճախ ճիշտ չեն հասկանում: Ստեղծագործության **հեղինակը** այն ստեղծող անձն է: Եթե ստեղծագործությունը ստեղծվել է մեկից ավելի անձանց կողմից, ապա այդ անձինք համարվում են համահեղինակներ: Հեղինակության խնդիրը կարեւոր է հատկապես անձնական ոչ գույքային իրավունքների եւ իրավունքների գործողության ժամկետի ավարտը որոշելու տեսակետից: Հեղինակային իրավունքի տիրապետումը այլ խնդիր է. ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը **տիրապետողը** այն անձն է, ով բացառիկ իրավունք ունի օգտագործել ստեղծագործությունը՝ վաճառել, կրկնօրինակել, ածանցյալ ստեղծագործություններ ստեղծել եւ այլն: Սովորաբար ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ի սկզբանե պատկանում է այն անձին, ով ստեղծել է այն, այսինքն՝ հեղինակին: Սակայն այս կանոնից շեղումներ կարող են լինել հետեւյալ դեպքերում՝

- երբ ստեղծագործությունը ստեղծվել է աշխատողի կողմից որպես իր աշխատանքի մաս,
- երբ ստեղծագործությունը ստեղծվել է վարձու աշխատանքով կամ հատուկ պատվերով,
- երբ ստեղծագործությունը ստեղծվել է մի քանի անձանց կողմից:

Հայաստանի Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կարող են **պայմանագրով փոխանցվել (զիջվել) այլ անձի:** Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները այլ անձի զիջելու վերաբերյալ պայմանագրի հիման վրա հեղինակի գույքային իրավունքները տիրապետող է դառնում այն անձը, ում զիջվել են իրավունքները:

Ում են պատկանում անձնական ոչ գույքային իրավունքները

Անձնական ոչ գույքային իրավունքները մշտապես տիրապետում է միայն հեղինակը կամ նրա ժառանգը: Հայաստանի Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են եւ պահպանվում են անժամկետ,

բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում:

Սակայն որոշ երկրներում հեղինակը անձնական ոչ գույքային իրավունքներից կարող է հրաժարվել:

Իրավաբանական անձինք անձնական ոչ գույքային իրավունքներ չեն կարող ունենալ: **Օրինակ,** եթե ֆիլմի պրոդյուսերը ընկերություն է, ապա միայն ֆիլմի ռեժիսորը եւ սցենարի հեղինակը կարող են ունենալ ֆիլմի նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքներ:

Ում է պատկանում ծառայողի կողմից ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

Օրենքի 33-րդ հոդվածը կարգավորում է ծառայողական ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը: Համաձայն այդ հոդվածի՝ գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով ծառայողի կողմից ստեղծված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են գործատուին, եթե հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագիրը կարող է ծառայողական ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր ձեւի համար նախատեսել հեղինակին հասանելիք վարձատրություն, դրա հաշվարկման ու վճարման կարգը եւ պարունակել ստեղծագործության օգտագործման այլ պայմաններ: Այսինքն՝ գույքային իրավունքները ինքնաբերաբար չեն անցնում գործատուին, այլ կախված են նրանց միջեւ կնքված պայմանագրով որոշված պայմաններից:

Օրինակ՝ *համակարգչային ծրագրավորողը աշխատանքի է ընդունվել աուդիտ ընկերությունում եւ աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների համաձայն պետք է ընկերության համար ստեղծի եվ կատարելագործի հաշվապահական ծրագրեր: Ծրագրավորողն իր հիմնական աշխատանքից զատ աշխատանքային ժամերի ընթացքում, ընկերության համակարգչի օգնությամբ ստեղծում է մանկական էլեկտրոնային նկարազարդ գրքույկ, որտեղ կան նաեւ անգույն նկարազարդ էջեր: Անգույն նկարները պետք է համակարգչի օգնությամբ նկարազարդի երեխան, առաջնորդվելով նկարազարդման վերաբերյալ գրքի բացատրական ուղեցույցից:*

Այս դեպքում հաշվապահական ծրագրերի վերաբերյալ գույքային իրավունքները պատկանում են ընկերությանը որպես աշխատանքային պայմանագրով ուղղակի նախատեսված պարտականություն, իսկ մանկական նկարազարդ գրքույկի նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են գրքույկի հեղինակին, քանի որ այդպիսի գրքույկի ստեղծումը նախատեսված չի եղել հեղինակի աշխատանքային պայմանագրով: Վեճի առարկա կլինի գիրքը ստեղծելու ժամանակ ընկերության միջոցների օգտագործումը: Նման իրավիճակներից խուսափելու ամենաճիշտ ձեւը հստակ պայմանագրի կնքումն է:

Վեճեր կարող են առաջանել, երբ աշխատողը աշխատանքը կատարում է տանը, աշխատանքային ժամերից դուրս կամ ստեղծում է ստեղծագործությունը իր աշխատանքային պարտականությունների շրջանակից դուրս: Այսպիսի դեպքերում ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են աշխատողին, քանի որ աշխատողն այն ստեղծել է ոչ որպես աշխատանքային պայմանագրով իրեն տրված հանձնարարություն: Այդ պատճառով վեճերից խուսափելու չափազանց լավ միջոց է աշխատողի հետ իր աշխատանքային պարտականությունների վերաբերյալ պայմանագրի կնքումը, որը հստակ կկարգավորի հեղինակային իրավունքին առնչվող հարաբերությունները այդպիսիք լինելու դեպքում:

Ով է տիրապետում պատվիրված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

Իրավիճակն այլ է, եթե ստեղծագործությունը ստեղծվել է պատվերի պայմանագրով, դրսից հրավիրված խորհրդատուի կամ ստեղծագործական խմբի կողմից: Շատ երկրներում պատվերով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետում է ստեղծագործողը, իսկ պատվիրատուն ձեռք է բերում միայն պատվիրված ստեղծագործությունը այն նպատակով օգտագործելու թույլտվություն, ըստ որի այն ստեղծվել է: Հայաստանի Օրենքով նախատեսված չեն պատվերի պայմանագրով ստեղծագործություններ ստեղծելու վերաբերյալ կոնկրետ դրույթներ: Այդ հարաբերությունները կարգավորվում են պատվիրատուի եւ ստեղծագործողի միջեւ կնքված պայմանագրով, որտեղ հստակ պետք է նշվի, թե ում են պատկանելու ստեղծված ստեղծա-

գործության նկատմամբ գույքային իրավունքները, վճարվող վարձատրության չափը եւ վճարման կարգը, այլ էական պայմաններ: Պատվերի պայմանագրով կարող է սահմանվել, որ պատվիրված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են պատվիրող անձին: Սակայն, եթե պայմանագրում չկա նման սահմանափակում, ապա պատվերով ստեղծված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են ստեղծագործությունը ստեղծող հեղինակին: Շատ կոմպոզիտորներ, լուսանկարիչներ, ազատ լրագրողներ, գրաֆիկական դիզայներներ, համակարգչային ծրագրավորողներ ու ինտերնետային կայքերի ձեւավորողներ աշխատում են այս սկզբունքով: **Տիրապետման հարցը շատ հաճախ առաջանում է պատվերով ստեղծված ստեղծագործությունը նույն կամ այլ նպատակով վերաօգտագործելու դեպքում:**

Օրինակ՝ *շինարարական ընկերությունը պայմանագրով հրավիրել է փորագրող վարպետի՝ շենքի պատուհանների կամարներին զարդանախշեր փորագրելու համար: Փորագրված զարդանախշերը բազմատեսակ են եւ չեն կրկնում իրար: Զարդանախշերի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է փորագրող վարպետին, եթե պայմանագրով այլ բան նախատես-*

Պետության պատվերով ստեղծված ստեղծագործություններ

Շատ երկրներում պետությունն է տիրապետում իր պատվերով կամ ցուցումով ստեղծված կամ առաջին անգամ հրատարակված ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը, եթե գրավոր պայմանագրով այլ բան որոշված չէ: Փոքր ձեռնարկությունները, որոնք ստեղծագործություններ են ստեղծում պետական մարմինների կամ գործակալությունների համար, պետք է իրազեկ լինեն այս կարգից եւ գրավոր պայմանագրով հստակ կարգավորեն հեղինակային իրավունքի տիրապետման հարցերը:

Հայաստանի Օրենքը պետության պատվերով ստեղծագործություններ ստեղծելու վերաբերյալ կոնկրետ պայմաններ չի նախատեսում: Այդ պայմանները եւ պատվիրված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների պատկանելության հարցերը կարգավորվում են պատվիրատուի եւ ստեղծագործողի միջեւ կնքված պայմանագրով:

ված չի եղել: Որոշ ժամանակ անց շինարարական ընկերությունը մտադրվում է այդ զարդանախշերն օգտագործել գորգերի վրա: Իհարկե օգտագործման այս նոր ձեւի համար շինարարական ընկերությունը պետք է ձեռք բերի փորագրող վարպետի համաձայնությունը, քանի որ ի սկզբանե զարդանախշերը նախատեսված են եղել ոչ թե գորգերի, այլ շենքի պատուհանների զարդարման համար:

Այնուամենայնիվ, կան որոշ բացառիկ դեպքեր, ինչպես օրինակ անձնական նպատակներով արված լուսանկարները, դիմանկարներն ու փորագրությունները, ձայնագրությունները, կինեմատոգրաֆիական ֆիլմերը, որտեղ, որոշ երկրներում, ստեղծագործությունը պատվիրող կողմը տիրապետում է նաեւ հեղինակային իրավունքը, եթե պայմանագրով այլ բան որոշված չէ:

Ինչպես նշվեց գործատու-աշխատող դեպքում, կարեւոր է, որ դուք գրավոր պայմանագրում, որը ուժի մեջ պետք է մտնի նախքան հրավիրված ստեղծագործական ծառայության պատվիրումը, նշեք հեղինակային իրավունքը տիրապետող անձին:

Վարձու աշխատանքով ստեղծված ստեղծագործություններ

Շատ երկրներում, ինչպիսին ԱՄՆ-ն է, հեղինակային իրավունքի մասին օրենքը սահմանում է ստեղծագործությունների կատեգորիա՝ «վարձու աշխատողի կողմից ստեղծված ստեղծագործություններ»: Վարձու աշխատանքով ստեղծված ստեղծագործությունները ստեղծվում են աշխատողի կողմից որպես աշխատանքային պարտականություն կամ պատվերի պայմանագրով: Վարձու աշխատանքով ստեղծված ստեղծագործության դեպքում հեղինակային իրավունքը տիրապետում է ոչ թե ստեղծագործություն ստեղծող անձը, այլ այն սուբյեկտը, որը վճարում է դրա համար: Սուբյեկտը կարող է լինել ֆիրմա, կազմակերպություն կամ անհատ:

Ում է պատկանում մի քանի հեղինակների կողմից ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

Հայաստանի Օրենքի համահեղինակության մասին 7-րդ հոդվածի համաձայն՝

** երկու կամ ավելի անձանց համատեղ ստեղծագործական աշխատանքով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է **համահեղինակներին համատեղ**՝ անկախ ստեղծագործության կառուցվածքից:

Համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործության առանձին մասը համարվում է ինքնուրույն նշանակություն ունեցող, եթե դա կարող է օգտագործվել ստեղծագործության մյուս մասերից անկախ:

Համահեղինակներից յուրաքանչյուրն իրավունք ունի ստեղծագործության իր ստեղծած ինքնուրույն նշանակություն ունեցող մասն օգտագործելու իր հայեցողությամբ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջեւ **կնքված գրավոր պայմանագրով:**

Համատեղ ստեղծագործության օրինակ է դասագիրքը, որտեղ երկու կամ ավելի հեղինակներ ներդնում են առանձին մասեր, որոնք նախատեսվում են միավորել մեկ ստեղծագործության մեջ: Համատեղ ստեղծագործության դեպքում ներդրում կատարող հեղինակները դառնում են ամբողջական ստեղծագործության համատեղ սեփականատերեր՝ համահեղինակներ: Համահեղինակների կամ հեղինակային իրավունքը տիրապետողների միջեւ գրավոր պայմանագիրը սովորաբար գործողությունների կատարման լավագույն ուղեցույցն է, սահմանելու տիրապետման կամ օգտագործման հարցերը՝ ստեղծագործությունը վերափոխելու, շուկան հետազոտելու եւ ցանկացած եկամուտները կիսելու վերաբերյալ, ինչպես նաեւ երաշխիքներ՝ հեղինակային իրավունքի խախտումների դեմ:

** **Կոլեկտիվ ստեղծագործություններ.** Եթե հեղինակները համաձայն չեն, որ իրենց ստեղծագործությունը համարվի համահեղինակությամբ ստեղծված գործ եւ ուզում են իրենց ներդրումներն օգտագործել առանձին, որպես ինքնուրույն ստեղծագործություն, ապա այդ ստեղծագործությունները համարվում են «կոլեկտիվ ստեղծագործություններ»: Կոլեկտիվ ստեղծագործության օրինակ է խմբասկավառակը, որը իրենից ներ-

կայացնում է տարբեր հեղինակների երգերի ժողովածու, կամ տարբեր ազատ լրագրողների ստեղծագործություններ պարունակող ամսագիրը: Այսպիսի դեպքում **յուրաքանչյուր հեղինակ տնօրինում է իր կողմից ստեղծված մասի նկատմամբ հեղինակային իրավունքը:**

- **Ածանցյալ ստեղծագործություններ**. Ածանցյալ ստեղծագործությունները նրանք են, որոնք ստեղծվել են նախկինում արդեն գոյություն ունեցող որեւ ստեղծագործության հիման վրա, օրինակ՝ թարգմանությունը, երաժշտական վերամշակում/վերադաշնակումը, արվեստի ստեղծագործության վերարտադրությունը, գրական վեպի բեմականացումն ու կինեմատոգրաֆիական ստեղծագործության վերափոխումը: **Ածանցյալ ստեղծագործություն ստեղծելու թույլտվությունը հեղինակային իրավունքը տիրապետող անձի բացառիկ իրավունքն է:**

Հայաստանի Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ածանցյալ ստեղծագործությունները նույնպես հեղինակային իրավունքի օբյեկտ են, մասնավորապես՝

- այլ ստեղծագործությունների թարգմանությունները, ադապտացիաները, փոխադրումները, դաշնավորումներն ու վերադաշնավորումները, մշակումներն ու վերամշակումները, բեմականացումները, կինեմատոգրաֆիական վերափոխումները եւ գրականության, գիտության, արվեստի ստեղծագործությունների այլ վերափոխումները,
- ստեղծագործությունների ժողովածուները (հանրագիտարանները, անթոլոգիաները), տվյալների բազաները եւ այլ կազմածո ստեղծագործությունները, որոնք ըստ իրենց պարունակության ընտրության եւ/կամ տեղաբաշխման ստեղծագործական աշխատանքի արդյունք են:

ԲԱԺԻՆ 5. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԸ

Ինչպես կարող եք եկամուտ ստանալ ձեր ստեղծագործական աշխատանքից

Եթե ձեր ընկերությունը տիրապետում է ստեղծագործության ընկատմամբ հեղինակային իրավունքը, ապա դուք ինքնաբերաբար ձեռք եք բերում նաեւ բացառիկ իրավունքների ամբողջական փաթեթը: Սա նշանակում է, որ միայն ձեր ընկերությունը կարող է վերարտադրել պահպանվող ստեղծագործությունը, վաճառել կամ վարձույ-

թով տալ ստեղծագործության օրինակները, ստեղծել ածանցյալ ստեղծագործություններ, ստեղծագործությունը հրապարակայնորեն կատարել կամ ցուցադրել, ինչպես նաեւ կատարել նմանատիպ այլ գործողություններ:

Եթե այլ անձինք ուզում են օգտագործել կամ եկամուտ ստանալ հեղինակային իրավունքով պահպանվող ձեր նյութերից, դուք կարող եք վճարի դիմաց օգտագործման թույլտվություն տալ կամ վաճառել նյութերը կամ դրա որոշակի մասը, բացառիկ իրավունքների մասը կամ ամբողջ փաթեթը:

Վարձատրությունը կարող է լինել միանվագ կամ պարբերաբար: Սա կարող է ավելի եկամտաբեր լինել ձեր գործունեության համար եւ ավելացնել ձեր օգուտները, քան ձեր հեղինակային իրավունքի ուղղակի շահագործումը հեղինակի, ստեղծագործողի կամ հեղինակային իրավունքը տիրապետողի կողմից:

Բացառիկ իրավունքները կարող են ցանկացած ձեւով առանձին առանձին բաժանվել կամ ամբողջությամբ լիցենզային պայմանագրով փոխանցվել կամ վաճառվել այլ անձանց: Լիցենզային պայմանագրով օգտագործողին է փոխանցվում ստեղծագործությունը որոշակի ժամկետում, որոշակի տարածքում, որոշակի լեզվով (թարգմանության), որոշակի եղանակով օգտագործելու բացառիկ իրավունքը: Օրինակ, հեղինակային իրավունքը տիրապետող անձը կարող է ստեղծագործության նկատմամբ իրավունքներն ամբողջությամբ փոխանցել կամ վաճառել հրատարակության իրավունքը հրատարակչին, ֆիլմ նկարահանելու իրավունքը՝ կինոընկերությանը, ստեղծագործությունը հեռարձակելու իրավունքը՝ ռադիոկայանին, ստեղծագործության բեմականացման կամ պիեսի վերափոխման իրավունքը՝ թատերական կամ հեռուստատեսային ընկերություններին:

Ստեղծագործությունները վաճառելու տարբեր ձեւեր կան.

- Դուք կարող եք պարզապես **վաճառել** հեղինակային իրավունքով պահպանվող **ստեղծագործությունը կամ վերարտադրել դրա օրինակներն** ու դրանք վաճառել:

Երկու դեպքում էլ դուք պահպանում եք իրավունքների մեծ մասը կամ հեղինակային իրավունքի տիրապետումից բխող իրավունքներն ամբողջությամբ (տես հաջորդ պարբերությունը),

- դուք կարող եք որեւէ մեկին **թույլ տալ վերարտադրել կամ այլ**

ձեւով օգտագործել ստեղծագործությունը: Դա կարող եք անել ստեղծագործության նկատմամբ ձեր գույքային իրավունքները **լիցենզային պայմանագրով այլ անձին փոխանցելու,** կամ

❋ կարող եք **վաճառել կամ զիջել ստեղծագործության նկատմամբ ձեր հեղինակային իրավունքը** մասամբ կամ ամբողջությամբ:

Արդյոք դուք զրկվում եք հեղինակային իրավունքից ստեղծագործությունը վաճառելու դեպքում:

Հեղինակային իրավունքը գոյություն ունի անկախ ստեղծագործությունը կրող նյութական կրիչի նկատմամբ սեփականության իրավունքից: Հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործության (օրինակ համակարգչային ծրագիր կամ ձեռագիր) պարզապես վաճառքը չի նշանակում, որ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ինքնաբերաբար փոխանցվում է գնորդին: Սովորաբար **ստեղծագործության նկատմամբ իրավունքները պատկանում են հեղինակին, եթե նա գրավոր պայմանագրով այդ իրավունքները գնորդին չի փոխանցում:** Այնուամենայնիվ, որոշ երկրներում, եթե դուք վաճառում եք ստեղծագործության օրինակը կամ բնօրինակը (օրինակ՝ նկարը), դուք կարող եք կորցնել ձեզ պատկանող որոշ բացառիկ իրավունքներ: Օրինակ, ստեղծագործության օրինակը գնող անձը իրավասու է հետագայում տնօրինել օրինակն իր հայեցողությամբ՝ վաճառել կամ այլ անձի փոխանցել այն:

Հայաստանի Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակի կողմից կերպարվեստի ստեղծագործության նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը այլ անձի համարվում է ստեղծագործության նկատմամբ սեփականության իրավունքի առաջին օտարում: Կերպարվեստի ստեղծագործության **հեղինակը օգտվում է** իր կողմից օտարված կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը սեփականատիրոջ կողմից, կամ աճուրդասրահի, պատկերասրահի, գեղարվեստական սրահի, խանութի կամ այլ գործակալի միջոցով վաճառքի մասին **տեղեկացվելու** եւ յուրաքանչյուր **վերավաճառքի գնի հինգ տոկոսը վաճառողից ստանալու անօտարելի իրավունքից (վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունք):**

Կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը վաճառող սեփականատերը պատասխանատու է հեղինակին հասանելիք վարձատրու-

թյան վճարման համար: Եթե վաճառքն իրականացվել է նշված կազմակերպությունների կամ որեւէ գործակալի միջոցով, ապա սեփականատիրոջ հետ պատասխանատվություն են կրում նաեւ նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:

Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի կիրարկումն իրականացվում է վաճառքի գնի 250.000 դրամից սկսած:

Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքից կարող են օգտվել օտարերկրյա պետությունների քաղաքացիները՝ փոխադարձության սկզբունքով, այսինքն՝ եթե իրենց երկրի օրենսդրությունն էլ է նախատեսում նույնանման դրույթ եւ Հայաստանի ու այդ երկրի միջեւ կնքված է փոխադարձ պահպանության պայմանագիր:

Ինչ է հեղինակային իրավունքի լիցենզիան

Լիցենզիան թույլտվություն է, որ տրվում է ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց՝ հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության նկատմամբ ձեր գույքային իրավունքներից մեկը կամ երկուսը կիրարկելու նպատակով: Լիցենզավորման առավելությունն այն է, որ այլ անձանց ստեղծագործության օրինակներ պատրաստելու, տարածելու, ներբեռնելու (download), հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հեռարձակելու կամ համակարգչային ցանցերով հաղորդելու եւ միաժամանակյա վերահաղորդելու, ածանցյալ ստեղծագործություն պատրաստելու թույլտվություն տալիս ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետող անձ մնում եք դուք, պահպանելով նաեւ վարձատրություն ստանալու ձեր իրավունքը:

Լիցենզային պայմանագիրը կարգավորում է կողմերի առանձնահատուկ պահանջները: Դուք կարող եք լիցենզավորել ոչ թե բոլոր, այլ որոշ գույքային իրավունքներ: Օրինակ համակարգչային խաղը կրկնօրինակելու եւ օգտագործելու իրավունքը լիցենզավորելիս դուք պահպանում եք դրանից ածանցյալ ստեղծագործություն, ասենք՝ ֆիլմ ստեղծելու իրավունքը:



Լիցենզիան պետք է լինի միայն գրավոր

Ինչ տարբերություն կա բացառիկ եվ ոչ բացառիկ լիցենզիաների միջեւ

Լիցենզիան կարող է լինել բացառիկ եւ ոչ բացառիկ: Եթե դուք բացառիկ լիցենզիա եք տալիս, միայն լիցենզառուն բացառիկ իրավունք ունի օգտագործել ստեղծագործությունը լիցենզիայով նախատեսված ձեւով:

Հայաստանի Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն բացառիկ լիցենզիան իրավական ուժ ունենալու համար պետք է լինի գրավոր: Որեւէ մարմնում այն գրանցելու անհրաժեշտություն չի պահանջվում:Բացառիկ լիցենզիան կարող է սահմանափակվել որոշված տարածքով, ժամանակով, նախատեսված նպատակներով: Բացառիկ լիցենզիաները հաճախ գործարարության լավ ռազմավարություն են հեղինակային իրավունքով պահպանվող արտադրանքը շուկայում տարածելու ու վաճառելու համար, եթե դուք ձեր աշխատանքը ինքնուրույն հետազոտելու ու արդյունավետ կազմակերպելու միջոցներ չունեք:

Մյուս կողմից, եթե դուք ոչ բացառիկ լիցենզիա եք տրամադրում ընկերությանը, ապա ընկերությանը իրավունք եք տալիս կիրարկել ձեր բացառիկ իրավունքներից մի քանիսը, բայց սա չի կարող արգելել ձեզ տրամադրել նույն իրավունքները նաեւ այլ անձանց: Այսպիսով, դուք կարող եք որոշակի թվով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունք տալ օգտագործել, պատճենել կամ տարածել ձեր ստեղծագործությունը: Հայաստանի Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն լիցենզիան (հեղինակային պայմանագիրը) կնքվում է գրավոր: Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն իրավատիրոջից հեղինակային պայմանագրով ձեռք բերված թույլտվության սահմաններում: Հեղինակային պայմանագիրը կարգավորում է իրավատիրոջ ու ստեղծագործության օգտագործման թույլտվություն ստացած անձի, այսինքն՝ օգտագործողի փոխհարաբերությունները եւ նախատեսում է վարձատրություն:

Ինչ է տեղի ունենում, երբ վաճառում եք ձեր հեղինակային իրավունքը

Լիցենզիա տրամադրելուն հավասարազոր տարբերակ է նաեւ ձեր ստեղծագործության նկատմամբ ունեցած հեղինակային իրավունքը այլ անձի վաճառելը, ով հետագայում կդառնա ստեղծագոր-

ծության հեղինակային իրավունքի նոր տիրապետողը:
Սեփականության իրավունքի փոխանցման այս ձեւը անվանվում է «զիջում»: Եթե լիցենզիան միայն որեւէ գործողություն անելու իրավունք է տալիս, որը լիցենզիայի բացակայության դեպքում կհամարվեր անօրինական, ապա զիջումը փոխանցում է իրավունքներն ամբողջությամբ: Դուք կարող եք փոխանցել ստեղծագործության նկատմամբ ձեր ունեցած իրավունքների փաթեթն ամբողջությամբ կամ դրանց մի մասը: Հայաստանում Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն հեղինակի գույքային իրավունքները կարող են գրավոր պայմանագրով փոխանցվել (զիջվել) այլ անձի: Այդ պայմանագրերը որեւէ մարմնում գրանցելու անհրաժեշտություն չի պահանջվում: Եւ պետք է հիշել, որ զիջել կարելի է միայն գույքային իրավունքները, քանի որ անձնական ոչ գույքային իրավունքներն ընդմիշտ պատկանում են հեղինակին:

Լիցենզավորման ռազմավարությունը.

Լիցենզիա տալով դուք Լիցենզառուին թույլ եք տալիս կատարել պայմանագրով նախատեսված որոշակի գործողություններ, որոնք պայմանագրի բացակայության դեպքում կհամարվեին անթույլատրելի: Այդ իսկ պատճառով կարևոր է հստակ որոշել լիցենզային պայմանագրով թույլատրվող գործողությունների հնարավորինս ճշգրիտ շրջանակը: **Ընդհանրապես ճիշտ կլինի լիցենզիա տրամադրելիս հաշվի առնել լիցենզառուի շահերն ու գործողությունների շրջանակը**: Ոչ բացառիկ լիցենզիայի տրամադրումը հնարավորություն է տալիս ցանկացած թվով լիցենզիա տրամադրել հետաքրքրված այլ օգտագործողներին՝ նույն կամ այլ նպատակների համար, նույն կամ նմանատիպ պայմաններով ու ժամկետներում: Երբեմն ստեղծագործության նկատմամբ բացարձակ հսկողությունը գործատուի համար նշանակում է գործարարության ապահովում կամ հանդիսանում է նրա գործարարության ռազմավարության էական մաս: Այդպիսի իրավիճակներում բացառիկ լիցենզիան կամ ձեր բոլոր իրավունքների զիջումը միանվագ վճարի դիմաց կարող է ամենալավ գործարքը համարվել: Դուք պետք է հաշվի առնեք այդ բանակցությունները միայն հնարավոր բոլոր տարբերակները սպառելուց հետո եվ համոզված լինեք, որ դրա համար ստացել եք համապատասխան վարձատրություն: Եթե դուք մեկ անգամ զիջում եք ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքներն այլ անձի, ապա կորցնում եք նաեւ դրա օգտագործման դիմաց հետագա ֆինանսական օգուտ կամ եկամուտ ստանալու հնարավորությունները:

Մտավոր սեփականության իրավունքների վաճառքը

Մտավոր սեփականության իրավունքների վաճառքը իրենից ներկայացնում է ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի կամ հեղինակային իրավունքի օբյեկտների պատկերների օգտագործում սպառման ապրանքների վրա՝ նրան սպառողների աչքում գրավչություն հաղորդելու նպատակով: Կոմիքսների (նկարներով արտահայտված պատմվածքներ), դերասանների, փոփ աստղերի, սպորտի ոլորտում նշանավոր դեմքերի, արվեստի հանրահայտ նկարների, արձանների եւ շատ այլ օբյեկտների պատկերները օգտագործվում են մի շարք ապրանքների վրա, (օրինակ՝ սպորտային հագուստները, խաղալիքները, սուրճի գավաթները, ազդագրերը): Սպառման ապրանքների վրա հեղինակային իրավունքի օբյեկտների պատկերների տպել/տեղադրելը կարող է շատ ձեռնարկատերերի համար շահութաբեր գործ լինել եւ եկամտի աղբյուր հանդիսանալ.

- այն ձեռնարկությունները, որոնք տիրապետում են ստեղծագործությունների (օրինակ կոմիքսների, լուսանկարների) նկատմամբ հեղինակային իրավունքը, կարող են չափազանց շահավետ պայմաններով հեղինակային իրավունքի վաճառքի լիցենզիա տալ պոտենցիալ արտադրողներին եւ ստանալ լիցենզային շահավետ վարձատրություն ու հոնորար: Այն ձեռնարկատերերին թույլ է տալիս նաեւ բարձր եկամուտներ ստանալ նոր ապրանքատեսակների շուկայում, ռիսկի գործոնից համեմատաբար ազատ ու նպատակահարմար գին սահմանելու միջոցով:
- ընկերությունները, որոնք զանգվածային սպառման էժան ապրանքներ են արտադրում՝ ինչպես սուրճի գավաթներ, կոնֆետներ կամ թենիսի կամ ֆուտբոլի խաղազգեստներ, կարող են իրենց ապրանքն ավելի գեղեցիկ, աչքի ընկնող կամ գրավիչ դարձնել՝ դրանց վրա տեղադրելով հանրահայտ նշանների, հայտնի կերպարների, գեղարվեստական ստեղծագործությունների պատկերներ կամ գեղեցիկ այլ էլեմենտներ: Այն ձեռնարկությունները, որոնք իրենց կողմից արտադրվող ապրանքների վրա պատրաստվում են օգտագործել հանրահայտ անձանց պատկերներ կամ կերպարներ, մտավոր սեփականության օբյեկտների պատկերներ, պետք է նախապես թույլտվություն ձեռք բերեն մտավոր սեփականության նկատմամբ տարբեր գույքային իրավունքներն օգտագործելու համար (օրինակ պահպանվող ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը, ապրանքային նշանի կամ

նմուշի նկատմամբ իրավունքը):

Հատուկ զգուշություն է պահանջվում այն ձեռնարկություններից, որոնք իրենց ապրանքների վրա ծրագրում են օգտագործել հանրահայտ անձանց դիմանկարներ, քանի որ այս դեպքերում գործ ունենք մարդու իրավունքների խախտման հետ եւ անհրաժեշտ է նրանց պատկերներն օգտագործելուց առաջ թույլտվություն ստանալ այդ անձանցից:

Ինչպես լիցենզավորեք ձեր ստեղծագործությունների օգտագործումը

Որպես հեղինակային կամ հարակից իրավունքների օբյեկտը տիրապետող՝ միայն դուք կարող եք որոշել, ինչպես եւ ում թույլ տալ ձեր ստեղծագործությունների օգտագործումը: Իրավատերերի կողմից ստեղծագործությունների օգտագործման լիցենզիաների տրամադրման տարբեր ձեւեր կան:

Անձամբ տրամադրել օգտագործման ցանկացած ձեւի համար լիցենզիա: Դուք կարող եք անձամբ բանակցել լիցենզային պայմանագրի պայմաններն ու ժամկետները յուրաքանչյուր լիցենզիառուի հետ առանձին կամ առաջարկել լիցենզիա ստանդարտ ժամկետներով ու պայմաններով, որոնք պետք է ընդունելի լինեն մյուս կողմի համար, եթե նրան հետաքրքրում է ձեր հեղինակային կամ հարակից իրավունքների օբյեկտի օգտագործումը: Ձեր բոլոր իրավունքների անձամբ կառավարումը շատ հաճախ ձեզանից կպահանջի կազմակերպչական զգալի աշխատանք ու ֆինանսական ծախսեր՝ շուկայի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, պոտենցիալ լիցենզառուներ որոնելու եւ կնքվելիք պայմանագրերի շուրջ բանակցելու համար: Այդ պատճառով դուք կարող եք վստահել ձեր իրավունքների կառավարումն ամբողջությամբ կամ մասամբ **լիցենզավորման գործում մասնագիտացված գործակալին կամ գործակալությանը,** ինչպիսիք են գրքի կամ հնչյունագրի հրատարակիչը/ արտադրողը, ով հետո լիցենզային պայմանագրեր կկնքի ձեր անունից: Լիցենզիաներ տրամադրելու գործով մասնագիտացված գործակալները ձեզանից շատ ավելի լավ կարող են գտնել հնարավոր լիցենզառուներին ու բանակցել նրանց հետ լիցենզիայի ավելի բարձր գների ու պայմանների շուրջ:

Գործնականում հաճախ շատ դժվար է հեղինակային կամ հարակից իրավունքների իրավատիրոջ, երբեմն նույնիսկ գործակալի համար հսկել իրենց ստեղծագործու-

թյունների տարբեր օգտագործումները: Եվ չափազանց դժվար է նաեւ օգտագործողների համար, ինչպիսիք են հեռուստառադիոկայանները, անհրաժեշտ թույլտվություն ձեռք բերելու նպատակով առանձին-առանձին կապվել յուրաքանչյուր հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ հետ: Այսպիսի դեպքում, երբ անհատապես լիցենզիաներ տալը դժվար է կամ անհնարին, շատ լավ տարբերակ է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների (ԿԿԿ) հետ համագործակցությունը, եթե ստեղծված է կոլեկտիվ կառավարող կազմակերպություն: Գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունները իրավատերերի անունից հսկում են որոշակի կատեգորիայի ստեղծագործությունների օգտագործումը, պատասխանատու են լիցենզային բանակցություններ վարելու եւ վարձատրություն հավաքելու համար: Դուք կարող եք ձեր երկրում համապատասխան կոլեկտիվ կառավարող կազմակերպության անդամ դառնալ, եթե կա այդպիսին:

Հայաստանում 2001 թվականին հեղինակների կողմից ստեղծվեց «Հեղինակների ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որը հետագայում (2004 թվականին) վերանվանվեց Հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության: Այն առայժմ միակն է Հայաստանում եւ իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի 2006թ. Օրենքի 63-64-րդ հոդվածների դրույթներին, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ին ընդունված «Հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի մասին» 506-Ն որոշմանն ու իր կանոնադրությանը համապատասխան:

«Հայհեղինակ»-ը կոլեկտիվ հիմունքներով կառավարում է երաժշտական (տեքստի ուղեկցությամբ եւ առանց դրա), դրամատիկական (պիեսներ, բեմականացումներ եւ դրանց թարգմանություններ), երաժշտադրամատիկական (օպերա, օպերետ, բալետ, մյուզիքլ) ստեղծագործությունների, ձայնատեսագրությունների նկատմամբ գույքային իրավունքները:

Համաձայն Օրենքի 63-րդ հոդվածի՝ կոլեկտիվ հիմունքներով **կարող են կառավարվել՝**

- հրապարակային կատարման,
- հանրությանը հաղորդման,
- ձայնատեսագրության միջոցով վերարտադրության,

- հեռարձակման եւ վերահեռարձակման,
- մալուխային կապով հաղորդման եւ վերահաղորդման գույքային իրավունքները:

Երաժշտական ստեղծագործությունների ու հնչյունագրերի թվային հաղորդումը լիցենզավորելու կոնկրետ սխեմա օրենքով նախատեսված չէ:

Ինչպես են գործում կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները

Կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները (ԿԿԿ) գործում են որպես միջնորդներ օգտագործողների եւ որոշակի թվով հեղինակային իրավունքի այն իրավատերերի միջեւ, ովքեր կազմակերպության անդամներ են: Սովորաբար նույն կատեգորիայի ստեղծագործությունների կոլեկտիվ կառավարման նպատակով ստեղծվում է մեկ կազմակերպություն:

Կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները ստեղծվում են ստեղծագործությունների միայն որոշ տեսակների համար, ինչպիսիք են ֆիլմերը, երաժշտությունը, լուսանկարչությունը, լուսապատճենումը (տպագիր արտադրանքի բոլոր տեսակների համար), հեռուստա եւ տեսաֆիլմերը, կերպարվեստը: Կազմակերպությանն անդամագրվելիս հեղինակները գրանցում են այն ստեղծագործությունները, որ նրանք ստեղծել են կամ որոնց նկատմամբ իրավունքները տիրապետում են:

Կոլեկտիվ կառավարող կազմակերպության հիմնական գործունեությունն է՝

- իր անդամների ստեղծագործությունների փաստաթղթավորումը,
- իր անդամների անունից լիցենզիա տալն ու հոնորարներ հավաքելը,
- ստեղծագործությունների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու հաշվետվությունը,
- հսկողությունն ու աուդիտը,
- իր անդամ հեղինակների միջեւ հոնորարների բաշխումն ու վճարումը:



ընդհանուր լիցենզային պայմանագիրը նպատակահարմար է օգտագործողների և իրավատերերի համար

ԿԿԿ ռեպերտուարում ընդգրկված ստեղծագործությունները ներկայացվում են այն օգտագործող անձանց կամ ընկերությունների ուշադրությանը, ովքեր շահագրգռված են դրանց օգտագործման լիցենզիայի ձեռքբերմամբ: Հեղինակային եւ հարակից իրավունքներ տիրապետողներին միջազգային ասպարեզում ներկայացնելու նպատակով կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները իրենց տարածքներում իրավունքների փոխադարձ պահպանությունն ապահովելու նպատակով համագործակցության պայմանագրեր են կնքում ամբողջ աշխարհի նմանատիպ կազմակերպությունների հետ:

ԿԿ կազմակերպությունները լիցենզային պայմանագրեր են կնքում իրենց անդամների անունից, հավաքում են նրանց հասանելիք վարձատրությունն ու ըստ համաձայնեցված կարգի բաշխում իրավատերերի միջեւ:

Կոլեկտիվ կառավարումն ունի մի շարք գործնական առավելություններ.

** կոլեկտիվ լիցենզավորումը չափազանց նպատակահարմար է թե օգտագործողների եւ թե իրավատերերի համար. մեկ կազմակերպությունից իրավունքների ձեռքբերումը անհամեմատ թեթեւացնում է օգտագործողների եւ իրավատերերի կազմակերպչական աշխատանքների բեռը ու նվազեցնում ծախսերը (խնայողությունների հնարավորության ստեղծում): Նաեւ անօրինական օգտագործումների դեմ արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով ապահովում է ներդրումներ թվային համակարգերի ստեղծման, ուսումնասիրման եւ զարգացման համար: Կոլեկտիվ լիցենզավորումը հավասարակշռություն հաստատող կարեւոր օղակ է: Առանց կոլեկտիվ կառավարման համակարգի, որին մասնակցում են շուկայում գործող անձինք, փոքր ու միջին չափի օգտագործողները եւ իրավատերերը պարզապես դուրս կմնային շուկայից:

** այն պահպանվող ստեղծագործությունների իրավատերերին թույլ է տալիս նաեւ օգտվել կոլեկտիվ համաձայնագրեր կնքելու իրավունքից, բանակցել իրենց ստեղծագործությունների օգտագործման ավելի լավ պայմանների եվ ժամկետների շուրջ, քանի որ կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները կարող են ավելի հիմնավոր բանակցել բազմաթիվ եվ ավելի հզոր, տարբեր երկրներում գտնվող օգտագործող խմբերի հետ:

- գործարարները, ովքեր ուզում են օգտագործել այլ անձանց հեղինակային կամ հարակից իրավունքները, կարող են գործ ունենալ միայն մեկ կոլեկտիվ կառավարող կազմակերպության հետ եւ ստանալ մեկ ընդհանուր լիցենզային պայմանագիր (բոլոր օգտագործողների համար նույն պայմաններով եւ վարձատրության նույն դրույքաչափերով):
- ընդհանուր լիցենզային պայմանագիրը լիցենզառուին թույլ է տալիս կոլեկտիվ կառավարող կազմակերպությունում գրանցված ստեղծագործությունների ցանկից օգտագործել ցանկացած ստեղծագործություն սահմանված ժամանակահատվածում, առանց առանձին-առանձին քննարկելու կոնկրետ ստեղծագործության նկատմամբ իրավունքները, օգտագործման պայմաններն ու ժամկետները:
- կազմակերպությունը օգտակար միջոցներ է առաջարկում գործարարներին, ովքեր ուզում են լիցենզավորել թվայնացված նյութերը, հեշտացնելով դրանց նկատմամբ իրավունքների ձեռքբերումը:
- շատ ԿԿԿ, բացի իրենց կողմից անմիջականորեն լիցենզավորվող գործունեությունից, կարեւոր դեր ունեն նաեւ պիրատության դեմ պայքարում, իրականացնում են կրթության եւ տեղեկատվության տարածման ծառայություն, համագործակցում են օրենսգիրների հետ, խրախուսում եւ խթանում են մշակութային նախաձեռնությունների միջոցով մշակութային տարբեր ոլորտներում նոր ստեղծագործությունների ստեղծումը, կատարում են իրենց անդամների սոցիալական եւ իրավական բարեկեցությանն ուղղված ներդրումներ:

Հեղինակային եւ հարակից իրավունքների կառավարումը

Հեղինակային եւ հարակից իրավունքները կարող են կառավարվել՝

- *իրավատիրոջ կողմից,*
- *միջնորդի կողմից, որը կարող է լինել հրատարակիչ, պրոդյուսեր կամ դիստրիբյուտոր,*
- *կոլեկտիվ կառավարող կազմակերպության կողմից (ԿԿԿ):*

Շատ դեպքերում կոլեկտիվ կառավարող կազմակերպության կողմից իրավունքների պարտադիր կառավարումը կարող է նախատեսված լինել ***օրենքով:***

Վերջին տարիներին շատ ԿԿԿ ակտիվորեն կատարելագործում են թվային իրավունքների կառավարման միջոցները, մասնակցում են նաեւ միջազգային գիտաժողովներին ու միջոցառումներին՝ քննարկման ներկայացնելով փոխադարձ համագործակցության վերաբերյալ իրենց կողմից առաջարկվող այնպիսի չափանիշներ, որոնք համապատասխանում են իրավունքների կառավարման, պահպանության եւ կիրարկման առկա իրենց պահանջներին:

Որեւէ երկրում համապատասխան ԿԿԿ մասին տեղեկություններ կարելի է իմանալ կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների միջազգային ֆեդերացիայից (CISAC) կամ հեղինակային իրավունքի տեղական գրասենյակից կամ միջազգային ոչ պետական որեւէ կազմակերպությունից:

Կոլեկտիվ կառավարումը՝ երաժշտական ինդուստրիայում

Իրավունքների կոլեկտիվ կառավարումը չափազանց կարեւոր դեր է խաղում երաժշտական գործարարության մեջ շնորհիվ առնչվող իրավունքների բազմազանության:

Մեխանիկական իրավունք. կառավարման է հանձնվում հեղինակների, կոմպոզիտորների եւ հրատարակիչների կողմից,

Կատարման իրավունք. կառավարման է հանձնվում հեղինակների, կոմպոզիտորների եւ հրատարակիչների կողմից, եւ

Կատարման իրավունք. կառավարման է հանձնվում կատարողների եւ հնչյունագիր արտադրողների կողմից: Զարմանալի չէ, որ հազարավոր փոքր եւ միջին ձայնագրման ստուդիաներ, երաժշտական ստուդիաներ եւ կատարողներ իրենց ստեղծագործական աշխատանքի դիմաց համապատասխան վարձատրություն ապահովելու նպատակով դիմում են իրենց երկրներում գործող կամ արտասահմանյան ԿԿԿ-ին՝ ներկայացնել իրենց շահերը եւ բանակցություններ վարել երաժշտություն օգտագործող հզոր կազմակերպությունների հետ (հեռուստա-ռադիո եւ հեռահաղորդակցության ընկերություններ, կաբելային օպերատորներ):

Բոլոր լիցենզիաները, անկախ ընդգրկված առարկայից ու պայմաններից, ապահովում են նաեւ ռեպերտուարից ցանկացած ստեղծագործության օգտագործման թույլտվություն, առանց իրավատիրոջ հետ թույլտվության եւ վարձատրության պայմանների լրացուցիչ քննարկման:

Կատարողների (երաժշտություն եւ տեսալսողական ստեղծագործություններ) իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները իրականացնում էին հիմնականում միաժամանակյա հեռարձակման եւ ինտերնետային ցանցի միջոցով հեռարձակման իրավունքների կառավարում՝, իսկ ներկայումս ընդգրկելու են նաեւ **«հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը»:**

Շատ երկրներում հեռարձակող կազմակերպությունների միավորումները պետք է վճարեն երաժշտություն **հեռարձակելու իրավունքի** համար: Վարձատրությունը վճարվում է կոմպոզիտորին, սովորաբար անուղղակի կերպով: Գործնականում կոմպոզիտորն իր իրավունքները հանձնում է ԿԿԿ-ը, որն էլ բանակցում է երաժշտության հրապարակային կատարում իրականացնող շահագրգիռ բոլոր ընկերությունների հետ: ԿԿԿ-ը, որը ներկայացնում է մեծ թվով անդամ-հեղինակների, հոնորար է վճարում իր անդամներին ըստ ստեղծագործության հրապարակային կատարման որոշակի քանակի: Հեռարձակող կազմակերպությունները բանակցում են տարեկան վճարվող գումարի չափը ԿԿԿ-ն հետ եւ ներկայացնում տեղեկություններ առանձին ռադիոկայաններից օգտագործված երաժշտական ստեղծագործությունների վերաբերյալ: Այդ տեղեկությունները հնարավորություն են տալիս հաշվարկել, թե ձայնագրված ստեղծագործությունը քանի անգամ է հեռարձակվել՝ ճշգրտելու համար կոմպոզիտորին վճարվելիք հոնորարի չափը: Այդպիսի ԿԿ կազմակերպություն կարող է լինել հրապարակային կատարման իրավունքը կառավարող ցանկացած կազմակերպություն:

Հայաստանում 2001 թվականից սկսած գործում է **«Հայհեղինակ»** հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը, որը, համաձայն Օրենքի 63-64-րդ հոդվածների դրույթների, **իրականացնում է երաժշտական ստեղծագործությունների հրապարակային կատարման, ինչպես նաեւ հեռարձակման իրավունքի կոլեկտիվ կառավարում:**

«Հայհեղինակ»-ը ընդհանուր լիցենզային պայմանագրեր է կնքում հեռուստա-ռադիոընկերությունների հետ ստեղծագործությունների օգտագործման միատեսակ պայմաններով, հիմնվելով ՀՀ կառավարության 11.01.2007թ. N506-Ն որոշմամբ հաստատված հեղինակային վարձատրության

նվազագույն դրույքաչափերին: Հեռարձակող կազմակերպությունները «Հայհեղինակ» ՀԿ են ներկայացնում յուրաքանչյուր ամիս եթեր հեռարձակված ստեղծագործությունների ցուցակը, նշելով ստեղծագործության անվանումը, հեղինակների անուն-ազգանունները, ստեղծագործության կատարման քանակը: Հեռարձակող կազմակերպությունները ամսեկան կամ տարեկան ընդհանուր եկամուտներից սահմանված տոկոսների կամ հաստատված գումարի տեսքով հեղինակներին հասանելիք հաշվարկված վարձատրությունը փոխանցում են «Հայհեղինակ» ՀԿ: Փոխանցված հոնորարը բաշխվում է իրավատերերի միջև՝ ըստ կազմակերպության հեղինակային խորհրդի սահմանած կարգի, հաշվի առնելով ստեղծագործության կատարման քանակը: Վարձատրությունը փոխանցվում է հեղինակների բանկային հաշվի համարներին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը պահելուց հետո:

«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության հասցեն է.
ՀՀ, Երեւան-9, Կորյունի փող. 19ա, «Հայհեղինակ» ՀԿ,
e-mail: armauthor@yahoo.com

Հրապարակային կատարման իրավունքի լիցենզիան անհրաժեշտ է **երաժշտական ստեղծագործություն պարունակող ցանկացած հեռուստատեսային հաղորդում հեռարձակելու համար**: Կատարման իրավունքը պետք է լիցենզավորված լինի հեղինակային իրավունքի իրավատերերի կամ օգտագործված ստեղծագործության հրատարակչի կամ ձայնագրություն արտադրողի կողմից: Ընդհանուր լիցենզիաները սովորաբար ապահովագրված են հրապարակային կատարման իրավունքը կառավարող ընկերության կողմից:

Ռեպրոգրաֆիական վերարտադրության իրավունքի կոլեկտիվ կառավարում

Շատ ձեռնարկություններ իրենց գործունեության ընթացքում առնչվում են **հեղինակային իրավունքը պահպանվող բազմազան տպագիր արտադրանքի օգտագործման հետ:** Օրինակ՝ կարող է թերթերից, ամսագրերից եւ այլ պարբերականներից հոդվածներ արտատպելու եւ իր աշխատակիցներին տեղեկատվության կամ գիտական աշխատանքի նպատակով բաժանելու անհրաժեշտություն առաջանալ:

Գործնականորեն չափազանց դժվար կլինի ընկերության համար, եթե ոչ անհնարին, թույլտվություն ձեռք բերել այդպիսի օգտագործման համար աշխարհի տարբեր երկրների հեղինակներից կամ հրատարակիչներից: Ի պատասխան տպագիր արտադրանքի լուսապատճենման եղանակով համատարած վերարտադրությունը լիցենզավորելու անհրաժեշտության, շատ երկրներում հեղինակներն ու հրատարակիչները հիմնադրել են Վերարտադրության իրավունքի կազմակերպություններ (ՎԻԿ), կոլեկտիվ կառավարող կազմակերպության մի տեսակ, որպես միջնորդ գործելու եւ գործնականում անհատական կարգով իրավունքների իրականացման դժվարության կամ անհնարինության դեպքում հեղինակային իրավունքի անհրաժեշտ թույլտվության ձեռքբերումը հեշտացնելու նպատակով:

Վերարտադրության իրավունքի կազմակերպությունները (ՎԻԿ) իրենց անդամների անունից լիցենզիաներ են տալիս հրատարակված ստեղծագործություններից լուսապատճենման կամ սկանավորման եղանակով մասերի /հատվածների սահմանափակ թվով օրինակներ պատրաստելու համար (ներառյալ գրքերը, ամսագրերը, պարբերականները եւ այլն) աշխատողների, հաստատությունների, կազմակերպությունների համար (ներառյալ գրադարաններ, հասարակական/հանրային կազմակերպություններ, կրթական հաստատություններ, օրինակի վաճառքի կետեր, առեւտրի եւ արդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող տարբեր գործարարներ): Շատ ՎԻԿ-եր իրավասու են լիցենզավորել նաեւ հեղինակային իրավունքը պահպանվող այլ նյութեր, որոնք առնչվում են ինտերնետային ցանցերով տարածման հետ:

Հայաստանում տպագիր արտադրանքի լուսապատճենման եղանակով վերարտադրության իրավունքի կազմակերպություն առայժմ չի հիմնադրվել:

6. ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Որ դեպքերում է անհրաժեշտ այլ անձանց ստեղծագործությունների օգտագործման թույլտվությունը

Շատ հաճախ ձեռնարկատերերի գործունեությունն առնչվում է հեղինակային կամ հարակից իրավունքները պահպանվող ստեղծագործությունների օգտագործման հետ: Այլ անձանց ստեղծագործություններն օգտագործելու համար դուք պետք է նախ պարզեք, արդյոք անհրաժեշտ է ձեռք բերել իրավատիրոջ թույլտվությունը: Սկզբունքորեն ձեզ անհրաժեշտ կլինի ձեռք բերել հեղինակային իրավունքը տնօրինող անձի թույլտվությունը՝

- եթե ստեղծագործությունը հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին օրենքի առարկա է,
- եթե ստեղծագործությունը հանրության սեփականություն չի դարձել,
- եթե ձեր նախատեսած օգտագործումը ներառում է հեղինակին կամ հարակից իրավունքների իրավատիրոջը պատկանող իրավունքներն ամբողջությամբ կամ մասամբ,
- եթե ձեր նախատեսած օգտագործումը Օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված ազատ օգտագործում չի համարվում կամ չի ընդգրկվում սահմանափակումների կամ բացառությունների թվում:

Միշտ հիշեք, որ այլ անձանց ստեղծագործությունները ձեր կազմակերպության **շրջանակից դուրս** (հյուրախաղերի նպատակով ներդրումներ, ընկերության ինտերնետային կայք, ընկերության ամսագիր, տարեկան հաշվետվություններ), ինչպես նաեւ **կազմակերպության ներսում** (աշխատակիցների միջեւ բաշխում, ապրանքի հետազոտում, կազմակերպությունում անցկացվող միջոցառումներ եւ դասընթացներ) օգտագործելու դեպքում դուք հատուկ թույլտվություն ձեռք բերելու անհրաժեշտություն կունենաք: Անգամ, եթե դուք օգտագործում եք հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործության մասը, դուք պետք է թույլտվությունը նախապես ձեռք բերեք:

Պե՞տք է թույլտվություն ձեռք բերել այլ անձանց ստեղծագործություններն էլեկտրոնային կամ թվային ձեւով օգտագործելու համար

Հեղինակային իրավունքի պահպանության դրույթները նույնությամբ կիրառվում են նաեւ ստեղծագործության թվային օգտագործման կամ էլեկտրոնային հիշողության մեջ պահպանելու դեպքերում: Այդ պատճառով ձեզ անհրաժեշտ է հեղինակային իրավունքի իրավատերերից նախապես թույլտվություն ձեռք բերել՝ սկանավորելու նրանց ստեղծագործությունները (թղթի վրա կատարված պատկերից համակարգչային տեսքի վերածել), տեղադրելու կամ ուղարկելու էլեկտրոնային փոստով ստեղծագործությունները էլեկտրոնային բյուլետենի խմբագրություն կամ ինտերնետային կայք, պահպանելու նրանց թվայնացված բովանդակությունը /պարունակությունը ձեր կազմակերպության տվյալների բազայում, կամ նրանց ստեղծագործությունները ձեր ինտերնետային կայքում հրապարակելու համար: Ինտերնետային կայքերից շատերը ապահովում են համապատասխան անձի էլեկտրոնային փոստի հասցեն՝ համեմատաբար ավելի հեշտացնելու ստեղծագործության կամ պատկերի վերարտադրության համար թույլտվության ձեռքբերումը:

Եթե դուք գնել եք հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործություն, կարո՞ղ եք օգտագործել ինչպես ցանկանաք

Ինչպես արդեն ասվել է, հեղինակային իրավունքը անկախ է ստեղծագործության նկատմամբ սեփականության իրավունքից: Գրքի, CD-ի, տեսագրության կամ համակարգչային ծրագրի օրինակը գնելը գնորդին իրավունք չի տալիս հետագայում ստեղծագործության օրինակներ պատրաստել, հրապարակայնորեն կատարել կամ ցուցադրել այն: Այդ գործողությունները կատարելու իրավունքը սովորաբար պատկանում է հեղինակային իրավունքը տիրապետողին եւ դուք պարտավոր եք այդ գործողությունների իրականացման համար նախապես ձեռք բերել իրավատիրոջ թույլտվությունը : Դուք պետք է նաեւ հիշեք, որ ինչպես լուսապատճենումը, այնպես էլ էլեկտրոնային օրինակ ստեղծելու նպատակով ստեղծագործության սկանավորումը, էլեկտրոնային տեսքով ստեղծագործության օրինակի ներբեռնումը /download/ իրենցից ներկայացնում են ստեղծագործության պատճենում/կրկնօրինակում եւ այդ

իսկ պատճառով այդ գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ է նախապես ձեռք բերել իրավատիրոջ թույլտվությունը:

Համակարգչային ծրագրի լիցենզավորումը

Օրինական չափանիշներին համապատասխան փաթեթավորված համակարգչային ծրագիրը շատ հաճախ լիցենզավորվում է գնելու պահին: Դուք գնում եք համակարգչային ծրագիր պարունակող նյութական կրիչը, բայց լիցենզիա ստանում եք դրանում ամփոփված ծրագրի օգտագործման միայն որոշակի ձեւերի համար: Լիցենզիայի ժամկետներն ու պայմանները սովորաբար տպագրվում են փաթեթի վրա (shrink-wrap license- սահմանափակ օգտագործման լիցենզիա) եւ դուք կարող եք ետ վերադարձնել ծրագիրը, եթե չեք ընդունում կամ չեք համաձայնվում լիցենզիայի պայմանների ու ժամկետների հետ: Ենթադրվում է, որ փաթեթը բացելով դուք համաձայնվում եք պայմանագրով ձեզ առաջարկված պայմաններին ու ժամկետներին: Մեկ այլ դեպքում լիցենզիան կարող է ընդգրկված լինել փաթեթավորված համակարգչային ծրագրում:

Հաճախ ծրագրի լիցենզավորումը կատարվում է օն-լայն, ինտերակտիվ (click-wrap license) լիցենզիայի ձեւով: Այսպիսի լիցենզիաների դեպքում ինտերնետային էջի վրա գտնվող համապատասխան պատկերի կոճակը սեղմելով՝ դուք ընդունում եք լիցենզիայի պայմաններն ու ժամկետները: Եթե ձեզ անհրաժեշտ է ձեր ընկերության մի քանի համակարգիչների համար որոշակի համակարգչային ծրագիր, դուք կարող եք փաթեթային լիցենզիա ստանալ, որը մեծաքանակ գնումների դեպքում ձեզ զգալի զեղչերի հնարավություն կտա: Վերջին տարիներին անընդհատ աճող քննարկումներ են գնում համակարգչային ծրագրերի լիցենզիաների իրավական ուժ ունենալու վերաբերյալ, քանի որ շատ արտադրողներ փորձում են իրենց իրավունքների սահմաններն ընդարձակել պայմանագրում լրացուցիչ եւ շատ ավելի հեռուն գնացող դրույթներով, քան թույլատրվում է հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին օրենքով:

Այսպիսի դեպքերում դուք պետք է շատ ուշադիր աչքի անցկացնեք լիցենզային պայմանագիրը՝ պարզելու, թե ձեր գնած համակարգչային ծրագրի հետ ինչ կարող եք անել եւ ինչ՝ չէ: Բացի այդ, ձեր երկրի օրենքում կարող են բացառություններ լինել, որոնք ձեզ թույլ կտան օգտագործել համակարգչային ծրագիրը որոշակի ձեւով, առանց հեղինակի թույլտվության, ինչպես ասենք

պատրաստել այլ ծրագրերի հետ փոխգործողության ունակ արտադրանք, ուղղել ծրագրում ակնհայտ սխալները, ստուգել անվտանգությունը եւ պատրաստել պահեստային օրինակ:

Առանց թույլտվության ինչպիսի ստեղծագործություններ եւ նյութեր կարող եք օգտագործել

Հեղինակի համաձայնությունը չի պահանջվում, եթե՝

- դուք օգտագործում եք ստեղծագործությունից մաս, որը հեղինակային իրավունքի պահպանության առարկա չէ: Օրինակ, եթե արտահայտում եք պահպանվող ստեղծագործությունից փաստեր կամ մտքեր յուրովի, ձեր ձեւով, ոչ այնպես, ինչպես հեղինակն է ներկայացրել,
- ստեղծագործությունը հանրության սեփականություն է,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված «ազատ օգտագործում» կամ «սահմանափակումներ ու բացառություններ» հասկացությունը ընդգրկում է նաեւ ձեր օգտագործումը:

Երբ է ստեղծագործությունը դառնում հանրության սեփականություն

Եթե ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ոչ ոքի չի պատկանում, ապա ստեղծագործությունը **համարվում է հանրության սեփականություն** եւ ցանկացած անձ կարող է այն օգտագործել ցանկացած նպատակով, առանց հեղինակի համաձայնության եւ առանց վարձատրության: Հանրության սեփականություն են հետեւյալ ստեղծագործությունները.

- որի նկատմամբ հեղինակի գույքային իրավունքների պահպանության **ժամկետը լրացել է,**
- որը չի պահպանվում հեղինակային իրավունքով (օրինակ՝ ժողովրդական երգերը),
- որի հեղինակը միանշանակ հրաժարվել է դրա նկատմամբ իր իրավունքներից ստեղծագործության վրա հանրության սեփականություն դառնալու մասին ծանուցում տեղադրելով:

Օրինակ՝ *սիրված աշուղ Շերամը (Գրիգոր Տալյան) մահացել է **1938** թվականին: Նրա գրած երաժշտությունն ու խոսքերը արդեն **հանրության սեփականություն են, քանի որ շատ վաղուց լրացել է նրա իրավունքի օրենքով սահմանված գործողության ժամկետը:** Այդ է պատճառը, որ ցանկացած անձ կարող է օգտագործել նրա ստեղծագործությունները առանց հեղինակի թույլտվության եւ վարձատրության վճարման:*

Հեղինակային իրավունքի մասին ծանուցման բացակայությունը հիմք չի տալիս մտածելու, որ ստեղծագործությունը հանրության սեփականություն է, անգամ, եթե այն մատչելի է ինտերնետում:

Ինչպե՞ս պարզել արդյոք պահպանվում է ստեղծագործությունը հեղինակային կամ հարակից իրավունքներով

Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքների համաձայն հեղինակի անունը պետք է նորմալ ձեւով նշված լինի ստեղծագործության վրա, մինչդեռ հեղինակի մահվան տարեթիվը կարելի է պարզել պետական գրանցամատյաններից կամ կենսագրական աշխատությունից:

Եթե այդ որոնումները հստակ արդյունք չեն տալիս, ապարդյուն են կամ արդյունավետ չեն, ապա կարող եք դիմել ձեր երկրի հեղինակային իրավունքի գրանցամատյան, եթե կա այդպիսին, համապատասխան տեղեկություններ ձեռք բերելու համար, կամ կարող եք դիմել ձեր երկրում հեղինակի գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը կամ ստեղծագործության հրատարակչին: Հիշեք, որ նույն ստեղծագործության նկատմամբ կարող են լինել տարբեր հեղինակային իրավունքներ եւ այդ իրավունքները կարող են ունենալ հեղինակային իրավունքի տարբեր իրավատերերով պահպանության տարբեր ժամկետներ: Օրինակ՝ գիրքը կարող է պարունակել տեքստ եւ պատկերներ, որոնք ունեն տարբեր հեղինակներ՝ իրենց իրավունքների գործողության ավարտի տարբեր ժամկետներով:

Երբ կարող եք օգտագործել ստեղծագործությունը «բացառություններ եւ սահմանափակումներ» կամ «ազատ օգտագործում» դրույթների համաձայն

Հեղինակային իրավունքի ազգային բոլոր օրենքները նախատեսում են մի շարք սահմանափակումներ եւ բացառություններ, որոնք սահմանափակում են հեղինակային իրավունքի պահպանության ոլորտը եւ թույլ են տալիս կամ **ստեղծագործության ազատ օգտագործում որոշ հանգամանքների դեպքում կամ օգտագործում առանց թույլտվության, սակայն վարձատրության վճարման պայմանով:**

Հայաստանի Օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ ազատ օգտագործում է համարվում առանց հեղինակի համաձայնության եւ

վարձատրության, սակայն հեղինակի անվան եւ ստեղծագործության ձեռքբերման սկզբնաղբյուրի պարտադիր նշումով ստեղծագործության օգտագործումը, որը **չի հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին եւ չի վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը:**

Ազատ օգտագործմամբ թույլատրվում է՝

- գիտական, քննադատական եւ տեղեկատվության նպատակով օրինական ճանապարհով հրապարակված ստեղծագործության քաղվածքների մեջբերումը բնագրով կամ թարգմանաբար, այդ թվում՝ թերթերի եւ ամսագրերի հոդվածներից քաղվածքների վերարտադրումը մամուլի տեսության ձեւով՝ մեջբերման նպատակն արդարացնող ծավալով,
- օրինական ճանապարհով հրապարակված գրական եւ արվեստի ստեղծագործությունների ու դրանցից քաղվածքների օգտագործումը լուսաբանման նպատակով՝ ուսուցողական բնույթի հրատարակություններում, հեռարձակող կազմակերպության հաղորդումներում, ձայնագրություններում եւ տեսագրություններում՝ ուսուցումը լուսաբանելու նպատակն արդարացնող ծավալով, իսկ տվյալների բազաների օգտագործման դեպքում՝ ուսուցումը լուսաբանելու համար՝ ոչ առեւտրային նպատակն արդարացնող ծավալով,
- տնտեսական, քաղաքական, սոցիալական ու կրոնական ընթացիկ հարցերին վերաբերող եւ օրինական ճանապարհով մամուլում հրապարակված հոդվածների կամ նմանօրինակ հեռարձակված ստեղծագործությունների վերարտադրումը մամուլում եւ հեռարձակումը, եթե հեղինակը նման օգտագործումը նախապես չի արգելել,
- հրապարակավ արտասանված ելույթների, զեկույցների, հայտարարությունների եւ նմանօրինակ այլ ստեղծագործությունների վերարտադրումը մամուլում ու հեռարձակումը՝ տեղեկատվության նպատակն արդարացնող ծավալով,
- լուսանկարչության, կինոարվեստի, հեռարձակման միջոցներով ընթացիկ իրադարձությունների մասին հաղորդման նպատակով դրանց ընթացքում տեսած կամ լսած գրական եւ արվեստի ստեղծագործությունների վերարտադրումը եւ հրապարակային հաղորդումը՝ տեղեկատվության նպատակն արդարացնող ծավալով,
- դատական եւ վարչական վարույթի նպատակների համար ստեղ-

ծագործության օգտագործումը նպատակն արդարացնող ծավալով, բացառությամբ համակարգչային ծրագրերի: Այդպիսի դեպքերում հեղինակի անվան եւ ստեղծագործության սկզբնաղբյուրի նշումը պարտադիր չէ,

** օրինական ճանապարհով հրապարակված երաժշտական ստեղծագործության հրապարակային կատարումը՝

- պաշտոնական, կրոնական, ինչպես նաեւ ծիսական արարողությունների ժամանակ՝ արարողության բնույթն արդարացնող ծավալով,
- կրթական հաստատություններում կրթական գործունեություն իրականացնելիս ուսուցիչների եւ ուսանողների մասնակցությամբ, եթե ունկնդիրներն ուսուցիչներ եւ ուսանողներ են, ինչպես նաեւ կրթական հաստատության հետ անմիջական կապ ունեցող անձինք են (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ, դաստիարակներ): Այդպիսի դեպքերում հեղինակի անվան եւ ստեղծագործության սկզբնաղբյուրի նշումը պարտադիր չէ,

** օրինական ճանապարհով **հրապարակված ստեղծագործության ուռուցիկ կետային տպատառերով կամ կույրերի համար նախատեսված այլ հատուկ եղանակներով վերարտադրումը** առանց շահույթ ստանալու, բացառությամբ հատուկ այդպիսի եղանակով ստեղծված ստեղծագործությունների վերարտադրման,

** ցուցահանդեսներում, աճուրդներում, տոնավաճառներում կամ հավաքածուներում ցուցադրված ստեղծագործությունների վերարտադրումն ու տարածումը այդ նպատակով հրատարակվող կատալոգներում ցուցադրումը կազմակերպող անձի կողմից՝ նշելով յուրաքանչյուր ստեղծագործության անվանումն ու հեղինակի անունը, եթե դրանք նշված են օգտագործված ստեղծագործության վրա,

** հրապարակված ստեղծագործության վերափոխումը, եթե՝

- այն անձնական կամ այլ ներքին նպատակների համար վերափոխություն է եւ նախատեսված կամ մատչելի չէ հանրությանը,
- այն վերափոխվում է պարոդիայի (ծաղրագրության) կամ ծաղրանկարի՝ պայմանով, որ շփոթություն չի առաջացնի ստեղծագործության բնագրի (սկզբնաղբյուրի) նկատմամբ:

Օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ առանց հեղինակի համաձայնության եւ առանց հեղինակային վարձատրության թույլատրվում է օրինական ճանապարհով

հրապարակված ստեղծագործության **վերարտադրումը բացառապես անձնական, ոչ առևտրային նպատակներով** օգտագործելու համար, եթե դրանով չեն վնասվում հեղինակի օրինական շահերը:

Իսկ Օրենքի 24-րդ հոդվածը նախատեսում է, որ առանց հեղինակի համաձայնության եւ առանց հեղինակային վարձատրության, թույլատրվում է՝

- օրինական ճանապարհով լույս ընծայված ստեղծագործության **արտատպման եղանակով (լուսապատճենում, reprography) մեկ օրինակի վերարտադրումը** գրադարանների եւ արխիվների, կրթական եւ մշակութային հաստատությունների կողմից՝ **կորած կամ վնասված օրինակների վերականգնման կամ փոխարինման** նպատակով, ինչպես նաև այլ գրադարաններում ստեղծագործության օրինակի կորստյան դեպքում դրանց օրինակ տրամադրելու համար, եթե սովորական պայմաններում այդպիսի օրինակի ձեռքբերումն այլ ճանապարհով անհնարին է,
- ժողովածուներում, թերթերում եւ այլ պարբերական հրատարակություններում օրինական ճանապարհով լույս ընծայված առանձին հոդվածների, փոքրածավալ ստեղծագործությունների եւ լույս ընծայված այլ գրավոր ստեղծագործությունների կարճ հատվածների արտատպման եղանակով **մեկ օրինակի** վերարտադրումը գրադարանների ու արխիվների կողմից՝ ուսումնական եւ գիտահետազոտական նպատակներով (ֆիզիկական անձանց պահանջով), ինչպես նաև կրթական հաստատությունների կողմից՝ լսարանային պարապմունքների համար, բացառությամբ համակարգչային ծրագրերի,
- ամբողջական գրքի **մեկ օրինակի** վերարտադրումը արտատպման եղանակով, եթե այդպիսի ստեղծագործությունը տպագրությունից դուրս է եկել ոչ պակաս, քան երկու տարի առաջ,
- երաժշտական ստեղծագործության տպագրված նոտային տեքստի **մեկ օրինակի ձեռագիր** վերարտադրումը:

Ի՞նչ է անձնական օգտագործման նպատակով վերարտադրության վճարման համակարգը

Անհատ անձինք շատ հաճախ են պատճենում հեղինակային իրավունքը պահպանվող նյութերը բացառապես անձնական, ոչ առեւտրային նպատակներով օգտագործելու համար: Այդպիսի պատճենումը չափազանց եկամտաբեր շուկա

է ստեղծում արտադրողների, ձայնագրման սարքավորումներ եւ կրիչներ ներկրողների համար: Անձնական օգտագործման նպատակով վերարտադրությունը **իր բնույթով չի կարող կարգավորվել պայմանագրով.** մասնավոր օրինակները պատրաստվում են կարիքն առաջանալուն պես, անհատ անձանց կողմից՝ իրենց տներում: Այդ պատճառով որոշ երկրներում անձնական օգտագործման նպատակով օրինակների պատճենումը, որպես բացառություն, թույլատրվում է առանց իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման: Բայց դրա փոխարեն մի շարք երկրներ սահմանել են պարտադիր վճարման համակարգ՝ փոխհատուցում վճարել կատարողներին, գրողներին ու երաժիշտներին իրենց ստեղծագործությունների լայնածավալ պատճենման համար:

Պարտադիր վճարման համակարգը կարող է բաղկացած լինել երկու տարրից.

- սարքավորումների ու դատարկ կրիչների համար **պարտադիր վճար** - հեղինակային վարձատրության փոքր գումար է ավելացվում բոլոր տեսակի ձայնագրման սարքավորումներին, սկսած պատճենման եւ ֆաքսի սարքերից մինչեւ CD եւ DVD ձայնագրման, տեսաերիզների գրառման եւ սկանավորման սարքերը: Որոշ երկրներ վճարներ են սահմանել գրառման դատարկ կրիչների, օրինակ՝ լուսապատճենման թղթի, դատարկ ժապավենների, խտասկավառակների (CD-R, ֆլեշ քարտերի համար,
- օպերատորին տրվող գումար, որը վճարվում է դպրոցների, քոլեջների, կառավարական եւ գիտական հաստատությունների, համալսարանների, գրադարանների եւ ձեռնարկությունների կողմից մեծաքանակ օրինակների պատրաստման համար:

Սարքավորումներ եւ կրիչներ արտադրողներից, ներկրողներից, օպերատորներից կամ օգտագործողներից պարտադիր վճարները սովորաբար հավաքում են կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները եւ հետագայում բաշխում համապատասխան իրավատերերի միջեւ:

Հայաստանի Օրենքն առայժմ չի նախատեսում անձնական օգտագործման նպատակով օրինակների պատճենման համար պարտադիր վճարման համակարգ:

Կարո՞ղ եք օգտագործել տեխնիկական միջոցներով պաշտպանված (ՏՊՄ) ստեղծագործությունները

Տեխնիկայի զարգացումը հեղինակային եւ հարակից իրավունքները տիրապետողներին հնարավորություն է տալիս թվային միջավայրում (համակարգչային կամ նմանատիպ ցանցեր) ստեղծագործություններ օգտագործելիս կիրառել այնպիսի պաշտպանության տեխնիկական միջոցներ, սարքեր կամ դրանց բաղադրիչ մասեր, որոնք հնարավորություն են տալիս իրավատերերին՝ արգելել կամ **սահմանափակել իրենց ստեղծագործությունների նկատմամբ չթույլատրված գործողությունները**: Սակայն առկա է նաեւ այն վտանգը, որ օգտագործողներն էլ իրենց հերթին կարող են անօրինական գործողություններ իրականացնել եւ պաշտպանության տեխնիկական **միջոցները շրջանցելու** ուղիներ գտնել:

Այն կազմակերպությունները, որոնք իրենց հիմնական գործունեության ընթացքում օգտագործում են թվային միջավայրում տեխնիկական միջոցներով պաշտպանված ստեղծագործություններ, չպետք է թույլ տան այդ միջոցների հնարավոր շրջանցում, քանի որ շատ երկրների օրենքներով, այդ թվում եւ Հայաստանի, արգելվածեն պաշտպանության տեխնիկական միջոցները շրջանցող գործողությունները:

Հայաստանի Օրենքի 67-րդ հոդվածը սահմանում է, որ՝

- ցանկացած **անձ, որը,** գիտակցաբար կամ գիտակցելու համար բավարար հիմքեր ունենալով, **շրջանցում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության **տեխնիկական միջոցները,** պատրաստում, ներմուծում, տարածում, վաճառում, վարձույթով տալիս, վաճառքի կամ վարձույթով տալու համար գովազդում կամ առևտրային նպատակներով տնօրինում է սարքեր, արտադրանք կամ բաղադրամասեր կամ **մատուցում է ծառայություններ՝**
  - որոնք առաջադրվում, գովազդվում կամ շուկա են հանվում հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության տեխնիկական **միջոցները շրջանցելու նպատակով,**
  - որոնց օգտագործման եւ/կամ կիրառման արդյունքի հիմնական **նպատակը** հանդիսանում է հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության ցանկացած **տեխնիկական միջոցի շրջանցումը,**
- **որոնք ի սկզբանե նախատես-**

ված, արտադրված, հարմարեցված կամ կատարված են հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության **տեխնիկական միջոցների շրջանցման հնարավորություն ստեղծելու կամ շրջանցումը հեշտացնելու նպատակով՝ ենթարկվում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը **համարժեք պատասխանատվության**:

Պաշտպանական տեխնիկական միջոցների շրջանցում տեղի կունենա, եթե դուք **առանց թույլտվության վերացնեք կամ փոփոխեք որեւէ մեկի իրավունքների կառավարման էլեկտրոնային տեղեկատվության համակարգը**՝ պահպանվող պարունակությունն առանց թույլտվության օգտագործելու նպատակով կամ ապակոդավորեք պահպանվող ստեղծագործությունն առանց թույլտվության: Օրենքի 68-րդ հոդվածը այդպիսի արարքի համար նույնպես սահմանում է, որ՝ ցանկացած անձ, որը գիտակցաբար՝

- **առանց թույլտվության վերացնում կամ փոխում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների կառավարման վերաբերյալ ցանկացած էլեկտրոնային տեղեկատվությունը,
- **տարածում է**, տարածման նպատակով ներմուծում, հեռարձակում, հանրությանը հաղորդում կամ մատչելի է դարձնում սույն օրենքով պահպանվող ստեղծագործությունը կամ հարակից իրավունքների օբյեկտը, որի վրա իրավունքների կառավարման վերաբերյալ **էլեկտրոնային տեղեկատվությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության,**
- գիտակցում է կամ բավականաչափ հիմքեր ունի գիտակցելու, որ **այդպիսի գործողություններով** նա դրդում, **հնարավորություն է տալիս**, նպաստում է հեղինակային իրավունքի կամ հարակից **իրավունքների որևէ խախտման կամ թաքցնում է դա՝ ենթարկվում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը **համարժեք պատասխանատվության:**

Ինչպես կարող եք այլ անձանց ստեղծագործությունների օգտագործման թույլտվություն ստանալ

Հեղինակային կամ հարակից իրավունքների օբյեկտի օգտագործման թույլտվությունը նախապես ձեռք բերելու երկու ճանապարհ կա.

- օգտվել կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների ծառայությունից,
- կապվել անմիջականորեն իրավատիրոջ հետ, եթե ձեռքի տակ ունեք կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները:

Ամենալավ ելքը ճշտելն է, արդյոք ստեղծագործությունը **գրանցված է համապատասխան կոլեկտիվ կառավարող կազմակերպության ռեպերտուարում**, որը զգալիորեն կհեշտացնի թույլտվություն ձեռք բերելու գործընթացը: Կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները սովորաբար առաջարկում են տարբեր տեսակի լիցենզային պայմանագրեր տարբեր նպատակների եւ օգտագործման տարբեր ձեւերի համար: Որոշ ԿԿ կազմակերպություններ առաջարկում են նաեւ թվային միջավայրում օգտագործման լիցենզիաներ:

Եթե ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները չեն կառավարվում որեւէ կոլեկտիվ կառավարող կազմակերպության կողմից, ապա դուք պետք է կապվեք անմիջականորեն հեղինակային կամ հարակից իրավունքները տիրապետող անձի կամ նրա գործակալի հետ: Հեղինակային իրավունքի մասին ծանուցման մեջ նշված անձը ամենայն հավանականությամբ գույքային իրավունքները տիրապետող սկզբնական անձն է, բայց այդ իրավունքները հնարավոր է, որ որոշ ժամանակ անց փոխանցված լինեն այլ անձի: Հեղինակային իրավունքները տիրապետող անձին կկարողանաք բացահայտել **հեղինակային իրավունքի գրանցման ազգային գրանցամատյաններում** որոնումների միջոցով միայն այնպիսի երկրներում, որտեղ գործում է հեղինակային իրավունքի կամավոր գրանցման համակարգ (օրինակ՝ Հնդկաստանում, ԱՄՆ-ում): Գրավոր կամ երաժշտական ստեղծագործությունների դեպքում դուք կարող եք կապվել ստեղծագործության **հրատարակչի կամ ձայնագրությունն արտադրողի** հետ, որը նյութն արտադրելու իրավունք ունի:

Քանի որ կարող են մի շարք իրավունքներ լինել, կարող են լինել նաեւ մի շարք իրավատերեր, որոնցից լիցենզիաներ ստանալու կարիք կլինի: Օրինակ՝ երաժշտական ստեղծագործության համար կպահանջվի երաժշտական հրատարակիչ, երաժշտությունը ձայնագրելու համար՝ ձայնագրման ստուդիա, եւ հաճախ ՝ նաեւ կատարողներ:

Կարեւոր լիցենզիաների դեպքում ցանկալի է, նախքան ձեր լի-

ցենզային պայմանագրի պայմանների ու ժամկետների վերաբերյալ բանակցություններ վարելը, դիմել մասնագետի խորհրդատվությանը, անգամ, եթե նախնական լիցենզիան առաջարկվել է ձեզ ստանդարտ պայմաններով ու ժամկետներով: Լավ իրազեկված մասնագետը կարող է օգնել ձեր գործունեության ավելի շահավետ պայմաններ բանակցելու գործընթացում:

Հեղինակները սովորաբար իրենց իրավունքները փոխանցում են հրատարակիչներին կամ կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը՝ իրենց ստեղծագործությունների տնտեսական օգտագործման դեպքում եկամուտները հսկելու նպատակով:

Ինչպե՞ս կարող է ձեր գործունեությունը նվազեցնել իրավախախտումների ռիսկը

Հեղինակային իրավունքի խախտումների հարցերով դատական գործընթացը կարող է ծախսատար լինել: Այդ պատճառով խախտումներից խուսափելու նպատակով լավ կլիներ իրականացնել մի շարք գործողություններ.

- **ուսուցանել** կազմակերպության աշխատակազմին՝ իրենց աշխատանքում եւ գործողություններում **ապահովելու** հեղինակային իրավունքի օբյեկտի օրինական օգտագործում,
- **ձեռք բերել,** որտեղ անհրաժեշտ է, **գրավոր լիցենզիաներ կամ փոխանցման/զիջման պայմանագրեր** եւ վստահ լինել, որ անձնակազմը ծանոթացված է այդ լիցենզիաների կամ պայմանագրերի դրույթներին,
- **տեղադրել** բոլոր սարքավորումների վրա, որոնց օգտագործումը կարող է առաջացնել հեղինակային իրավունքի հնարավոր խախտում (օրինակ՝ պատճենող սարքեր, համակարգիչներ, CD- եւ DVD գրառող սարքեր), հստակ **ծանուցումներ** այն մասին, որ դրանք չպետք է օգտագործվեն հեղինակային իրավունքը խախտելու համար,
- խստիվ **արգելել** ձեր աշխատակազմին՝ **առանց թույլտվության ներբեռնել** կազմակերպության համակարգիչներ հեղինակային իրավունքը պահպանվող նյութերն Ինտերնետից, եւ
- եթե ձեր ձեռնարկությունը հաճախակի օգտագործում է **տեխնիկական միջոցներով պաշտպանված նյութեր**, գործողությունների պլան մշակել ապահովված լինելու համար, որ ձեր աշխատակիցները առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ թույլտվության **չեն**

շրջանցում պաշտպանության տեխնիկական միջոցները կամ չեն անցնում թույլտվության սահմանները: Յուրաքանչյուր ձեռնարկատիրություն պետք է հեղինակային իրավունքի պահպանության համապատասխան ռազմավարություն ունենա, որը ներառում է իր գործունեության կարիքների համար պահանջվող հեղինակային իրավունքի թույլտվության ձեռքբերման գործողությունների հանգամանորեն մշակված ծրագիրը: Մշակելով ձեր կազմակերպության ներսում հեղինակային իրավունքի պահպանության կուլտուրա՝ դուք նվազեցնում եք հեղինակային իրավախախտումների ռիսկը:

Ամփոփում

*** **Առավելագույնս ապահովեք ձեր հեղինակային իրավունքի պահպանությունը.** գրանցեք ձեր ստեղծագործությունները հեղինակային իրավունքի ազգային գրասենյակում, եթե հեղինակային իրավունքի կամավոր գրանցման հնարավորություն կա: Հայաստանում գործող հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը իրավատիրոջ ցանկության դեպքում ի պահ է վերցնում ցանկացած ստեղծագործություն, կարող եք օգտվել այդ ծառայությունից: Տեղադրեք հեղինակային իրավունքի մասին ծանուցում ձեր ստեղծագործության վրա: Կիրառեք իրավունքների կառավարման թվային միջոցներ թվայնացված ստեղծագործությունները պաշտպանելու նպատակով:*

*** **Հստակեցրեք, թե ով է տիրապետում հեղինակային իրավունքը.** ունեցեք գրավոր պայմանագրեր բոլոր աշխատակիցների, պայմանագրով ծառայություններ մատուցող եւ այլ անձանց հետ՝ ճշգրտելու համար, թե ում են պատկանում ձեր կազմակերպության համար ստեղծված ցանկացած ստեղծագործության նկատմամբ իրավունքները:*

*** **Խուսափեք խախտումներից.** եթե ձեր արտադրանքը կամ ծառայությունը ընդգրկում է որեւէ նյութ, որը ձեր կազմակերպությունում չի ստեղծվել, պարզաբանեք, արդյոք պետք է թույլտվություն ունենաք այդ նյութն օգտագործելու համար եւ, եթե անհրաժեշտ է, թույլտվությունը նախապես ձեռք բերեք:*

*** **Հնարավորինս օգուտ քաղեք ձեր հեղինակային իրավունքից.** ավելի լավ է ձեր իրավունքների օգտագործման թույլտվություն տաք, քան վաճառեք: Տվեք սահմանափակող եւ հատուկ լիցենզիաներ, որպեսզի յուրաքանչյուր լիցենզիա հստակ համապատասխանեցնեք լիցենզառուի կարիքներին:*

ԲԱԺԻՆ 7. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ե՞ՐԲ է խախտվում ձեր հեղինակային իրավունքը

Ցանկացած անձ, որն առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ թույլտվությունը ձեռք բերելու զբաղվում է այնպիսի գործունեությամբ, որը միայն իրավատերն է իրավասու իրականացնելու կամ արգելելու, համարվում է իրավատիրոջ իրավունքները խախտող, այսինքն՝ հեղինակային իրավունքը խախտող:

Հայաստանի Օրենքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ

- հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում **անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:**

Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որեւէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս: Այսինքն՝ խախտում է տեղի ունենում, երբ ստեղծագործության «էական մասը», այսինքն՝ կարեւոր, էական կամ հստակ մասը օգտագործվում է այնպիսի ձեւով, որն իրավասու է իրականացնելու բացառապես միայն իրավատերը. գործ ունենք քանակական եւ որակական տարրի հետ:

Այնուամենայնիվ, չկա կոնկրետ սահմանում, թե ստեղծագործության ինչքան մասի օգտագործումը կարող է առաջացնել հեղինակային իրավունքի խախտում: Հարցը կարող է քննարկվել «կոնկրետ դեպքի» հիման վրա՝ կախված կոնկրետ հանգամանքներից եւ փաստերից:

- անձը, **որը չի կատարում սույն օրենքի պահանջները, համարվում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները խախտող**, իսկ **առանց իրավատիրոջ թույլտվության** պատրաստված կամ տարածված **իրավունքի օբյեկտի օրինակները** համարվում են **կեղծ կամ նմանակված (կոնտրաֆակտ):**
- **ուրիշի ստեղծագործությունից** մտքեր, հատվածներ քաղելը՝ առանց դրանց ստեղծագործական վերամշակման եւ առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման, եւ որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով **ներկայացնելը համարվում է գրագողություն:**

Օրենքի 66-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով, դատական կարգով, իր իրավունքները խախտողից կարող է պահանջել՝

- **իր իրավունքների ճանաչում.**
- մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում եւ **իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.**
- **նմանակված օրինակների**, դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների **բռնագրավում կամ ոչնչացում.**
- **վնասի հատուցում** (ներառյալ՝ բաց թողնված օգուտը)՝ օրենքով սահմանված կարգով.
- **հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում**, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ **փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում,** ներառյալ՝ բաց թողնված օգուտը.
- **դատական վճռի հրապարակումը** Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվության միջոցներով՝ դատարանի կողմից նախատեսված չափով եւ մասով, իրավախախտողի ծախսերի հաշվին:

Հաշվի առնելով Ինտերնետում հեղինակային եւ հարակից իրավունքների խախտման դեպքերը, Օրենքի 67-րդ հոդվածը սահմանում է, որ՝

- ցանկացած անձ, որը, գիտակցաբար կամ գիտակցելու համար բավարար հիմքեր ունենալով, **շրջանցում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների **պաշտպանության տեխնիկական միջոցները,** պատրաստում, ներմուծում, տարածում, վաճառում, վարձույթով տալիս, վաճառքի կամ վարձույթով տալու համար գովազդում կամ առեւտրային նպատակներով տնօրինում է սարքեր, արտադրանք կամ բաղադրամասեր կամ մատուցում է ծառայություններ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության տեխնիկական միջոցները շրջանցելու նպատակով, կամ որոնց օգտագործման եւ/կամ կիրառման արդյունքի հիմնական նպատակը հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության ցանկացած տեխնիկական միջոցի շրջանցումն է, կամ որոնք ի սկզբանե նախատես-

ված, արտադրված, հարմարեցված կամ կատարված են հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության տեխնիկական միջոցների շրջանցման հնարավորություն ստեղծելու կամ շրջանցումը հեշտացնելու նպատակով՝

ենթարկվում է հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը **համարժեք պատասխանատվության:**

Իսկ 68-րդ հոդվածը սահմանում է, որ՝

** ցանկացած անձ, որը գիտակցաբար **առանց թույլտվության վերացնում կամ փոխում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների կառավարման վերաբերյալ ցանկացած **էլեկտրոնային տեղեկատվությունը**, կամ տարածում է, տարածման նպատակով ներմուծում, հեռարձակում, հանրությանը հաղորդում կամ մատչելի է դարձնում պահպանվող ստեղծագործությունը կամ հարակից իրավունքների օբյեկտը, որի վրա իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության, կամ գիտակցում է կամ բավականաչափ հիմքեր ունի գիտակցելու, որ այդպիսի գործողություններով նա դրդում, հնարավորություն է տալիս, նպաստում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների որեւէ խախտման կամ թաքցնում է դա՝ **ենթարկվում է** հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը **համարժեք պատասխանատվության**:

Ի՞նչ պետք է անեք, եթե ձեր իրավունքները հավանական է, որ խախտվեն կամ խախտվել են

Հեղինակային կամ հարակից իրավունքները պաշտպանելու բեռը կրում է հիմնականում իրավատերը: Դուք պետք է որոշեք՝ արդյոք տեղի է ունեցել ձեր իրավունքների խախտում եւ ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն այդ իրավունքների պաշտպանության համար:

Հեղինակային իրավունքի մասնագիտացած իրավաբանը կամ իրավաբանական ֆիրման պետք է ընտրության հնարավոր տարբերակները ներկայացնի ձեզ եւ օգնի որոշելու, թե երբ, ինչպես եւ ինչպիսի իրավաբանական գործողություններ պետք է ձեռնարկել խախտողների դեմ, ինչպես կարգավորել ցանկացած այդպիսի վեճ դատական գործընթացի կամ այլ միջոց-

ներով: Համոզված եղեք, որ ցանկացած այդպիսի որոշումը համապատասխանում է ձեր ընդհանուր գործունեության ռազմավարությանն ու խնդիրներին:

Եթե խախտվել է ձեր հեղինակային իրավունքը, ապա կարող եք նախ նամակ (**« իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցման» նամակ**) ուղարկել ենթադրյալ խախտողին՝ տեղեկացնելով նրան հնարավոր վեճի մասին: Խորհուրդ է տրվում այդ նամակը գրելու համար իրավաբան փնտրել: Որոշ երկրներում, եթե որեւէ մեկը խախտել է ձեր հեղինակային իրավունքը ինտերնետում, դուք կարող եք՝

- մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնման եւ իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցման նամակ ուղարկել Ինտերնետ ծառայություն մատուցողին (ԻԾՄ), պահանջելով, որ խախտում պարունակող բովանդակությունը կայքից հանվի կամ արգելափակվի այդ նյութի մատչելիությունը **(«ծանուցել եվ արգելափակել»),** կամ
- տեղեկացնել Ինտերնետ ծառայություն մատուցողին, որն էլ իր հերթին կտեղեկացնի իր հաճախորդներին ենթադրյալ իրավախախտման մասին **(«ծանուցել եւ ծանուցել» մոտեցում)** եւ դրանով կօգնի հարցի կարգավորմանը:

Երբեմն **անակնկալը** ամենալավ ռազմավարությունն է: Նամակով հայց ներկայացնելու մասին տեղեկացնելը կարող է իրավախախտողին ապացույցը թաքցնելու կամ ոչնչացնելու հնարավորություն տալ: Եթե դուք գտնում եք, որ իրավախախտումը գիտակցաբար է արվել եւ ձեզ հայտնի է, թե որտեղ է իրավախախտում առաջացնող գործունեությունը իրականացվում, ապա **կարող եք, առանց խախտողին նամակ ուղարկելու եւ առանց մյուս կողմի մասնակցության, դիմել դատարան** ու խախտող կողմի տարածքում անակնկալ ստուգում անցկացնելու եւ համապատասխան ապացույցները բռնագրավելու մասին **օրդեր պահանջել:**

Դատական գործընթացները կարող են զգալի ժամանակ խլել: Այդ ժամանակամիջոցում հետագա վնասները կանխելու նպատակով դուք կարող եք անմիջապես միջոցներ ձեռնարկել՝ դադարեցնելու կասկածյալ խախտում պարունակող գործողությունները եւ **կանխել իրավունքի խախտումով ապրանքի մուտքն առեւտրային ցանց**:

Հայաստանի Օրենքի 69-րդ հոդվածի դրույթների համաձայն՝

- դատարանը կարող է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել՝ **արգելանք դնել** ստեղծագործությունների, տվյալների բազաների, հնչյունագրերի կամ տեսագրությունների ենթադրվող **նմանակված բոլոր օրինակների**, ինչպես նաեւ դրանց ստեղծման եւ վերարտադրման համար նախատեսված **նյութերի ու սարքավորումների վրա**, արգելել որոշակի գործողությունների կատարումը,
- դատարանն իրավասու է **արգելելու նմանակված օրինակների**, ներառյալ՝ ներմուծված օրինակների **մուտքն առեւտրային ցանց** այդ ապրանքների մաքսազերծումից հետո, ինչպես նաեւ միջոցներ ձեռնարկել, որ այն օրինակները, որոնք նմանակված են ճանաչվել, հանվեն առևտրային ցանցից իրավախախտողի հաշվին, առանց փոխհատուցման եւ առանց իրավատիրոջը վնաս պատճառելու, կամ ոչնչացվեն:

Խորհուրդ է տրվում իրավախախտողի դեմ դատական գործընթաց սկսել միայն, եթե

- կարող եք ապացուցել, որ հեղինակային իրավունքները ձեզ են պատկանում,
- կարող եք ապացուցել, որ խախտվել են ձեր իրավունքները,
- դատական գործողությունների հաջող ավարտը կգերազանցի գործընթացի ծախսերը:

Միջոցները, որ դատարանը կարող է ապահովել իրավախախտումը փոխհատուցելու համար, ներառում է վնասները, արգելանքը, շահույթի վերաբերյալ հաշվետվությունը, իրավատերերին իրավախախտ ապրանքը առաքել-հասցնելու մասին որոշումները: Խախտողը կարող է հարկադրված լինել նաեւ բացահատելու երրորդ անձանց ինքնությունը, ովքեր մասնակցել են իրավախախտ ապրանքի արտադրության ու տարածման գործին, եւ դրանց տարածման ուղիները:

Համաձայն Հայաստանի Օրենքի 66-րդ հոդվածի՝

- հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը կարող է **պահանջել**, որ այն անձինք, ովքեր որեւէ կերպ առնչվում են սույն օրենքով պահպանվող իրավունքների խախտմանը (արտադրողներ, տպագրողներ, ներկրողներ, նմանակված օրինակ-

ներ կամ իրավախախտում առաջացնող սարքավորումներ տիրապետողներ), պահանջի դեպքում անմիջապես **տեղեկություններ հայտնեն** կեղծ օրինակների արտադրությանը եւ տարածմանը մասնակցող երրորդ անձանց, ինչպես նաեւ այդ օրինակների ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին եւ ներկայացնեն խախտմանն առնչվող փաստաթղթերը: Այն անձինք, ովքեր հրաժարվում են տրամադրել պահանջված տեղեկությունը կամ փաստաթղթերը, **պատասխանատվություն են կրում այն վնասների համար,** որոնք կարող են պատճառվել նշված պարտականությունը կատարելուց հրաժարվելու հետևանքով:

Ի լրումն, դատարանը կարող է կարգադրել, որ պահանջի դեպքում, խախտող ապրանքները ոչնչացվեն առանց փոխհատուցման:

Այս դրույթը ամրագրված է Օրենքի 69-րդ հոդվածում՝

** հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների խախտման դեպքում ներկայացված կամ հետագայում ներկայացվելիք քաղաքացիական հայցի ապահովման նպատակով **դատարանն իրավունք ունի անմիջականորեն կալանք դնելու ենթադրվող նմանակված** բոլոր օրինակների, ինչպես նաեւ դրանց ստեղծման եւ վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա, անհրաժեշտության դեպքում՝ դրանք **առգրավելու եւ ոչնչացնելու:**

Հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունը կարող է նաեւ **քրեական պատասխանատվություն** կիրառել իրավախախտում պարունակող ստեղծագործության օրինակներ պատրաստելու կամ առեւտրային նպատակով տարածելու համար: Հայաստանի Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը սահմանում է, որ՝

** հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն **ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը,** եթե այս արարքը **խոշոր չափի վնաս է պատճառել**՝ պատժվում է **տուգանքով**՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ **ուղղիչ աշխատանքներով** առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ **ազատազրկմամբ** առավելագույնը երկու տարի ժամկետով:

Խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող

գումարը:

Անօրինական (պիրատական) ստեղծագործության ներմուծումը կանխելու նպատակով պետք է դիմեք տեղական մաքսային մարմիններ: Շատ երկրներ իրականացնում են սահմանային միջոցառումներ, որոնք թույլ են տալիս հեղինակային իրավունքի իրավատերերին եւ լիցենզատուներին պահանջել, որ արգելանք սահմանվի կասկածյալ պիրատական կամ կեղծ ապրանքների նկատմամբ: Հայաստանում սահմանային միջոցառումներ իրականացնող մարմինը Հայաստանի **Մաքսային ծառայությունն է,** որը հիմնադրվել է 1992թ. հունվարին, ինտերնետային հասցեն է. www.customs.am , հեռախոս/Ֆաքս:(+374 1) 538-434; e.mail: info@customs.am:

Հայաստանի մաքսային օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի մեկից: Հայաստանի մաքսային օրենսգրքի 227-233-րդ հոդվածները սահմանում են մաքսային մարմինների կողմից անձանց մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանն օժանդակելու ընթացակարգը: Ըստ Մաքսային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքը **տիրապետողը,** որը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ ՀՀ մաքսային սահմանով կարող են տեղափոխվել իր մտավոր սեփականության **իրավունքները խախտող ապրանքներ,** կարող է վերադաս մաքսային մարմին ներկայացնել դիմում (**կասեցման դիմում)**՝ մտավոր սեփականության օբյեկտի գրանցման եւ ցանկացած մաքսային ռեժիմով այդ ապրանքների բացթողումը կասեցնելու խնդրանքով:

Կասեցման դիմումը պետք է պարունակի՝

- մտավոր սեփականության օբյեկտի մանրամասն նկարագրությունը (հնարավորության դեպքում՝ նաեւ նմուշը), որպեսզի այն ճանաչելի լինի մաքսային մարմինների համար.
- այն ապրանքատեսակների **ցանկը**, որոնք կարող են պարունակել մտավոր սեփականության գրանցվող օբյեկտը.
- հայտատուի պարտավորությունը՝ **հատուցել** ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված մաքսային մարմինների **ծախսերը** (բեռների մանրակրկիտ զննման ծախսերը, պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանման ծախսերը), ինչպես նաեւ ապրանքներ տեղափոխող եւ փոխադրող անձի հնարավոր ծախսերը եւ

վնասները, եթե հետագա-յում, դատական կամ այլ կարգա-վորման արդյունքում չհաստատվի, որ մաքսային սահմանով վերջինիս կողմից ապրանքների տեղափոխումն իրականացվել է հայտատուի մտավոր սեփականության իրավունքի խախտմամբ:

228-րդ հոդվածը կարգավորում է վերադաս մաքսային մարմնում **մտավոր սեփականության օբյեկտի գրանցումը, գրանցամատյանի վարումը եւ կասեցման դիմումի քննարկումը**: Կասեցման դիմումը քննարկվում է **հնգօրյա** ժամկետում եւ այն բավարարելու դեպքում խախտում պարունակող ապրանքները մաքսային մարմինների պահանջով ենթակա են տեղափոխման պատասխանատու պահպանման վայրեր:

229-րդ հոդվածի համաձայն ապրանքների բացթողման կասեցման մասին տեղեկացումն ստանալուց հետո՝ **եռօրյա ժամկետում,** իրավատերը պարտավոր է **գրավով կամ այլ երաշխիքով ապահովել** ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված մաքսային մարմինների ծախսերը, ինչպես նաեւ ապրանքներ տեղափոխող եւ փոխադրող անձի հնարավոր **ծախսերը եւ վնասները հատուցելու իր պարտավորությունը**: Իսկ 230-րդ հոդվածով սահմանվում են ապրանքների բացթողնման կասեցման հետ կապված ծախսերի հատուցման ընթացակարգը:

Ավելի մանրամասն տեղեկություններ համար կարող եք այցելել Հայաստանի մաքսային ծառայության ինտերնետային կայք. www.customs.am, մաքսային օրենսդրություն բաժին:

Ինչպե՞ս կարող եք կարգավորել հեղինակային իրավունքի խախտումները առանց դատարանի

Շատ դեպքերում, խախտումների կարգավորման արդյունավետ միջոց է **արբիտրաժն ու միջնորդ դատարանը**: Արբիտրաժը սովորաբար ավելի կարճ, ավելի էժան եւ քիչ ձեւականություններ պահանջող գործընթաց է, քան դատական հայցերը: Արբիտրաժային փոխհատուցումները միջազգայնորեն ավելի հեշտ կիրառելի են: Արբիտրաժի եւ միջնորդ դատարանի առավելությունն այն է, որ կողմերը կարող են վերահսկել վեճերի լուծման գործընթացը: Որպես այդպիսին, այն կարող է օգնել պահպանելու գործարար լավ հարաբերություններ այն ձեռնարկության հետ, որի հետ հետագայում կցանկանայիք շարունակել համագործակցությունը կամ

նոր լիցենզային հարաբերություններ հաստատել կամ սահմանել փոխադարձ լիցենզային կապեր:

Չափազանց լավ պրակտիկա է լիցենզային պայմանագրերում միջնորդ դատարանի եւ/կամ արբիտրաժի մասին դրույթների ընդգրկումը:

Մանրամասն տեղեկություններիհամար տես ՄՍՀԿ Միջնորդ դատարան եւ Արբիտրաժ ինտենետային կայքը.
arbiter.wipo.int/center/index/html/

ՀԱՎԵԼՎԱԾ I

Օգտակար էլեկտրոնային հասցեներ

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ)՝ www.wipo.int
ՄՍՀԿ փոքր ու միջին ձեռնարկությունների բաժին՝ www.wipo.int/sme/en
ՄՍՀԿ հեղինակային եւ հարակից իրավունքների բաժին՝ www.wipo.int/copyright/en/index.html
ՄՍՀԿ կիրարկման բաժին՝ www.wipo.int/enforcement/en/index.html
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալություն՝ www.aipa.am
Հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն՝ armauthor@yahoo.com

Հրատարակություններ կարող եք գնել ՄՍՀԿ էլեկտրոնային գրախանութից www.wipo/int/ebookshop.
Դրանք են՝
- Ուղեցույց հեղինակային եւ հարակից իրավունքների լիցենզավորման մասին, հրատ. N 897,
- Հեղինակային եւ հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարում, հրատ. N 855;
Անվճար հրատարակություններ ներբեռնելու համար այցելեք՝ www.wipo.int/publications.
Դրանք են՝
- Հեղինակային եւ հարակից իրավունքների ներածություն, հրատ N 909
- Արտիստից ՝ հասարակություն, Ինչպես են ստեղծագործողներն ու սպառողները օգուտ քաղում հեղինակային եւ հարակից իրավունքներից, հեղինակային իրավունքի կոլեկտիվ կառավարում, հրատ. N 922
- Ռեպրոգրաֆիական վերարտադրության իրավունքի կոլեկտիվ կառավարումը, հրատ. N 924

Հեղինակային իրավունքի կառավարման ազգային գրասենյակների տեղեկատու www.wipo.int/news/en/links/addresses/cr/index.htm
Միջազգային ոչ պետական կազմակերպություններ

Մեխանիկական ձայնագրության եվ վերարտադրության իրավունքները կառավարող ընկերությունների միջազգային բյուրո /BIEM- հապավումը ֆրանսերեն անվանումից/ www.biem.org.
Ծրագրային Ապահովման Առեւտրային Ալիանս /BSA/- www.bsa.org
Հեղինակների եւ Կոմպոզիտորների ընկերությունների միջազգային կոնֆեդերացիա (CISAC, հապավումը ֆրանսերեն անվանումից)- www.cisac.org
Ֆիլմ Արտադրողների Ասոցիացիաների Միջազգային Ֆեդերացիա (FIAPF, հապավումը ֆրանսերեն անվանումից) – www.fiapf.org
Վերարտադրության իրավունքի կազմակերպությունների միջազգային ֆեդերացիա (IFRRO)-www.ifrro.org
Հնչյունագրերի ինդուստրիայի միջազգային ֆեդերացիա (IFPI)- www.ifpi.org
Երաժշտական Անկախ Ընկերությունների Ասոցիացիա (IMPALA)- www. impalasite.org
Հրատարակիչների միջազգային ասոցիացիա (IPA)- www.ipa-uie.org
Համակարգչային ծրագրերի եվ Տեղեկատվական ինդուստրիայի Ասոցիացիա (SIIA)- www. siia.net

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հեղինակային իրավունքի ազգային կազմակերպությունների ինտերնետային կայքերի հասցեներ

Ալժիր	www.onda@wissal.dz
Անդորա	www.ompa.ad
Արգենտինա	www2.jus.gov.ar/minjus/ssjyal/autor
Ավստրալիա	www.ag.gov.au
Բարբադոս	www.caipo.gov.bb
Բելոռուս	vkudashov@belpatent.gin.by ncip@belpatent.gin.by
Բելիզա	www.belipo/bz
Բոսնիա-Հերցեգովինա	www.bih.nat.ba/zsmp
Բրազիլիա	www.minc.gov.br
Կանադա	cipo.gc.ca
Չինաստան (Հոնգ-Կոնգ-ՍԱՐ)	www.info.gov.hk/ipd
Կոլումբիա	www.derautor.gov.co
Խորվաթիա	www.dziv.hr
Չեխիայի Հանրապետություն	www.mkcr.cz
Դանիա	www.kum.dk
Էլ Սալվադոր	www.cnr.gob.sv
Ֆինլանդիա	www.minedu.fi
Վրաստան	www.global-erty.net/saqpatenti
Գերմանիա	www.bmj.bund.de
Հունգարիա	www.hpo.hu
Իսլանդիա	www.ministryofeducation.is
Հայաստան	www.aipa.am
Հնդկաստան	copyright.gov.in
Ինդոնեզիա	www.dgip.go.id
Իռլանդիա	www.entemp.ie
Կիրգիզստան /Ղրղզստան/	www.kyrgyzpatent.kg
Լիբանան	www.economy.gov.lb
Լիտվիա	www.muza.lt
Լյուքսեմբուրգ	www.etat.lu/EC

Մալայզիա	mipc.gov.my
Մեքսիկա	www.sep.gob.mx/wb2/sep/sep_459_indautor
Մոնակո	www.european-patent-office.org/patlib/country/monaco/
Մոնղոլիա	www.ipom.mn
Նոր Զելանդիա	www.med.govt.nz
Նիգերիա	www.bnda.ne.wipo.net
Նորվեգիա	www.dep.no/kd/
Պերու	www.indecopi.gob.pe
Ֆիլիպիններ	ipophil.gov.ph
Կորեայի Հանրապետություն	www.mct.go.kr/english
Ռուսաստանի Ֆեդերացիա	www.rupto.ru
Սինգապուր	www.gov.sg/minlaw/ipos, www.ipos.gov.sg/
Սլովակիա	www.culture.gov.sk
Սլովենիա	www.culture.gov.sk
Իսպանիա	www.mcu.es/Propiedad_Intelectual/indice.htm
Շվեյցարիա	www.ige.ch
Թաիլանդ	www.ipthailand.org
Թուրքիա	www.kultur.gov.tr
Ուկրաինա	www.sdip.gov.ua, www.uacrr.kiev.ua
Միացյալ Թագավորություն	www.patent.gov.uk
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	www.loc.gov/copyright

Թարմացված տեղեկատվության համար այցելեք . www.wipo.int/directory

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հեղինակային եւ հարակից իրավունքներին առնչվող միջազգային հիմնական պայմանագրերի համառոտ նկարագիրը.

Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության միջազգային կոնվենցիա (Բեռնի կոնվենցիա),1886թ., 9 սեպտեմբերի (2009թ. դրությամբ անդամակցում են 164 պետություն, Հայաստանը վավերացրել է 2000թ. հոկտեմբերի 19-ին),
Բեռնի կոնվենցիան հեղինակային իրավունքի պահպանության միջազգային հիմնական պայմանագիրն է: Կոնվենցիան հիմնված է երեք հիմնական սկզբունքներին. ազգային մոտեցման (անդամ երկրների տարածքներում հեղինակներն օգտվում են նույն պահպանությունից, ինչ նախատեսված է իրենց քաղաքացիների համար), ինքնաբերաբար պահպանության (պահպանությունը նախատեսվում է առանց որևէ ձևականության պահպանման), պահպանությունն ապահովվում է անկախ մայր երկրում պահպանության առկայությունից, ինչպես նաեւ սահմանում է պահպանության նվազագույն ժամկետ: Անդամակցող պետությունների ցանկը եւ կոնվենցիայի ամբողջական տեքստը հասանելի են www.wipo.int/treaties/en/p/berne/index.html ինտերնետային կայքում:

Կատարողների, հնչյունագրեր արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության միջազգային կոնվենցիա (Հռոմի կոնվենցիա),1961թ. 26 հոկտեմբերի (անդամակցում է 88 պետություն, Հայաստանը վավերացրել է 2003թ. հունվարի 31-ին)

Հռոմի կոնվենցիան ապահովում է հարակից իրավունքների պահպանությունը. կատարողներն օգտվում են իրենց կատարումների նկատմամբ իրավունքներից, հնչյունագրեր արտադրողներն՝ իրենց արտադրած հնչյունագրերի նկատմամբ իրավունքներից, ռադիո եւ հեռուստատեսային կազմակերպություններն՝ իրենց հաղորդումների նկատմամբ իրավունքներից: Անդամակցող երկրների ցանկին եւ կոնվենցիայի ամբողջական տեքստին ծանոթանալու համար այցելեք www.wipo.int/treaties/en/p/rome/index.html ինտերնետային կայք:

Կոնվենցիա հնչյունագրեր արտադրողներին իրենց հնչյունագրերի չթույլատրված պատճենումից պաշտպանելու մասին (Ժնեւի Հնչյունագրերի կոնվենցիա),1971թ., 29 հոկտեմբերի
(Անդամակցում է 77 պետություն, Հայաստանը վավերացրել է 2003թ. հունվարի 31-ին)

Հնչյունագրերի կոնվենցիան նախատեսում է, որ անդամակցող երկրները պարտավորվում են պաշտպանել հնչյունագիր արտադրող պրոդյուսերին, որն անդամակցող որեւէ երկրի քաղաքացի է, իր արտադրած հնչյունագրի առանց իր թույլտվության կրկնօրինակների պատրաստումից, այդպիսի կրկնօրինակների ներմուծումից, եթե այդ կրկնօրինակումը կամ ներմուծումը նախատեսված է հանրության շրջանում տարածելու նպատակով, ինչպես նաեւ կրկնօրինակված օրինակները հանրության շրջանում տարածումից:

«Հնչյունագիր» նշանակում է ամրագրում բացառապես ունկնդրելու նպատակով, (այսինքն այն չի կարող ընդգրկել օրինակ ձայնագրություն ֆիլմից կամ տեսաերիզից), անկախ դրա ձեւից (սկավառակ, ժապավեն կամ այլ). Անդամակցող երկրների ցանկին եւ կոնվենցիայի ամբողջական տեքստին ծանոթանալու համար այցելեք
www.wipo.int/treaties/en/ip/phonograms/index.html ինտերնետային կայք:

Մտավոր սեփականության իրավունքների առեւտրի ասպեկտների վերաբերյալ համաձայնագիր (ապրիլ, 1994թ., Հայաստանը անդամ է 2003 թվականից)

Միջազգային առեւտրի գործընթացը մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ եւ համապատասխան պահպանությանը ներդաշնակ իրականացնելու նպատակով մշակվեց TRIPS Համաձայնագիրը՝ մտավոր սեփականության իրավունքերի ձեռքբերմանը, ոլորտին եւ օգտագործմանը առնչվող հատուկ չափանիշներ ու սկզբունքներ ապահովելու նպատակով: Միաժամանակ Համաձայնագիրը նախատեսում է այդ իրավունքների ***կիրարկման*** միջոցներ:
TRIPS Համաձայնագիրը պարտադիր է Առեւտրի Համաշխարհային Կազմակերպության 149 անդամ-պետությունների համար:

Համաձայնագրի տեքստը կարելի է կարդալ Առեւտրի Համաշխարհային Կազմակերպության ինտերնետային կայքում:
http:/www.wto.org./english/docs_e/legal_e/27-trips.doc:
Հայաստանը Առեւտրի Համաշխարհային Կազմակերպության անդամ է 2003 թվականից:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) հեղինակային իրավունքի մասին պայմանագիրը (ՀԻՊ) եւ Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիրը (ԿՀՄՊ), 1996, (Հայաստանը անդամակցում է ՄՍՀԿ ինտերնետային պայմանագրերին 2005թ. մարտից)

ՄՍՀԿ Հեղինակային իրավունքի պայմանագիրը ու ՄՍՀԿ Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիրը կնքվել են 1996 թվականին: Այդ պայմանագրերի նպատակն է կարգավորել հեղինակների, կատարողների ու հնչյունագրեր արտադրողների իրավունքների պահպանության այն խնդիրները, որոնց առաջացումը պայմանավորված էր թվային դարաշրջանի գալուստով: Հեղինակային իրավունքի պայմանագիրը լրացնում է Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիան՝ վերափոխելով դրա դրույթները Տեղեկատվական Հասարակարգի պահանջներին համապատասխան: Սա նշանակում է, որ Բեռնի կոնվենցիայի բոլոր դրույթները համապատասխանաբար կիրառելի են թվային միջավայրում: Դա նաեւ նշանակում է, որ ՀԻՊ անդամ պետությունները պետք է ընդունեն Բեռնի կոնվենցիայի դրույթները, անկախ նրանից, կոնվենցիայի անդամ են, թե՝ ոչ: ՀԻՊ-ը հեղինակների համար նախատեսում է երեք բացառիկ իրավունք իրենց ստեղծագործությունների նկատմամբ, այն է՝

- թույլատրել կամ արգելել ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների տարածումը վաճառքի կամ այլ միջոցներով (տարածման իրավունք),
- թույլատրել կամ արգելել համակարգչային ծրագրերի, կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների (եթե այդպիսի առեւտրային վարձույթը հանգեցրել է այդ ստեղծագործությունների լայնատարած պատճենմանը, նյութական վնաս պատճառելով վերարտադրության բացառիկ

իրավունքին) կամ հնչյունագրում ընդգրկված ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների առեւտրային վարձույթը (վարձույթով տալու իրավունք),

- թույլատրել կամ արգելել ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների հաղորդումը հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, ներառյալ դրանց մատչելի դարձնելը հանրության անդամներին այնպես, որ դրանք հասանելի լինեն նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում եւ ցանկացած պահին (հանրությանը հաղորդման իրավունք):

ՀԻՊ-ը ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 6-ին, ներկայումս անդամ երկրները 70-ն են (տես http://www.wipo.int/treaties/en/ip/wct/index.html ինտերնետային կայքը):

Ի տարբերություն ՀԻՊ-ի, Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիրը վերաբերում է հարակից իրավատերերին եւ նպատակ ունի միջազգային չափանիշներին ներդաշնակեցնել տեղեկատվական հասարակարգում կատարողների ու հնչյունագրեր արտադրողների իրավունքների պահպանությունը: Այս պայմանագիրը չի տարածվում տեսալսողական կատարումների վրա: ԿՀՊ-ն հիմնականում պահպանում է կատարողների (դերասան, երաժիշտ, երգիչ եւ այլ) տնտեսական շահերն ու անձնական ոչ գույքային իրավունքները իրենց կատարումների նկատմամբ, անկախ դրանց հնչյունագրում ամրագրված լինելուց:

Պայմանագիրը վերաբերում է նաեւ այն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, ում նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվել է կատարման ամրագրումը: Պայմանագիրը իրավատերերի համար նախատեսում է հետեւյալ բացառիկ իրավունքները.

- թույլատրել կամ արգելել հնչյունագրի ուղղակի կամ անուղղակի վերարտադրությունը (վերարտադրության իրավունք),
- թույլատրել կամ արգելել հնչյունագրի բնօրինակի կամ օրինակների մատչելի դարձնելը հանրությանը վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցներով (տարածման իրավունք),
- թույլատրել կամ արգելել հնչյունագրի բնօրինակի կամ օրինակների առեւտրային վարձույթը (վարձույթով տալու իրավունք),.
- թույլատրել կամ արգելել հնչյունագրում ամրագրված որեւէ կատար-

ման մատչելի դարձնելը հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի այնպես, որ ամրագրված կատարումները հասանելի լինեն հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում եւ ցանկացած պահին, օրինակ՝ ըստ-պահանջի (on demand) ծառայությունները (հանրությանը մատչելի դարձնելու իրավունք):

Կատարումների եւ հնչյունագրերի մասին պայմանագիրը բացառիկ իրավունք է տալիս կատարողներին թույլատրել իրենց կենդանի կատարումների՝ (որոնք ամրագրված չեն հնչյունագրում)

- հանրությանը հեռարձակումը,
- հանրությանը հաղորդումը,
- ամրագրումը (միայն հնչյունի):

ՄՍՀԿ Կատարումների ու հնչյունագրերի պայմանագիրը ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 20-ից, անդամ երկրները 2009 թվականի դրությամբ 68-ն են:
Տես http://www.wipo.int/treaties/en/ip/wppt/index.html ինտերնետային կայքը:

Համակարգչային հանցագործությունների մասին Կոնվենցիա, (ընդունվել 2001թ. նոյեմբերի 23-ին, Բուդապեշտում, անդամ երկրները 43-ն են,

Հայաստանը վավերացրել է 2006թ., ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարից):

Մշակվել է Եվրախորհրդի կողմից, սահմանում է ընդհանուր քրեական քաղաքականություն՝ նպատակ ունենալով պաշտպանել հասարակությունը կիբեռհանցագործություններից: Սա ինտերնետի եւ համակարգչային այլ ցանցերի միջոցով կատարվող հանցագործությունների մասին առաջին միջազգային պայմանագիրն է, որը վերաբերում է մասնավորապես հեղինակային իրավունքի խախտումներին, համակարգչային ցանցի միջոցով կատարվող խարդախություններին ու կեղծիքներին, մանկական պոռնոգրաֆիային, ցանցային անվտանգության խախտումներին:

Կոնվենցիան պահանջում է մասնակից պետություններից միջազգային համագործակցություն եւ համախմբվածություն՝ ինտերնետի եւ համակարգչային այլ ցանցերի միջոցով կատարվող հանցագործությունների կանխման եւ դրանց դեմ պայքարում, ինչպես նաեւ համակարգչային հանցագործությունների կանխմանն ուղղված օրենքների մշակում/ընդունում: Կոնվենցիայի ամբողջական տեքստին կարող եք ծանոթանալ conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/185.htm ինտերնետային կայքում:

Հեղինակային իրավունքի դիրեկտիվ, 2001թ.

Եվրոպական Համայնքի Տեղեկատվական հասարակարգում (թվային միջավայրում) հեղինակային եւ հարակից իրավունքների որոշ ասպեկտների ներդաշնակեցման մասին 2001թ. մայիսի 22-ի 2001/29/EC դիրեկտիվը ներդաշնակեցնում է հեղինակային եւ հարակից իրավունքները՝ կարեւոր ոլորտների, հիմնականում Ինտերնետի, էլեկտրոնային առեւտրի եւ ընդհանուր առմամբ թվային տեխնոլոգիաների խնդիրները դիմագրավելու նպատակով: Այն նախատեսում է նաեւ այդ իրավունքների բացառություններ ու սահմանափակումներ, ինչպես նաեւ իրավունքների կառավարման էլեկտրոնային տեղեկատվության եւ տեխնոլոգիական միջոցների օրինական պաշտպանություն:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ» ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹ

1.Ազգանուն Անուն Հայրանուն

_____

2. Կեղծանուն

_____

3. Ծննդյան օրը, ամիսը, թիվը

_____

4. Ազգությունը

_____

5. Կրթությունը

_____

6. Անձնագրի տվյալները

_____

7. Մշտական բնակավայրը /հասցե, հեռախոսներ /

_____

_____

8. Քաղաքը, շրջանը, խնայբանկի հաշվի համարը, խնայբանկում անձնական հաշվի-համարը, որտեղ պետք է փոխանցվի հոնորարը

_____

Խնդրում եմ ի սպահ վերցնել իմ ստեղծագործությունները

Ստեղծագործության անվանումը	Գրված է միահանձնյա թե համահեղինակությամբ/ համահեղինակի ԱԱՀ

« ___ » _____2009թ.

_____

ստորագրություն

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
Հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ

"ARMAUTHOR"authors' rights defence ngo

"АРМАВТОР" ОО защиты прав авторов

ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

Սույն գրությունը հավաստում է, որ ՀՀ Հեղինակների իրավունքների պաշտպանութ-յան «Հայհեղինակ» կազմակերպությունում ի պահ է հանձնված ստորև նշված հարակից իրավունքների օբյեկտը: Ի պահ հանձնված հարակից իրավունքների օբյեկտի վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են «ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»-ի տվյալների բազայում:

Օբյեկտի անվանումը

Հակիրճ նկարագրություն –

Հարակից իրավունքների իրավատեր –

Հասցե -

Հեռ -

Անձնագիր-

Հեղինակներ՝

Իրավատերը հավաստում է, որ ինքը հանդիսանում է վերոնշյալ /օբյեկտի/ նկատմամբ հարակից իրավունքների իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկու-թյունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց հարակից իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով /հիմք՝«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ.65-69/:

Ի պահ հանձնման համարը –
Օրը, ամիսը, տարեթիվը –

ՏՆՕՐԵՆ

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
Հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ

'ARMAUTHOR"authors' rights defence ngo

"ԱՐՄԱՎՏՈՐ" ՕՕ защиты прав авторов

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ
Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

Սույն գրությունը հավաստում է, որ ՀՀ Հեղինակների իրավունքների պաշտպանության «Հայհեղինակ» կազմակերպությունում ի պահ է հանձնված ստորև նշված ստեղծագործությունը (հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օր., 3-րդ հոդված): Ի պահ հանձնված ստեղծագործության վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են «Հայհեղինակ»-ի տվյալների բազայում:

Ստեղծագործության անվանումը –

Հակիրճ նկարագրությունը -

Հեղինակների ԱԱՀ –

Հասցե -

Հեռ -

Անձնագիր-

Հեղինակը հավաստում է, որ ինքը հանդիսանում է նշված ստեղծագործության հեղինակը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց հեղինակային իրավունքներն իր կողմից չեն խախտվել:
Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով /հիմք՝«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ. 65-69/:

Ի պահ հանձնման համարը –
Օրը, ամիսը, տարեթիվը -

ՏՆՕՐԵՆ

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝

World Intellectual Property Organization

Address:
34, chemin des Colombettes
P.O. Box 18
CH-1211 Geneva 20
Switzerland

Telephone: +41 22 338 91 11

Fax: +41 22 733 54 28

e-mail: wipo.mail@wipo.int

Սույն հրատարակությունը կարող եք ձեռք բերել
«Հայհեղինակ» ՀԿ-ից՝
հեռ/ֆաքս: 3741 529 492
e-mail: armauthor@yahoo.com

Customization and printing of this material was financed under the WIPO United States Patent and Trademark Office (USPTO) Funds in Trust

Սույն հրատարակության «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցումն ու հայերեն թարգմանությունը իրականացվել է Միացյալ Նահանգների ՄՍՀԿ Արտոնագրային ու Ապրանքային նշանների Գրասենյակի հիմնադրամի միջոցներով:

«Մտավոր սեփականությունը բիզնեսի համար» շարքից հրատարակություններ

Նշանի պատրաստում. Ընդհանուր գիտելիքներ ապրանքային նշանի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՄՀԿ հրատարակություն, թիվ 900

Գեղեցիկ երեւալ. Ընդհանուր գիտելիքներ արդյունաբերական նմուշի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՄՀԿ հրատարակություն, թիվ 498

Կերտել ապագան. Ընդհանուր գիտելիքներ արտոնագրերի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՄՀԿ հրատարակություն, թիվ 917

Ստեղծագործական արտահայտություններ. Ընդհանուր գիտելիքներ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՄՀԿ հրատարակություն, թիվ 918

Բոլոր հրատարակությունները մատչելի են ՄՄՀԿ էլեկտրոնային գրախանութից. www.wipo.int/ebookshop

Հրատարակությունների էլեկտրոնային տարբերակները կարող եք ձեռք բերել ՄՄՀԿ Փոքր ու միջին ձեռնարկությունների բաժնի ինտերնետային կայքից www.wipo.int/sme/en:

Կարող եք ձեռք բերել նաեւ ՄՄՀԿ Փոքր ու միջին ձեռնարկությունների բաժնի ամեն ամիս հրատարակվող անվճար էլեկտրոնային թերթը, որը ձեզ կտեղեկացնի ոլորտի կարեւոր իրադարձությունների մասին:
Ինտերնետային կայքի հասցեն է՝
www.wipo.int/sme/en/documents/wipo_sme_newsletter.html